[16] См.: *Тероенц О.* Обновление языка// «Еревак», Константинополь, 1864. с. 132–134 (на арм. яз.).

[17] *Тероенц О.* Общая теория национальности // «Еревак», Константинополь, 1864, № 35, с. 275 (на арм. яз.).

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԵՐԽՆԴԻՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐՈՅԵՆՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ)

Ռիմա Միրումյան

Ամփոփում

Հոդվածը նվիրված է XIX դարի արևմտահայ փիլիսոփայական մտքի պահպանողական ուղղության պարագլուխ՝ հայ ականավոր կրոնական մտածող Հովհաննես Տերոյենցի պատմափիլիսոփայական հայեցակարգում առկա ազգային լուսավորության (գիտության և դաստիարակության) հիմնախնդրին:

Ազգային լուսավորության հիմնախնդիրը Հ. Տերոյենցի ազգի հայեցակարգի կիզակետն է, որում կենտրոնանում են նրա բոլոր դատողությունները ազգի գոյության (կեցության) մասին: Ազգի կրթադաստիարակչական համակարգը մտածողը բնութագրում է որպես Գրիգոր Լուսավորչի և Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծված, Հայ Առաքելական եկեղեցու բազմադարյա նպատակամետ գործունեության շնորհիվ պահպանված և սերունդներին փոխանցորդած կարևորագույն մի համակարգ, որի միջոցով է միայն հնարավոր հայ ազգի ներկայացուցիչներին ներգրել ազգային-մշակութային հարուստ ավանդույթի մեջ: Դրան համապատասխան սերնդի հոգեբարոյական նկարագրի ձևավորման ու պահպանման, հայի կենսագործունեության տարածության մեջ մշակութային միասեռության ձեռքբերման կարևորագույն միջոցը նա համարում է Ազգային Դպրոցը: Հենց ազգային մշակույթն է, ըստ նրա, ազգի անկախ (քաղաքական) գոյության նախապայմանը:

Ժողովրդի հոգեբարոյական նկարագրի ձևավորման համար անհրաժեշտ է կրթության և դաստիարակության, գիտության ու բարոյական փիլիսոփայության, հատկապես կրոնա-բարոյական ուսմունքի համադրումը կրոնական բարձրագույն իմաստների շեշտադրմամբ: Ուստի, ազգային լուսավորության նպատակների և խնդիրների իրականացման հիմնական գործոններն են՝ հայ ժողովրդի պատմությունն ու հայոց լեզուն, Հայ Առաքելական եկեղեցու վարդապետությունը:

NATIONAL EDUCATION AS THE MOST IMPORTANT TASK OF THE NATIONAL IDEOLOGY IN HOVHANNES TEROENTS'S POLITICAL PHILOSOPHY (methodological aspects)

Rimma Mirumian

Summary

The article deals with the problem of national education in the philosophical and historical concept of the prominent Armenian religious thinker Hovhannes Teroents who is the leader of the conservative direction of the Western Armenian philosophical thought of the XIX century.

The problem of the national education (education and upbringing) is the cornerstone of Hovhannes Teroents's concept of nation, in which all his thoughts are focused on the existence (being) of the nation in his era and its historical perspective. He characterizes educational system of the nation as created by Mesrop Mashtots and Gregory the Illuminator, preserved thanks to centuries-old purposeful activity of the Armenian Apostolic Church and as the most important system transferred to many generations inscribing representatives of Armenian nation into a rich national and cultural tradition. In accordance with this essential tool for developing and maintaining the spiritual ethos of the thinker's generation, and through this, the achievement of cultural homogeneity in the space of Armenian's life for Teroents is the National School. It is through culture (national culture), according to him, that the spiritual and moral identity of the nation is provided as a precondition of its independent (political) existence.

The main ideological setting of the Armenian thinker is the following: for the formation of spiritually developed and highly moral people, a combination of education and upbringing, science and moral philosophy, and especially Christian moral teaching is required, with the emphasis on religious meanings. Accordingly, the main levers that contribute to the goals and objectives of the National Education, the Armenian religious thinker considers the history and doctrine of the Armenian Apostolic Church, the history of the Armenian nation and Armenian language.

ՀԱՎԱՏԻ ԵՎ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔՈՒՄ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

Հովհան Որոտնեցին (1315–1388թթ.) միջնադարյան հայ նշանավոր փիլիսոփա, մանկավարժ, հոգևոր գործիչ է, որը թողել է հարուստ գրական ժառանգություն: Որոտնեցու հեղինակած աշխատությունները գերազանցապես իմաստասիրական-տրամաբանական երկերի (Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին», Պորփյուրի «Ներածություն») և Աստվածաշնչից քաղված բնաբանների («Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» (Սաղ. ԼԲ.15), «Ի սկզբանէ էր Բանն էր, և Բանն էր առ Աստուած» (Հովհ. Ա.1), «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են» (Պողոսի առաքելոյ թուղթ առ եբրայեցիս Ա. 10) և այլն) մեկնություններ են՝ գրի առնված նրա աշակերտների, հիմնականում Գրիգոր Տաթևացու կողմից:

Հավատ և բանականություն՝ ահա այն երկու հիմնասյուները, որոնց վրա խարսխված է Հովհան Որոտնեցու աշխարհայացքը: Ընդ որում, դժվար է միանշանակ պնդել, թե հավատի և բանականության «ճշմարտություններից» որին է նախապատվություն տալիս միջնադարի հայ մտածողը: Նրա աշխարհընկալման մեջ բանականության և հավատի «ճշմարտությունները» ոչ միայն և ոչ այնքան «խաղաղ համագոյակցում են», այլև որոշակիորեն «համագործակցում են» միմյանց հետ: Ընդ որում, եթե իմաստասիրական-տրամաբանական դրույթները գործուն կիրառություն են ստանում կրոնա-աստվածաբանական նյութի հիմնավորման ընթացքում, ապա կրոնա-աստվածաբանական նյութը, իր հերթին, անալոգիա և լուսաբանող օրինակ է հանդիսանում իմաստասիրական շատ հիմնադրույթների փաստարկման համար՝ միաժամանակ իր «ճշգրտումները» մտցնելով դրանց մեջ: Որոտնեցու աշխարհայացքում դրսևորվող այս յուրատիպ «դաշինքի» շնորհիվ իմաստասիրությունը «զինում է» աստվածաբանությանը բանականության զորեղ զենքով, իսկ աստվածաբանությունը՝ հավատի պայծառ լույսով «լուսավորում», «մաքրագործում է» փիլիսոփայական հիմնադրույթները: Ինքը՝ Հովհան Որոտնեցին, տրամաբանության զորեղ զենքի կիրառումը աստվածաբանական խնդիրներ քննելիս համարում է ոչ միայն թույլատրելի, այլև անհրաժեշտ. «Պարտավոր ենք նախ բանական արվեստով նախակրթել՝ աստվածաբանական խորհուրդների իմացության համար»[1]:

Միջնադարյան հայ մտածողի պատկերացմամբ՝ եթե բանականությունն աստվածաշնչյան խորախորհուրդ ճշմարտություններին հասու լինելու միջոց, եղանակ է, ապա հավատը ցանկացած իմացության, իմաստասիրության նախապայմանն է: Ինչպես մարդու աչքերը, ունենալով բնական լույս, կարող են տեսնել շրջապատը և տարբերել գույները միայն արեգակի լույսի օգնությամբ, այնպես էլ Որոտնեցու պատկերավոր համեմատությամբ՝ «միտքը, բնականից [ունենալով] հայեցողական լույս, իր ստեղծումից ի վեր օժանդակվում է Աստծու լույսով և դրանով է դատում ու ընտրում իմացության [ենթակա] բոլոր գոյացությունները»[2]:

Ճշմարտությունը բացահայտելու, «դատելու և ընտրելու» գործընթացում Որոտնեցին չի ընդունում անառարկելի հեղինակություններ և անհերքելի կարծիքներ, և նրա այս քննադատական մոտեցումը վերաբերում է ինչպես «արտաքին» (իմաստասիրական),

այնպես էլ «ներքին» (կրոնա-աստվածաբանական) ուսմունքներին: Ահա թե ինչպես է հիմնավորում իր սկզբունքային դիրքորոշումը Հովհան Որոտնեցին. «Աստվածաշունչ Գիրքը ընդգրկուն իմաստ ունի և տարածվում է բազմաթիվ [գույների] վրա, և վարդապետի մեկնաբանությունը [կարող է] սպառվել, իսկ Աստվածաշնչի մտքերն ու գրերն անսպառ են: Եվ որ վարդապետների գիտելիքը կարող է սպառվել և սխալ լինել, հայտնի է հետևյալից... »[3]: Դիմելով Արիստոտելի տրամաբանական ուսմունքի օգնությանը՝ Որոտնեցին ցույց է տալիս, որ ճիշտ այնպես, ինչպես Ստագիրացին տարբերակում է ճշմարտության տարբեր աստիճան ունեցող մտահանգման հինգ եղանակներ, նույն սկզբունքով կարելի է դասակարգել եկեղեցական վարդապետությունները: Ըստ Արիստոտելի, «ապացուցական» մտահանգումը լիովին ճշմարիտ է, այնինչ «քերթողականը» լիովին կեղծ է, «ճարտասանական»-ում ճշմարիտը և կեղծը հավասարակշռում են միմյանց, «տրամաբանական»-ում գերակշռում է ճշմարիտը, ի տարբերություն «մասնական»-ի, որում գերակշռում է կեղծը: Ըստ այդմ, Որոտնեցու կարծիքով, եկեղեցական վարդապետությունները ևս լինում են «ամենևին ճշմարիտ», «առավել ճշմարիտ, քան սուտ», «հավասարապես ճշմարիտ և սուտ», «առավել սուտ, քան ճշմարիտ» և «ամենևին սուտ»: Ի վերջո, Որոտնեցին հանգում է այն հետևության, որ «Մեզ անհրաժեշտ է ընտրություն կատարել. և [այն], որ ընթանում է Աստվածաշնչի ճանապարհով՝ ընդունել, իսկ [այն], որ Աստվածաշնչի ճանապարհից դուրս է՝ չընդունել, եթե նույնիսկ ասողը հայտնի մեկը լինի, քանի որ Արիստոտելն ասում է, որ սիրելի է այրը (խոսքը Պլատոնի մասին է – Ա. Մ.) և սիրելի է ճշմարտությունը, բայց երկու սիրելիներից հատկապես սիրելի է ճշմարտությունը»[4]:

Որոտնեցու եզրակացությունը կարծես թե միանշանակ է. որևէ դրույթ ճշմարիտ է համարվում, եթե այն համապատասխանում է Աստվածաշնչին, և սխալ՝ վերջինիս չհամապատասխանելու դեպքում: Սակայն այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարեվորագույն հանգամանք. նախ՝ որևէ դրույթի Աստվածաշնչին համապատասխան լինելու կամ չլինելու գերխնդիրը լուծելու («ընտրություն կատարելու») իրավասությունը վերապահվում է բանականությանը, և երկրորդ՝ Որոտնեցին գտնում է, որ բուն աստվածաշնչյան դրույթները ճշմարտությունն արտահայտում են տարբեր եղանակներով՝ բացահայտ կամ թաքնված ձևերով: Եվ, բնականաբար, կարիք չկա փորփրել և խորին խորհուրդ ու թաքնված իմաստ փնտրել այն դեպքերում, երբ ճշմարտությունը «մակերեսին է», այսինքն՝ ասված է բացահայտ ձևով, բառացիորեն: Այնինչ հակառակ դեպքում, այսինքն՝ երբ ճշմարտությունն արտահայտված է այլաբանորեն, թաքնված ձևով, անհրաժեշտ է պեղել և ի հայտ բերել այն: Որոտնեցու պատկերավոր համեմատությամբ՝ «Կա՛ն ջրհորներ, որոնց ջուրը մակերեսին է, և կա՛ն [ջրհորներ]՝, որոնց [ջուրը] խոր է: Իսկ [այն ջրհորները], որոնք մակերեսային են, խոր փորելը հիմարություն է, և [այն ջրհորները], որոնց [ջուրը] խոր է՝ երես փորել և դադարել՝ անմտություն է: Այսպէս և Աստուածաշունչ Գրերը՝ կա՛ն, որոնց իմացությունը մոտ է, և կա՛ն, [որոնց իմացությունը] խոր է. ցանկացած խնդիր հարկավոր է քննել իրեն պատշաճ [խորությամբ]՝ ըստ այնմ, թե «Կթիր կաթն ու կստացվի կարագ, իսկ թե ավելի ճզմես՝ կլինի արյուն» [Առակ. Լ. 33]»[5]:

Տեսական կարևորագույն հիմնախնդիրների որոտնեցիական լուծումներում բանականության և հավատի «ճշմարտությունները» խաչաձևվում, համադրվում են ամենաբազմազան եղանակներով, լրացնում և ամբողջացնում են միմյանց:

Այսպես, համաձայն քրիստոնեական աշխարհընկալման կարևորագույն սկզբունքներից մեկի՝ աշխարհն Աստծո արարչագործության արդյունքն է. Աստված ստեղծել է աշխարհը ոչնչից: Մյուս կողմից, «արտաքին» փիլիսոփաները միաձայն պնդում են, որ ոչնչից ոչինչ չի առաջանում: Հավատի և բանականության այս ելակետային դրույթների հակասականության ինչպիսի՞ լուծում է առաջադրում Որոտնեցին:

Միջնադարյան հայ մտածողը կարծում է, որ աշխարհը, հիրավի, Աստծո արարչագործության արդյունքն է, իսկ «ստեղծելն է ոչնչից ինչ-որ բանի արարումը»: Իբրև անչափելի և անսահման հզորությամբ օժտված էություն՝ միայն Աստված է ի զորու հաղթահարել «ոչնչի» և «իրի» միջև ընկած «անսահման և անվախճան հեռավորությունը» և «ոչինչը հասցնել-[դարձնել] իր», այսինքն՝ արարել աշխարհը: Գերազանցելով բնության և մարդկային ստեղծագործությունները՝ Աստված ինքն «է ստեղծում հիմքը և տալիս նրան արհեստական ձև և գոյացական տեսակ»[6]: Ընդ որում, եթե խոսքը վերաբերում է զգայական, մասնավոր իրերին և երևույթներին, Որոտնեցին լիովին համաձայն է «արտաքին» իմաստասերների այն տեսակետին, որ անհնարին է ոչնչից որևէ բանի առաջացումը՝ ոչնչից ոչինչ չի առաջանում: Սակայն այս սկզբունքը, Որոտնեցու կարծիքով, չի գործում «ընդհանուր առաջագայության» դեպքում: Ոչնչից ինչ-որ բանի ստեղծումը մերժող փիլիսոփաների մոլորությունն այն է, որ նրանք չեն տարբերում «առաջագայության» երկու տիպերը. մեկը, երբ որևէ մասնավոր իր առաջ է գալիս մեկ այլ մասնավոր իրից, ինչպես, օրինակ, կրակը ծնվում է մեկ այլ մասնավոր պատճառից և, երկրորդը, երբ «ընդհանուր էակն է առաջ գալիս ընդհանուր պատճառից, այսինքն՝ Աստծուց»:

Այսպիսով, չկա ոչինչ հավետակից Աստծուն, և Աստծուց՝ որպես ընդհանուր պատճառից, առաջացել է ընդհանուրը կամ «հասարակական նյութը»: Այս վերջինս, չունենալով տեսակ, տարածվում է բազմաթիվ տեսակների վրա, անմարմին է և գոյություն ունի միայն որպես հնարավորություն: Դրա հետ միասին ստեղծվել են նաև չորս որակները (կամ «գոյացական տեսակները»)՝ չորության, խոնավության, սառնության և տաքության հատկությունները: Արարչագործության հետագա ընթացքը Հովհան Որոտնեցին պատկերացնում է այսպես. «Իսկ որ ջերմությանն է հպվում նյութը՝ առաջանում է կրակը, իսկ որ ցրտությանն է [հպվում նյութը]՝ առաջանում է ջուրը, և որ չորությանը՝ հողը, և որ խոնավությանը՝ օդը: Այսպես չորս տարրերը կազմավորվում են նյութից ու տեսակից… Եվ սրանց խառնումից առաջանում են այլ էակները»[7]:

«Ոչինչ» և «արարչագործություն» հասկացությունների յուրովի մեկնաբանության միջոցով Որոտնեցին փորձում է ոչ միայն չչրջանցել առողջ բանականության «ոչնչից ոչինչ չի առաջանում» սկզբունքը, այլ նաև պահպանել «Ամեն ինչ կազմված է նյութից ու տեսակից» արիստոտելյան փիլիսոփայական հիմնադրույթը՝ նյութը հասկանալով որպես «ընդհանուր նախասկիզբ», տեսակը՝ որպես չորս «գոյակցական տեսակներ» (ջերմություն, ցրտություն, չորություն և խոնավություն):

Այսպիսով, ոչնչից աստվածային աշխարհաստեղծման քրիստոնեական հիմնադրույթը Որոտնեցու կողմից ստանում է այնպիսի տեսական հիմնավորում և մեկնաբանություն, որ այն ընդունելի լինի ոչ միայն հավատի, այլ նաև բանականության համար:

Որպես միջնադարյան աստվածաբան՝ Որոտնեցին իր աշխատություններում բազմիցս անդրադարձել է Աստծո գաղափարին: Կիրառելով «ժխտական» աստվածաբանության մեթոդը՝ Որոտնեցին Աստծուն նախևառաջ բնութագրում է որպես անեղ, անհաս, անորակ, անքանակ, անուր, աներբ, անսկիզբ և այլն: Որոտնեցին Աստծուն բնութագրում է նաև որպես «գերագույն գոյ, գոյերից վեհագույն գոյ» և այլ գերադրական բնութագրիչներով՝ ամենակարող, ամենակալ, ամենազոր, ամենաիմաստուն, ամենաբարի և այլն: Որոտնեցին լիովին գիտակցում է, որ Աստծո նկատմամբ առավել կիրառելի են ժխտական, քան բուն աստվածային էությունը արտահայտող բնութագրիչները. «Աստծուն առավել ստորոգվում է անեղությունը, քան՝ էությունը»: Եվ, այնուամենայնիվ, շեղվելով ընդունված ավանդույթից, նա փորձում է Աստծո նկատմամբ կիրառել արիստոտելյան տրամաբանության որոշ կատեգորիաներ: «Արիստոտելը ողջ գոյություն ունեցողը բաժանում է տասի՝ մակագրելով կատեգորիաներ, բայց Օլիմպիոդորոս փիլիսոփան[8] չորսն է միայն

համարում պարզ կատեգորիաներ, իսկ մնացած վեցը համարում է կապով գոյացածներ, – գրում է Որոտնեցին և շարունակում, – դրանցից գոյացութիւնն է միայն ասվում Աստծո մասին, իսկ մնացածը՝ որակը և քանակը՝ ո՛չ, քանի որ Աստված անորակ և անքանակ է»[9]: Այնուամենայնիվ, կարծում է Որոտնեցին, երկրավորների նման, ինչ-որ եղանակով կարելի է նաև Աստծուն բնութագրել ըստ պարզ կատեգորիաների: Հիմք ընդունելով, որ գոյացությունը նույնության պատճառ է, որակությունը՝ նմանության, իսկ քանակությունը՝ հավասարության, Հովհան Որոտնեցին եզրակացնում է. «Աստվածային անձերը ըստ գոյացության ունեն նույնություն հավիտենական բնության, կատարյալ կարողություն՝ ըստ նմանության, մեծություն՝ ըստ հավասարության»[10]: Այնուհետև նա լրացուցիչ ճշգրտումներ է մտցնում Աստծո քանակական բնութագրի մեջ, հավելելով, որ ինչպես ստեղծվածներին հատուկ է մեծության երեք եղանակ՝ ըստ ժամանակի, ըստ չափի և ըստ կարողության, դրանց համապատասխան աստվածային անձերն էլ ունեն երեք հավասարություն՝ անփոփոխ գոյության հավիտենականություն, անչափելի մեծություն և կատարյալ կարողություն: Հարաբերության կատեգորիան, ըստ Որոտնեցու, վերաբերում է Սուրբ Երրորդությանը՝ որպես Հայր և Որդի, Բխող և Բխյալ: Այս կատեգորիային բնորոշ է միաժամանակյա գոյության հատկությունը և, ըստ այդմ, Եռյակ անձերն ունեն միաժամանակյա գոյություն՝ ըստ էության, ըստ մեծության և ըստ կարողության:

Հիրավի, Որոտնեցու աստվածաբանությունը հնարավորինս տրամաբանականացված է և նրա ռացիոնալիզմը թափանցում է ավանդաբար բանական քննության ենթակա չհամարվող քրիստոնեական այնպիսի դոգմաների ոլորտը, ինչպիսիք են աստվածային արարչագործության և Աստծո Եռյակ միասնության հիմնադրույթները:

Այս ենթախորքում լիովին հասկանալի է Հովհան Որոտնեցու «Բոլոր դեպքերում անհրաժեշտ է իր [ստեղծած] արվեստից ճանաչել արվեստագետին» կարգախոսը, որով առաջնորդվելով նա առաջադրում է Աստծո գոյության վեց փաստարկ:

Համաձայն առաջին («հակառակների միաբանության») փաստարկի՝ քանի որ հակադիր հատկություններով օժտված տարրերը, գտնվելով պայքարի և անհաշտության մեջ, այնուամենայնիվ, գալիս են միասնության և հաշտեցման, ապա «հակադրությունների միաբանությունից ակնհայտ է, որ կա՛ դրանք կարգավորողն ու կապողը, և նա Աստվածն է՛»[11]:

Ըստ երկրորդ («անդադար շարժման») փաստարկի, երկնային մարմինների, աստղերի, մոլորակների և, առհասարակ, գոյություն ունեցող արարածների անդադար շարժումը պետք է ունենա սկզբնաշարժիչ: Որոտնեցին վկայակոչում է Արիստոտելին, որի հայեցակարգում Աստծուն հենց այդ դերն էլ վերապահվում է. «Կա՛ ոմն մեկը, որ շարժում է երկնային մարմին[ներ]ը, և միակն է, և անմարմին, և ունի անչափ կարողություն»[12]:

Երրորդ («անհրաժեշտ պատճառի») փաստարկը դարձյալ հիմնվում է Արիստոտելի հայեցակարգի, այս անգամ՝ նրա տրամաբանական ուսմունքի վրա: Քանի որ Արիստոտելը եղանակավորող (մոդալ) դատողությունները դասակարգելիս առանձնացնում է նաև անհրաժեշտության մոդալականությունը, Որոտնեցին եզրակացնում է, որ դրանով Արիստոտելը իրականության մեջ ընդունում է անհրաժեշտության գոյությունը: Իսկ եթե իրականության մեջ գոյություն ունի անհրաժեշտը, «ուրեմն հայտնի է, որ կա՛ ոմն մեկը, որը բոլորի նախասկզբնական հարկեցուցիչն է, որը ամենն օժտում է պատշաճ չափի անհրաժեշտությամբ: Եվ նա Աստվածն է՛»[13]: Ահա այսպես անհրաժեշտ մոդալականության մասին Արիստոտելի տրամաբանական ուսմունքից անցում է կատարվում անհրաժեշտության գոյաբանական ըմբռնմանը («անհրաժեշտությունը միշտ իրականում հատուկ է բոլոր էակներին») և արվում է պահանջվող դավանաբանական հետևությունը:

Չորրորդ («մեծ և փոքր ճշմարտության») փաստարկը պնդում է, որ քանի որ գոյու-

թյուն ունեն տարբեր չափի կատարելությամբ օժտված էակներ, ապա պետք է գոյություն ունենա ամենակատարյալ էակը, որն Աստվածն է: Ուշագրավ է, որ տարբեր կատարելությամբ օժտված էակների գոյությունը Հովհան Որոտնեցին բխեցնում է մեծ և փոքր ճշմարտությունների գոյությունից:

Հինգերորդ կամ գեղագիտական («դասի, ձևի, զարդի և գույնի») փաստարկը Աստծո գոյությունը բխեցնում է արարված աշխարհի իրերի և երևույթների գեղեցկությունից, ներդաշնակությունից, կարգավորված և նպատակահարմար լինելուց. «Սրանից հաստատապես երևում է տեսանելի արարածների աներևույթ [ստեղծողը]՝ Աստվածը»[14]:

Եվ, վերջապես, վեցերորդ («պատճառի գոյության») փաստարկի համաձայն, եթե կա հետևանքը, ապա այն ունի իր պատճառը: Քանի որ իրենք՝ պատճառները, փոփոխական են և ենթակա են տարբեր ազդեցությունների, ապա անհրաժեշտ է «գտնել բոլորի անփոփոխ պատճառը՝ Աստծուն»[15]:

Այսպիսով, միջնադարյան հայ մտածողի կողմից առաջադրված բոլոր փաստարկները Արարչի գոյությունն ապացուցում են արարված աշխարհին բնորոշ հիմնարար օրինաչափություններով՝ հակադրությունների պայքար և միասնություն, համապարփակ փոփոխություն և շարժում, անհրաժեշտության, պատճառահետևանքային կապի, ներդաշնակության և նպատակահարմարության գոյություն, կատարելության տարբեր աստիճանների (նաև բացասման) առկայություն:

Հովհան Որոտնեցին «բնական բանականության» զորեղ զենքը կիրառում է նաև Աստծո՝ մեկ և միակը լինելու դրույթը հիմնավորելիս: Նրա առաջին և ամենածանրակշիռ փաստարկն ունի որոշակի ռեալիստական ուղղվածություն: Ինչպես անհատների բազմությունը խմբվում է մեկ տեսակում, տեսակների բազմությունը՝ մեկ սեռում և սեռերի բազմությունը՝ մեկ գոյացության մեջ. կամ երկրաչափության մեջ՝ բազում մարմինները ձգտում են մեկ մակերևույթի, մակերևույթները՝ մեկ գծի, և գծերը՝ մեկ անհայտ նիշի, կամ թվաբանության մեջ՝ բյուրը անցնում է հազարյակի, վերջինս՝ հարյուրյակի, ապա տասնյակի ու վերջապես՝ միակի, կամ բուսաբանության մեջ՝ բազում ճյուղերը ունեն մեկ արմատ ու հիմք… «Եվ այս [ամենն] ակնհայտ վկայություն է տալիս մեզ, որ սրանց արարիչը մեկն է, որն այսքան բազմությունների հիմքը և արմատը վայելուչ ձևով մեկը դրեց՝ ինքը միա՛կն է, և այսքան բազմություններ առաջացան նրանից»[16]:

Որոտնեցու հաջորդ փաստարկներն առաջադրված դրույթն ապացուցում են հակառակ պնդումից («Բազում են աստվածները») բխող հետևանքները բացահայտելու միջոցով: Այսպես, եթե բազմաթիվ լինեին աստվածները, կա՛մ նրանք պետք է ենթարկվեին մեկին, և նա էլ կլիներ ամենազոր Աստվածը՝ կա՛մ նրանց միջև կառաջանար նախանձ և քինախնդրություն և հնարավոր չէր լինի բարի գործ կատարել, նրանցից յուրաքանչյուրը տարբեր ձևով կստեղծեր աշխարհի՝ իրեն վերաբերվող մասը, և աշխարհն ամբողջությամբ կլիներ հակասական, ինչն իր հերթին աշխարհի կործանման պատճառ կդառնար:

Առաջնորդվելով նույն՝ արարվածից արարողին ճանաչելու սկզբունքով, Որոտնեցին ապացուցում է նաև աստվածային նախախնամության գոյությունը:

Որոտնեցու աստվածաբանական ուսմունքի վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանում փիլիսոփայությունը, տրամաբանությունը ոչ թե պարզապես ծառայեցվում են դավանաբանական խնդիրների լուծմանը, այլ «բանականության ճշմարտությունները», դրսևորելով համապարփակ բնույթ, թափանցում են «հավատի ճշմարտությունների» ոլորտը և միաձուլվում են դրանց՝ զարմանալիորեն ներդաշնակ և ամբողջական ձևով: Որոտնեցին ջանք չի խնայում ապացուցելու, որ հավատի և բանականության «ճշմարտությունները» համահունչ ու անհակասական, ներդաշնակ ու փոխլրացնող ամբողջություն են կազմում: Եվ ինչպես դավանաբանական-աստվածաբանական խնդիրներ քննելիս

Որոտնեցին դիմում է «բնական բանականությանը», այնպես էլ իմաստասիրական-տրամաբանական հիմնախնդիրներ վերլուծելիս՝ ցույց է տալիս հավատի ոլորտում դրանց կիրառելիությունը և ճշտում դրսևորման առանձնահատկությունները:

Այսպես, Արիստոտելի «Կատեգորիաների» մեկնության մեջ Հովհան Որոտնեցին բավականին հանգամանալից անդրադառնում է անհատի և սեռի («առաջին և երկրորդ գոյացությունների») փոխհարաբերության խնդրին: Նա տարբերակում է դրանց փոխհարաբերության քննության երեք տեսանկյուններ՝ ըստ առաջնայնության, ըստ հավասարության և ըստ առավելության: Իր ինքնատիպ վերլուծության ընթացքում Որոտնեցին ի հայտ է բերում այս կարևորագույն հասկացությունների էական առանձնահատկությունները: Այսպես, սեռն ունի «ընդհանուր և համընդգրկուն», «անմարմին և ծածուկ», «ստորոգյալ» գոյություն, «իր բնական գոյությամբ», «ըստ դասի» այն նախորդում է անհատին: Սեռը գոյացնում է տեսակը և անհատը և, եթե վերացնելու լինենք սեռը՝ «կվերանա և՛ տեսակը, կվերանա և՛ անհատը»: Ինչ վերաբերում է անհատին, ապա նրան բնորոշ է «հատուկ և առանձին», «տեսանելի և հայտնի», «ենթակա» գոյություն: Անհատը ևս «մայր և ծնող է, և գոյացնում է տեսակն ու սեռը», թեև ոչ թե մեկ անհատը, այլ բազում անհատներ: Նմանապես, «բոլոր անհատները վերացնելու [դեպքում] վերանում է և՛ տեսակը, և՛ սեռը»: Եթե սեռը նախորդում է անհատին իր բնական գոյությամբ, ապա մեզ (անհատներիս) համար առաջին է անհատը. «Որպես պապն առաջին է և ապա հայրն և ապա որդին: Այլ մեզ [համար] առաջին է որդին, և ապա հայրն, և ապա իր պապը»[17], – օրինակով պարզաբանում է իր միտքը Որոտնեցին:

Առաջնայնության և հավասարության տեսանկյուններից այս հասկացությունների զուգահեռ քննությունը թույլ չի տալիս կշեռքի նժարը թեքել դրանցից որևէ մեկի օգտին: Թվում է, թե հարցի քննության մեջ ցանկալի պարզություն կմտցնի երրորդ՝ առավելության տեսանկյունից որոտնեցիական քննությունը: Չէ՞ որ դեռևս անպատասխան է մնում այն հարցը, թե ինչու է Արիստոտելը, այնուամենայնիվ, անհատը համարում «իսկապես, նախկին և մանավանդ» գոյացություն: Ըստ Որոտնեցու, անհատ-տեսակ-սեռ-պատահական հատկանիշ շղթայում անհատը հանդես է գալիս որպես առավելագույն ենթակա, և այս իմաստով այն «կարիք չունի սեռերի և տեսակների»: Անհատը «ներգործությամբ»՝ որպես իրականություն, պարունակում է սեռը և տեսակը և վերջիններիս հատկությունների հետ ունի նաև սեփական առանձնահատկությունները: Որոտնեցու կողմից հատկապես կարևորվում է անհատի՝ մարդկային զգայությունների համար ակնառու, նյութական գոյությունը. «Անհատն է ծնվում և աճում և մեռնում, ընդունում փառք և տանջանք, գովասանք և պարսավանք, և ոչ թե սեռը, և տեսակը և ուրիշները, քանի որ անհատն է անձնավորված տեսակ, և անհատ բնություն, և տեսակացյալ սեռ»[18]:

Ունիվերսալիաների հիմնահարցին նվիրված Որոտնեցու քննությունը ավարտվում է մի նշանակալից հատվածով, որը մեջբերում ենք ամբողջությամբ. «Եվ այստեղ տեսանելի են չորս զարմանալի իրեր. նախ, «որ առաջինը դարձավ վերջին և վերջինը՝ առաջին» ըստ Տիրոջ խոսքի, ինչպես սեռը և անհատը. երկրորդ, վերևինը [դարձավ] ներքին, և ներքևինը՝ վերին, «ով բարձրանում է՝ խոնարհվում է» ասաց և այլն. երրորդ, առավելը դարձավ նվազ, և նվազը՝ առավել, նրանց առավելը ճեր նվազությունից է՝ ասաց. չորրորդ, պարունակողը [դարձավ] պարունակյալ, և պարունակյալը՝ պարունակող. ինչ որ ձևով որպես ստորոգյալը առ ենթական: Եւ տես աստվածաբանապես. առաջին, քանի որ Աստծու Բանը մարդ դարձավ. երկրորդ, քանի որ երկնքից իջավ երկիր. երրորդ, քանի որ իր անձը նվաստացրեց, և հարուստը աղքատացավ. չորրորդ, քանի որ անպարփակը պարփակվեց մարմնում և այլն»[19]:

Բանականության և հավատի «ճշմարտությունների» միջև անցկացված այս զուգա-

հեռները կոչված են ցույց տալու անհատի և սեռի (տեսակի) փոխհարաբերության անցումային, փոխկապակցված, ճկուն ձևի դրսևորումները հավատի ոլորտում: Ճիշտ այնպես, ինչպես մի կողմից՝ անհատը, մյուս կողմից՝ սեռն ու տեսակը գոյացնում են միմյանց, մեկն ունի մյուսը (պարունակելու կամ ստորոգելու ձևով), մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ, այնպես էլ փոխհարաբերության այս դիալեկտիկական կերպը դրսևորվում է Հայտնության ճշմարտություններում: Այսպես, «Շատ առաջիններ վերջին պիտի լինեն, և վերջիններ՝ առաջին» (Մատթ. ԺԹ. 30), «Այն, որ մարդկանց առաջ բարձր է, Աստծո առաջ զազրելի է» (Ղուկաս. ԺԶ. 14), «Ձեզանից ով կկամենա մեծ լինել, ձեր ծառան պիտի լինի և ձեզանից ով կկամենա առաջին լինել, ձեր ծառան պիտի լինի» (Մատթ. Ի. 26–27), «Անձն իր ունայնացրեց, և ծառայի կերպարանք առնելով՝ մարդկանց նման լինելով և կերպարանքով մարդու պես գտնվելով. իրեն խոնարհացրեց, և հնազանդ եղավ մինչև ի մահ՝ և այն էլ խաչի մահ: Նրա համար էլ Աստված շատ բարձրացրեց նրան…» (Փիլիպ. Բ. 7). այս և այլ աստվածաշնչյան դրույթներ պարունակում են հակադրությունների միմյանց փոխակերպվելու օրինակներ, որոնք իրենց բնույթով զարմանալիորեն համահունչ են առաջին և երկրորդ գոյացությունների փոխհարաբերությանը: Ինչպես Աստծո «Բանը»՝ աստվածային Խոսքը («անպարագրելին», ընդհանուրը) մարմնավորվել, եզակիացել է Աստծո Որդու կերպարանքով, այնպես էլ ընդհանուրը կա «մասնավորի և անհատի մեջ», և ինչպես մարդկային կերպարանք ստացած Հիսուս Քրիստոսը Աստված է, այնպես էլ անհատն է «անձնավորված տեսակ... և տեսակացյալ սեռ»:

Այսպիսով, հակադրությունների փոխհարաբերության դիալեկտիկական կերպը համընդհանրացվում է՝ ընդգրկելով ոչ միայն երկրային, այլև վերերկրային՝ աստվածային երևույթները:

Սեռը կամ ընդհանուրը Որոտնեցու կողմից բնութագրվում է ոչ միայն որպես անմարմին, այլ նաև որպես անփոփոխելի, հավերժական, «անեղ» էություն: Ելնելով նման մոտեցումից՝ նա հաճախ յուրովի է մեկնաբանում արիստոտելյան հիմնադրույթները: Այսպես, Արիստոտելը «գոյացություն» կատեգորիայի հիմնական առանձնահատկությունը համարում է այն, որ, լինելով թվով մեկը և նույնը, այն կարող է կրել «ներհակ» (հակադեմ) հատկություններ: Մեկնելով այս դրույթը՝ Որոտնեցին կարևոր ճշգրտում է մտցնում. դա հատուկ է ոչ ամեն մի գոյացության, «քանի որ երկրորդ գոյացությունները, [ունենալով] անեղ գոյություն, չեն ընդունում հակադեմ [հատկություններ]»[20]: Այս հարցում Որոտնեցու դիրքորոշումն առավել որոշակիությամբ դրսևորվում է որակ կատեգորիայի քննության ընթացքում: Հայտնի է, որ, համաձայն «Կատեգորիաների» հին հայկական թարգմանության, հայ մեկնիչները որակին նվիրված գլուխը վերնագրել են «Որակի և որակության մասին»: Եվ դա պատահական չէ: «Որակը նշանակում է մասնավորը, իսկ որակությունը՝ ընդհանուրն ու անմարմինը, – բացատրում է Որոտնեցին ու շարունակում,- մեր զգայարանները սնվում են որակներով…, ինչպես աչքը՝ գույնով, և ականջը՝ ձայնով…, իսկ որակությունը դյուրին չէ ինքնըստինքյան գտնել»[21], քանի որ այն անմարմին է և վերացական: Այս կարևոր տարբերակումը մեթոդաբանական նշանակություն ունի Որոտնեցու իմաստասիրական մտորումների համար: Այսպես, անցնելով որակի առանձնահատկություններին՝ նա Արիստոտելի երկից քաղված «Որակն ընդունում է «ավելի» և «պակաս» բնութագրեր» բնաբանը մեկնում է՝ ելնելով վերոնշյալ դիրքորոշումից: «Որակն ընդունում է ավելի և պակաս [բնութագրեր], քանի որ ածանցված (գոյավորված) է, իսկ որակությունը չի ընդունում, քանի որ նախագաղափարն է, – գտնում է Որոտնեցին և ընդհանրացնում, – ց.անկացած նախագաղափար չի ընդունում առավել և պակաս [բնութագրեր], լինի դա աստվածային կամ մարդկային, մտքի կամ խոսքի, անվան կամ իրի, այդպես և ամեն մի սեռ»[22]: Այսպիսով, ի տարբերություն մասնավորի, որը փոփոխվում է,

ավելանում է կամ պակասում, կարող է կրել հակադեմ հատկություններ և այլն, ընդհանուրը անփոփոխ է, հավերժ և հաստատուն: Ընդհանուրի այս ըմբռնումն ուղղակիորեն կապվում է Աստծո՝ հավերժ, անեղ, անստեղծելի և անոչնչանալի, անփոփոխ էություն լինելու քրիստոնեական հիմնադրույթի հետ:

Իր իմացաբանական ուսմունքում Որոտնեցին ընդունում է ճանաչողության ենթակա իրերի առաջնությունը իմացության նկատմամբ և իր այս մոտեցումը հիմնավորում է արիստոտելյան զույգ փաստարկներով. նախ, եթե վերացնելու լինենք «մակացելին»՝ իմացվողը, կվերանա նաև «մակացությունը»՝ իմացությունը, բայց ոչ հակառակը, երկրորդ, եթե վերացնելու լինենք իմացող, ճանաչող էակին՝ անհնարին կլինի իմացությունը, այնինչ իմացվողը, գիտության ենթակա իրերը միշտ և ամենուր գոյություն կունենան: Հարկ է նկատել, որ իմացվողի, գիտության ենթակա իրի և գիտության, իմացության փոխհարաբերության հարցը քննելիս Հովհան Որոտնեցին կատարում է մի էական վերապահում: Նա տարբերակում է «ստացական գիտությունը», «որը հոգում վերանում է իմանալի իրերի [վերացման] հետ, քանի որ ունի պատճառն ուրիշից», և աստվածային գիտությունը, որն ինքնին է և ոչ ստացմամբ, «այդ իսկ պատճառով չի վերանում իրի [վերանալու] հետ»[23]: Այսինքն՝ Որոտնեցին ճշտում է, որ արիստոտելյան «իմանալիի վերացմամբ վերանում է իմացությունը» դրույթը վերաբերում է սովորական, «ստացական» գիտությանը, երբ ճանաչվում են մեզնից դուրս գտնվող իրերը, և վերջիններիս վերացման հետ վերանում է նաև դրանց իմացությունը: Նույնը չի կարելի ասել, ըստ Որոտնեցու, երբ հարաբերվում են Աստված և զգայելի աշխարհը. աստվածային գիտելիքն ինքնին է և չի վերանում զգայելի իրերի և երևույթների վերացման հետ: Տվյալ դեպքում Հովհան Որոտնեցին քրիստոնեական աշխարհընկալման դիրքերից կարևոր «ճշգրտում» է մտցնում Արիստոտելի իմացաբանական դրույթներում:

Այսպիսով, Հովհան Որոտնեցու աշխարհայացքում «հավատի և բանականության ճշմարտությունները» գտնվում են յուրատիպ ներդաշնակության մեջ: Որպես կանոն, դրանք փոխներթափանցված են՝ փաստարկ, անալոգիա և օրինակ են հանդիսանում միմյանց համար: «Բնական բանականության» զորեղ զենքի գործածության համար Որոտնեցու համարձակ միտքը չի ճանաչում պատնեշներ և սահմաններ՝ այն լիիրավ գործառում է նաև աստվածաբանության՝ ավանդաբար բանական քննության ենթակա չհամարվող, ոլորտներում: Միևնույն ժամանակ, դավանաբանական նյութը կարող է «ճշգրտումներ» մտցնել միջնադարյան հայ մտածողի իմաստասիրական-տրամաբանական դրույթներում՝ բոլոր դեպքերում անխաթար պահելով նրա աշխարհայացքի կառուցիկությունը և ամբողջականությունը:

[1] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան վարդապետի արարեալ ի բան մարգարէին որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս …» [Սաղ. ԺԸ. 9]: Ս. Հովհան Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի, Էջմիածին, 2009, էջ 207:

[2] Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալոյս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» [Սաղ. ԼԲ. 15], նույն տեղում, էջ 71:

[3] Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ. ՃԱ. 26], նույն տեղում, էջ 160:

[4] Նույն տեղում, էջ 161:

[5] Եռամեծի և երիցս երանեալ բազմերջանիկ և տիեզերալույս մեծ հռետորի և անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» [Սաղ. ԼԲ.15], նույն տեղում, էջ 71:

[6] Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ. ՃԱ. 26], նույն տեղում էջ 122:

[7] Նույն տեղում, էջ 128–129:

[8] Թեև Հովհան Որոտնեցին այստեղ վկայակոչում է Օլիմպիոդորոսին, սակայն նկատի ունի Արիստոտելի «Կատեգորիաների» Դավիթ Անհաղթի մեկնությունը, որը Որոտնեցին սխալմամբ վերագրել է Օլիմպիոդորոսին: Այդ մասին մանրամասն տես՝ Մինասյան Ա.Ա. Հովհան Որոտնեցին Արիստոտելի երկերի մեկնիչ: Եր., 2004, էջ 25–28:

[9] Յովհաննու Որոտնեցւոյ՝ քաջ հռետորի և արդիւնաբան վարդապետի արարեալ ի բան մարգարէին որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս ...» [Սաղ. ԺԸ. 9]: Նույն տեղում, էջ 207:

[10] Նույն տեղում:

[11] Յովհաննու Որոտնեցւոյ տիեզերալույս րաբունապետի արարեալ ի բան Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ «Ի սկզբանէ էր Բանն.– Բանն էր առ Աստուած. – Աստուած էր Բանն...» [Յովհ. Ա. 1], էջ 40:

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում:

[14] Տե՛ս նույն տեղում, էջ 41:

[15] Տե՛ս նույն տեղում:

[16] Նույն տեղում:

[17] Տես՝ Յովհաննու Որոտնեցւոյ վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի: Հավաքական տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ.Կ. Չալոյանի, թարգմ. Ա.Ա. Աղամյանի և Վ.Կ. Չալոյանի, խմբ. Ս.Ս. Արևշատյանի, Երևան, 1956, էջ 34–38:

[18] Տե՛ս նույն տեղում, էջ 38:

[19] Նույն տեղում, էջ 40:

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 66:

[21] Տե՛ս նույն տեղում, էջ 146–148:

[22] Նույն տեղում, էջ 184:

[23] Տե՛ս նույն տեղում, էջ 134–136:

ВЗАИМООТНОШЕНИЯ «ИСТИН» ВЕРЫ И РАЗУМА В МИРОВОЗЗРЕНИИ ИОАННА ВОРОТНЕЦИ

Ануш Минасян

Резюме

Вера и разум – две основы, на которых базируется мировоззрение Иоанна Воротнеци. Трудно однозначно утверждать, которой из «истин» веры и разума дает предпочтение средневековый армянский мыслитель: ибо они в его мировоззрении находятся в особой гармонии.

Логико-философские положения получают действенное применение (как метод обоснования и как рациональный аргумент) в процессе обоснования религиозно-богословских утверждений, проникая и функционируя даже в тех сферах богословия, которые традиционно считаются не подлежащими рассмотрению рассудка. В свою очередь, религиозно-богословские догмы являются аналогией и иллюстрацией для ряда философско-логических положений, иногда внося в них свои «уточнения». Благодаря этому своеобразному «союзу», проявляемому в мировоззрении Воротнеци, философия «вооружает» богословие мощным орудием разума, а богословие – «освящает» основоположения философии.

THE INTERRELATION OF “THE TRUTHS” OF BELIEF AND REASON IN THE WORLD-VIEW OF HOVHAN VOROTNETSY

Anush Minasyan

Summary

The world-view of Hovhan Vorotnetsy has two main bases, namely belief and reason. It is hard to say which of these “truths” is preferable for medieval Armenian thinker, as “the truths of belief and reason’’ are in a unique harmony in his philosophy. The logical-philosophical theses are in an active use (as a method of substantiation, and rational argument) in the process of reasoning the religious and theological statements. Besides, they penetrate and function into such spheres of theology, which are traditionally considered to be out of examination of the mind. In its turn, the religious-theological statements are analogy and illustration for many gnosiological conclusions, and even sometimes they input their “corrections”. In regard to this unique “alliance”, which is shown in Vorotnetsy’s world-view, philosophy “gives” a powerful tool of intellect to theology, and theology, in its turn, “enlightens” the statements of philosophy.

ОПЫТ РАЗРАБОТКИ, РАЗВИТИЯ И ВНЕДРЕНИЯ «СИСТЕМЫ КОНТРОЛЯ И ОЦЕНКИ, ОСНОВАННОЙ НА РЕЗУЛЬТАТАХ» В ИНСТИТУЦИОНАЛЬНЫХ СТРУКТУРАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

С.Д. Вардумян

В тезисах представлены процессы создания фактически новой – отвечающей требованиям современных реалий Республики Армения, системы общественного управления. В этой связи отражены концептуальные, идеологические, функционально-прикладные и организационные проблемы реформирования управления институциональными структурами в Армении, а также создания и непрерывного развития слоя оргуправленцев, призванных эффективно управлять этими структурами. В частности, представлены реализуемые правительством Армении программы по реформированию системы общественного/государственного управления, проекты решения неотложных проблемных задач и тенденции развития в этой области, а также некоторые тенденции формирования гражданского общества в целом.

В тезисах, в качестве стержня доклада, представлен тот опыт, который был приобретен автором после 2004г. в определенных институциональных структурах РА, в особенности в Центральном Банке РА, и отчасти в Армянском Агентстве Развития – в деле разработки и внедрения количественно-качественных критериев оценки и контроля, основанных на результатах управленческих процессов.

Ключевые слова: эффективное управление, институт оргуправленцев, институциональные структуры, описание рабочего места, характеристика деловых качеств, уровень компетенции, критерий, система основанная на результатах, индивидуальная рабочая программа, рабочая программа подразделения, система оценки выполнения

«Уровень Личных, Моральных качеств, более того – Патриотизм Управленца должны быть очень высоки! Если у него не будет такого Самосознания, чтобы он болел за всю Страну, навряд ли он воистину будет болеть за свою отрасль, организацию, компанию и подразделение, или даже – Семью и своих Потомков !?!»
Георгий Щедровицкий

В Армении, веками просуществовавшей без государственности, в результате прививания и применения от поколения к поколению **потребительского** государственно-гражданского образа мышления к чужеродным властителям и насажденным ими укладом жизни, в настоящее время превалирует ситуация, в которой несовершенство методов и техники управленческой работы во всех институциональных структурах является очень важной, сложной и неотложной задачей. Проблема усугубляется еще и тем, что в республике отсутствует опыт

систематизированной и эффективной подготовки, по сути, дееспособных, а значит – отвечающих минимальным требованиям деловых качеств оргуправленцев, глубинный, реальный спрос на которых чрезвычайно высок. Следовательно, приобретает особую важность то, что через 20 лет после достижения Арменией независимости, происходит формирование Концепции управленческой идеологии, удовлетворяющей требованиям, вытекающим из настоящих и предстоящих продвижений ситуаций в общественно-управленческих реалиях Армении. В соответствии с искомой Концепцией, необходимо будет обучать и поставить на службу обществу носителей такой идеологии – новое поколения качественно других – грамотных и благонравных оргуправленцев. В этой связи считаем необходимым отметить, что теоретической основой для этих изысканий послужили концептуальные разработки создателя Новой интеллектуальной культуры (Управления) – СМД (Системно-мыследеятельной) методологии Георгия Петровича Щедровицкого, опубликованные в 1995г. в его трудах «Категориальный аппарат и теоретические схемы», «Программы, подходы, концепции» и «Путеводителя по методологии Организации, Руководства и Управления». Исходя из последних, следует особо подчеркнуть два основопологающих канона управленческого концепта вообще:

• ***Занятие Управлением*** – это непрерывная и целеустремленная деятельность каждого руководителя, а не предмет занятия в свободное от профессиональной работы время.

• ***Эффективное Управление*** – это профессиональное применение метода и навыков достижения максимального результата (производительности) оптимальным путем.

Далее, конечно же, это приверженность к той основополагающей истине общественного бытия, попытки оспаривания которой стары как мир, но которая должна выступать в качестве *«Прерогативы гражданина, индивидуума (а не государства) во всех сферах общественной жизни»*. Другими словами, в конечном итоге, как это и звучит не парадоксально для нашего постсоветского (и доселе «недемократизированного» и «неогражданствленного») сознания, *Государство должно служить Человеку, а не наоборот!* То есть *высшей целью всех общественных процессов (в Стране) должен быть Человек, Личность (со всеми своими заботами и потребностями к развитию), и только потом – формируемые им малые и большие социумы (начиная с семьи и заканчивая различными общественными институтами и структурами, вплоть до государства в целом). Государство должно, в свою очередь, быть средством для создания, сохранения и защиты «Благосостоятельного общества относительно счастливых людей». А назначение государственной власти заключается отнюдь не в том, чтобы превратить страну в «Рай», а в том, чтобы хотя бы не дозволить ей превратиться в «Ад»! Демократия же в этом контексте – по сути, является не столько формой управления, сколько способом ограничения властных устремлений власть имущих – посредством укращения амбиций последних**! И последнее, самое главное, но архисложное для нас, у нас и сейчас – это формирование и укоренение в сознании людей «Баланса прав и обязанностей свободного человека»,*** законодательно предоставленного воистину с*праведливым гражданско-демократическим обществом данной страны!* Ведь давно уже известно, что, в

отличие от различных видов властных структур институционального управления, основанных на по-настоящему свободном/рыночном хозяйствовании, которые покупают лишь труд людей или их рабочее время, любая другая власть, особенно ее командно-административная или олигархо-монополистические разновидности (завуалированные под образом декларированных ее «*освободившихся от имперского гнета демократических республик с переходной экономикой, с доступной, прозрачной и интерактивной властью с бурно формирующимся гражданским обществом*»), стремятся овладевать людьми целиком. Последнее же осуществляется власть имущими этих стран и сращенными с ними олигархо-монополистами, главным образом основываясь на обстоятельствах неправомочности и неспособности к самоорганизации, вытекающих из якобы *«генетического отсутствия гражданских традиций»* и связанного с последним – фатальным обстоятельством *«гражданско-правового невежества»*, преобладающего среди большинства граждан той или иной страны с переходной экономикой.

Одним из актуальнейших нерешенных задач современных стран с переходной экономикой, и Республики Армения, в особенности, является задача разработки и построения эффективных (качественных) систем управления, из-за отсутствия которых волюнтаризм и коррупция продолжают тормозить общественное развитие.

Предмет данной статьи чрезвычайно актуален и с точки зрения неотложных императив, диктуемых процессами, происходящими в Республике, начиная с 3 сентября 1999г., когда решением N544 председателя Правительства «О первоочередных мероприятиях по реформированию системы государственного управления РА» была создана Комиссия реформ государственного управления. Реформы осуществлялись в 2 этапа: 1-ый этап (1999–2003гг.) ознаменовался тем, что перестроилась вся административная система государственного управления (были соединены структуры управления, сформированы управленческие учреждения, созданы профессионально-гражданские и соответствующие специализированные службы). А 2-ой этап реформ (2003–2008гг.) был ознаменован тем, что в центре внимания оказались задачи ответственности и отчетности государственных служб, а также прозрачности их деятельности для гражданского общества[1]. В настоящее время результаты развития в процессах реформирования системы государственного управления в республике следующие: в программе мероприятий деятельности правительства Республики на 2008–2012 годы, в разделе 4.2 «Основных направлений деятельности Правительства», озаглавленной «Реформирование системы управления и борьба против коррупции», в подразделе 4.2.1. «Эффективное государственное управление» закреплены следующие основные программные положения:

1. Развитие потенциала стратегического управления;

2. Повышение квалификации работников и применение эффективных процедур подготовки, принятия и реализации решений;

3. Формирование культуры корпоративного управления;

4. Создание института госуправленцев;

5. Повышение престижа работы в государственных институциональных структурах, с целью последовательного укрепления кадрового потенциала и т.д.

Последнее, в частности, предполагает разработку Стратегии оплаты общественных служащих (п. 6.1), а также Системы материального поощрения, основанную на результатах и качестве выполнения работ (п. 6.2). В то же время, уже семь лет, как в органах территориального управления – в 10 администрациях марзов (областей) республики внедрена Электронная система территориального управления[2], а в столице – Ереване, и во многих других городах также внедрены электронные системы местного самоуправления. С 2003г. в 44 органах государственного управления начато внедрение Системы Электронного Правительства (e-Government)[3], которая завершится к концу 2012г. Данная система также является одной из ключевых приоритетов программы Правительства РА на 2008–2012 годы, нацелена на повышение эффективности управления в госорганах, должна обеспечивать высокий уровень прозрачности деятельности и передать работе госорганов новое качество[4]. За истекшие 2009–2010 годы на заседаниях Правительства Республики периодически и целенаправленно затрагивались проблемы, касающиеся перехода к программному бюджетированию экономики и принятию четких критериев измеряемости проделанной работы общественно-государственными служащими. С целью избежания распыления общественных/ бюджетных средств особо заострялась необходимость:

– предельно четкой формулировки стоящих перед ведомствами задач, унификации программно-целевого планирования и критериев измерения результатов работ (уточнение количественных и качественных показателей результатов деятельности, четкое и предметное представление полезного продукта по сравнению с потраченными средствами);

– подготовки проект-менеджеров, способных разрабатывать реалистичные проекты и составлять программы их осуществления не только для правительственных структур, но также для всей общественно-институциональной системы;

– унификации планирования/программирования работ, а также введения стандартов по составлению годичных рабочих программ, с разбивкой на полугодия, начиная с индивидуальных рабочих программ и рабочих программ подразделений / организаций;

– введения в практику деятельности подразделений по управлению персоналом унифицированных стандартов описания рабочих мест и характеристик деловых качеств как рядовых работников, так и, в особенности, руководящих работников институциональных структур, в соответствии с присущими им спецификациями.

Начиная с июля 2009г., в практику обсуждения на заседаниях Правительства отчетов министерств и ведомств РА о проделаной работе за полугодие, были внедрены новые методы и система контроля и оценки их деятельности, которую в качестве новой функции и на основании утвержденного в 2010г. постановления Правительства «Положении по оценке деятельности гражданских служащих…» будут выполняться и в дальнейшем. А 26 ноября 2010г. подписанный между РА и Евросоюзом меморандум о взаимопонимании, относительно Программы развития органов государственного управления по рамочному документу «Обязывает стороны взаимодействовать полноценно и эффективно, с тем, чтобы стимулировать… развитие органов государственного управления Армении, … предоставляя на реализацию последнего сумму в размере 32 млн евро за 2011–2013 годы».

Однако, наряду со всем вышеописанным, сложность последовательной и целенаправленной реализации всех необходимых мероприятий по кардинальному решению проблемы заключается в том, что:

– пока планирование бюджетов (то есть бюджета в целом по стране, и ниже – по иерархии институциональных структур) не будет целиком основана на данной методологии,

– пока эта методология не будет непосредственно привязана к конкретному рабочему месту,

– пока наши министры и другие высокопоставленные (и не только высокопоставленные) должностные лица не будут иметь соответствующие навыки и основания по объективной шкале оценивать работу подчиненных им структур/подразделений,

– пока на этих новых концептуальных подходах не будут строиться концепции оплаты и стимулирования государственных служащих,

– пока не будут окончательно и полностью откорректированы функции и ответственность должностных лиц и не будут описаны основные и опосредованные бизнес-процессы государственных структур,

– наконец, пока не будет повсеместно преодолен завуалированный «саботаж» незаинтересованного (по понятным причинам) в искомых реформах «неблагонадежного чиновничьего сообщества»… никак не представится возможным определить – кто за что отвечает, и тем более, кого и как оценивать (а также – наказывать)[5]!

Сложение и разрешение вышеперечисленных пока «пожеланий» потребует целенаправленной политической воли и, по самым оптимистичным подсчетам, еще несколько лет тяжелой, рутинной организационно-методической и программной работы не только аппарата Правительства и подчиненных ему министерств-ведомств, но также всех вовлеченных в соответствующие процессы структур. Однако в данном контексте «цель оправдывает усилия», так как, во-первых, с точки зрения кардинального повышения эффективности управления в республике другого пути нет, а во-вторых, по сути дела фактически институционализируются все управленческие процессы: и субъективизм и покровительство (как в вертикальных, так и в горизонтальных направлениях, как во внутренних, так и во внешних связях), а также связанные с последними волюнтаристические и коррупционные риски низведутся к минимуму!

В русле вышеописанной проблематики определенную актуальность приобретает представление нашего опыта разработки, развития и участия во внедрении «Системы контроля и оценки, основанной на результатах» (название условно-собирательное), в Центральном Банке (здесь и далее – ЦБ) РА в период 2004– 2008гг., а также частично – в Армянском Агентстве Развития в 2010г., что и является целью настоящей статьи. Кстати, банковские, информационно-коммуникационные и другие высокотехнологичные институциональные структуры Армении, адекватно реагируя на процессы реформирования и совершенствования систем управления в Республике и вне ее (начатые, в частности, в ЦБ РА в 2004 году, в банковских структурах некоторых стран СНГ с начала 2000-ых годов, а, например, в европейских финансово-банковских учреждениях еще с середины 90-ых годов прошлого столетия), а также «отдавая дань» ставшими

модным веяниям повсеместной сертификации ISO (качества управления), первые вовлеклись в процессы разработки и внедрения современных систем контроля, оценки результатов и развития персонала, основанных главным образом на различных моделях QPI (Quality Performance Identification – Идентификации оценки качества) или CMMI (Capability Maturity Model Integration – Интегрированной модели производительной зрелости) и других систем бонусных и рейтинговых методологий монетарного и немонетарного механизмов вознаграждения.

За время работы в ЦБ РА в качестве советника председателя ЦБ, а далее – координатора по вопросам управления, с нашим участием были разработаны и внедрены в практику управленческих процессов ЦБ целый ряд учебных, нормативно-методических и инструктивных документов, перечисленных ниже:

1. «Инструкция по оценке выполнения и реализации рабочих программ подразделений ЦБ Армении»;

2. «Правила заполнения форм отчетности и планирования работ самостоятельных подразделений ЦБ Армении»;

3. «Система оценки и мониторинга результатов выполнения рабочих программ самостоятельными подразделениями ЦБ Армении»;

4. «Методическое пособие по составлению, оценке и мониторингу результатов выполнения Рабочих программ самостоятельных подразделений ЦБ Армении», по которому в течение июня-июля месяцев 2007г. нами были проведены 9 консультативных семинаров с 66-ю руководителями 21 подразделения ЦБ;

5. «Развитие управленческих навыков» – пособие предназначенное для переподготовки руководящего персонала ЦБ РА, а также модуль дидактического материала (77 слайдов), лекции 5-дневного обучения на 36 часов, по которым в течение 3-х лет нами (в сотрудничестве с ассистентом психологом и др. специалистами ЦБ, с применением около 10 тестов-опросников), обучались свыше 60 руководящих работников ЦБ;

В результате, были в корне изменены принципы разработки, оценки выполнения и контроля результатов выполнения индивидуальных рабочих программ и программ структурных подразделений. Структура ЦБ была усовершенствована и приведена в соответствие с новыми управленческими технологиями, в частности – было образовано самостоятельное подразделение по управлению персоналом, в составе трех отделов. Уже к 2008 году бумажный документооборот по части управления персоналом ЦБ сократился почти на 30%, так как в определенной части был переведен на электронные технологии, тем самым качественно повысилась эффективность и уровень культуры управленческих процессов вообще.

Аналогичные работы в 2010г. нами были проведены также в Армянском Агентстве Развития. В частности, была разработана и внедрена в практику управленческих процессов ААР «Методическое пособие по оценке результатов выполнения работ сотрудников Армянского Агентства Развития», по которому в течение мая месяца 2010г. нами был проконсультирован почти весь персонал ААР, насчитывающий около 50 человек.

Общие Концептуальные положения
Системы контроля и оценки, основанной на результатах» (СКООР)

Цель и политика внедрения ***Системы оценки выполнения*** *(СОВ)* – это инструмент управления персоналом организации. Система представляет совокупность принципов, методов и инструментов по управлению процессами продуктивной деятельности, направленных на повышение эффективности работы как сотрудников, так и подразделения и/или организации в целом. *Система оценки выполнения:*

– четко очерчивает и формулирует цели и задачи организации/подразделения;

– предоставляет возможность определить и оценить личный трудовой вклад каждого работника в организации;

– в оперативном режиме указывает пути/способы повышения производительности труда (целенаправленной продуктивной деятельности);

– благоприятствует улучшению взаимоотношений руководитель/подчиненный, а также горизонтальных/коллегиальных связей между сотрудниками;

– обеспечивает деятельность механизма обратной связи между руководителями и подчиненными;

– благоприятствует проявлению и развитию специфических потребностей (в особенности, повышению профессиональных и деловых качеств) работника, а также улучшению его деятельности в дальнейшем;

– дополняет и завершает представления работников об их индивидуальной работе и об общих трудовых процессах в организации/подразделении;

– является объективной основой для стимулирования, развития и карьерного роста работников;

– является источником для формирования дальнейших целей и направлений продолжительного развития организации.

Целью любой организации должно быть непрерывное повышение производительности труда, которое непосредственно зависит от уровня и качества личного выполнения каждого работника в организации; чем выше требования к профессиональным и деловым качествам, и адекватный им индивидуальный трудовой вклад работников, тем выше будет уровень производительности организации в целом.

Сущность ***Процесса оценки выполнения*** (*ПОВ):* это сравнение/сопоставление результатов проделанной работником работы за отчетный период с задачами, работами и обязанностями, предусмотренными его индивидуальной рабочей программой. Следовательно, первичной задачей в *процессе оценки выполнения* является составление четко оцениваемой **Индивидуальной рабочей программы** (ИРП). ИРП составляется на определенный отрезок времени (в преобладающем большинстве институциональных структур – на год, с разбивкой на полугодия и/или кварталы). ИРП в течение года, в зависимости от различных обстоятельств, может корректироваться или пересматриваться, например, из-за изменений в программах подразделений или в описаниях рабочих мест, в результате структурных изменений в организации/подразделении, а также в случае долгосрочного отсутствия работника (по причине нетрудоспособности, командировки, учебы и так далее) или по причине перевода в другое подразделение

(ротация и тому подобное). При составлении ИРП учитываются: **Описание Рабочего Места** (РМ), **Рабочая программа подразделения** и ресурсы (человеческие, финансовые, временные, прочие), взаимные связи в подразделениях и между ними, взаимозаменяемость РМ или возможности делегирования некоторых функций между ними, и вообще – цели и ближайшие задачи организации. При составлении ИРП используется специальная «Форма оценки выполнения работы». При составлении ИРП – исходной, так или иначе, является Описание Рабочего Места, в котором в качестве осевых направляющих определяются: цель РМ, основные задачи/обязанности РМ и **Деловые качества** (ДК), необходимые для решения/реализации этих задач/обязанностей. Цель ПОВ заключается в том, чтобы работник четко представлял – что от него требуется, то есть какими должны быть результат и качество/количество результата его работы. Именно по этой причине в ИРП для каждой из работ/обязанностей отмечается требуемый показатель – измеряемая норма выполнения. При определении этих показателей учитываются также требования, предъявляемые к работнику и занимаемому им РМ, то есть роль и место данного работника в общем трудовом процессе и/или совокупность функциональных обязанностей. Исходя из особенностей деятельности организации чаще всего применимы показатели:

• ***Времени*** – выражающей сроки (промежуток времени) и/или периодичность (вплоть до каждодневного отрезка) выполнения результата предполагаемой работы.

• ***Качества*** – выражающего количество (если оно количественно измеряемо) и/или качество выполнения/результата предполагаемой работы или предъявляемые к нему экономико-технические требования.

Нормативы показателей должны определяться таким образом, чтобы не только удовлетворяли критериям успешного выполнения, но также были бы оцениваемы. Показатели в неопределенных, абстрактных выражениях не могут ясно и корректно охарактеризовать требования, предъявляемые к работнику и работе/функции, и делают невозможным оценку его деятельности. В то же время неоцениваемый показатель может в дальнейшем стать предметом оспаривания и конфликта, так как заинтересованные стороны (чаще всего руководитель–работник) могут предвзято, каждый по своему комментировать результаты выполнения работ.

Характеристики Деловых Качеств (competency): чтобы работник сумел обеспечивать предусмотренный его Индивидуальной рабочей программой результат, он должен, во-первых, обладать необходимыми способностями, знаниями и навыками, во-вторых – соответствующим образом вести себя, то есть стараться проявить их! Все те способности, знания и навыки, которые необходимы для реализации предусмотренных заданий/обязанностей, соответственно установленным нормативам, условно называются Деловыми качествами.

Другими словами, ***Деловые качества – это соотношение необходимых человеку способностей, знаний, навыков и его поведения в процессе выполнения им ИРП***. Однако существует взаимная связь и определенная разница между *оценкой результатов выполнения работ и оценкой ДК, проявленных работником в процессе работы*: если первое – это оценка результатов выполнения работ сообразно установленным качествам и срокам, то второе – это оценка возможности (потен-

циала) работника и вытекающего из последних поведения (проявления стараний) в направлении выполнения этих работ! ***Работник считается компетентным (competent), если выполняет свою работу соответственно критериям, установленным организацией для данного РМ***. Каждая организация устанавливает перечень ДК, соответствующих специфике и особенностям ее деятельности.

В ИРП определяются ДК, в первую очередь, исходя из особенностей РМ и задач, выдвинутых данной ИРП. Однако выделяются ДК, которые обязательны для всех работников, независимо от особенностей их работы. Эти ДК называются Основными (ОДК). Для каждого РМ, кроме ОДК, также отбираются (из специальных списков ДК для руководителей самостоятельных подразделений, отделов/групп и для рядовых работников) необходимые данному РМ Специальные ДК (СДК), которые определяются в основном исходя, из специфических требований этого РМ. ДК могут устанавливаться по Приоритетам (то есть степени важности, согласно характерам задач, предъявленных РМ) и по Требуемому уровню (то есть степени совмещения способностей, знаний и навыков, необходимых для выполнения ИРП). Могут быть и такие ДК (как, например, прилежность, законопослушность, надежность и тому подобное), для которых невозможно или нецелесообразно установление относительной степени, и они рассматриваются как абсолютные величины. ДК могут разделяться на разные уровни. В основном применяются четыре уровня, которые можно рассматривать и в качестве уровней профессиональной или производительной зрелости (capability maturity) работника:

– уровень I – осведомленность (awareness), предполагающая представление/ понимание основных/общих принципов работы;

– уровень II – навыки/способности (basic skills), в основном предполагающие компетентность, однако требующие развитие и контроль за выполнением;

– уровень III – умелая компетентность (advanced skill), не требующая контроля за выполнением;

– уровень IV – высокопрофессиональное мастерство (mastery), знание дела, правомочны также контролировать и обучать работников I–II уровней.

Чем выше статус (должность) работника, тем серьезнее должны быть уровни требуемых от него ДК (ТУДК). Однако обусловленное спецификой и требованиями РМ (если согласно Описанию РМ данное ДК неприоритетно), даже при высоком классе РМ – возможно определение низкого уровня Основного ДК, и наоборот…!

Требуемые уровни ДК устанавливаются взаимным согласием непосредственного руководителя и работника, исходя из требований РМ, сложности задач, предъявляемых ИРП, предполагаемых результатов, умений и трудового опыта работника. Таким образом, чтобы обеспечить необходимый результат, работник, во-первых, должен обеспечить уровень, соответствующий ТУДК, а уж потом стремиться их развить до наивысшего уровня с целью перейти на повышение по должности и/или классу/категории РМ. Непосредственный руководитель, давая заключение по оценке результата выполнения ИРП работником, оценивает его ДК, сопаставив фактический уровень ДК (ФУДК) с требуемым уровнем (ТУДК), в результате чего могут быть обнаружены как положительные, так и отрицательные отклонения, изъяны эффективности (gap). Если ФУДК ниже, чем ТУДК, то руководитель и работник сообща выясняют причину изъяна и

составляют индивидуальную программу улучшения выполнения. Если же большинство из ФУДК выше ТУДК (то есть по пятибальной шкале оценки равны 4 и 5), то оцениваемый может не только быть поощрен, но и выдвинут на дальнейшее продвижение по должности и/или классу/категории РМ. В обоих случаях возникает вопрос о разработке «Программы обучения/развития по повышению или укреплению ДК оцениваемого», которая не увенчается успехом, если он сам не примет участие в этих процессах. Именно поэтому необходимо, чтобы каждый «хозяин» или представитель определенного РМ, в том числе руководящие работники, ясно (критериально определенно, то есть четко оцениваемо) представляли что, как и когда от них требуется. С целью повышения уровней ДК работников необходимо, в первую очередь, периодически оценивать их, выявлять изъяны эффективности (gap) и разрабатывать индивидуальные программы по их ликвидации.

Каждый год, исходя из задач, стоящих перед организацией и ее подразделениями, во взаимном согласии работника и его непосредственного руководителя, составляются Индивидуальные рабочие программы (ИРП), заполняя, как отмечалось выше, специальную «Форму оценки выполнения работы», которая включает не только заданные работы, функции и задачи, но и необходимые для их выполнения деловые качества. Работы, функции и задачи, заложенные в ИРП, могут классифицироваться по важности и сложности. Вместе с тем, исходя из характера, сложности и объема этих работ, функций и задач могут определяться их вес в общем объеме работ на год – по полугодиям. Работы, функции и задачи взвешиваются по такому принципу, что первичным задачам придается больший вес по сравнению с вторичными задачами. Аналогичным работам/функциям, выполняемым работниками одинаковых классов/ категорий, придается равный вес, который может выражаться в баллах, а их сумма должна составлять 1 (1.00) балл. Ввиду того, что Оценка выполнения производится в разрезе двух полугодий, следовательно, вес также определяется для каждого полугодия в отдельности, то есть сумма веса работ, подлежащих выполнению в каждом полугодии, должна быть ровна 1 (1.00) баллу, и так далее, вплоть до составления Рабочих программ структурных и самостоятельных подразделений, контроля и оценки результатов их выполнения...!

Начав статью изречением выдающегося создателя Новой Интеллектуальной Культуры (Управления) – СМД (Системмо-мыследеятельной) Методологии **Георгия Щедровицкого**, считаем уместным завершить изречением его сына и продолжателя – **Петра Щедровицкого:**

«В настоящее время в любой стране и общности, находящейся в условиях Переходного периода, главным процессом должно являться формирование Слоя высококлассных оргуправленцев, которое возможно при построении Этнокультурных идеологических основ и образа мышления, соответствующих требованиям Организации, Руководства и Управления, и их надлежащего предоставления новому поколению оргуправленцев, призванных быть их Носителями!»

Вышеописанные «Общие Концептуальные положения СКООР» составляют лишь малую часть всей системы, включающей также целый пакет соответст-

вующих Приложений, в том числе Прикладных программ в Excel-форматах автоматических расчетов.

[1] *Худавердян А.В.* Реформы сферы общественного управления в Республике Армения. Ер.: Сарвард, 2008. С. 298. (на арм.яз.).

[2] *Вардумян С., Асатрян М., Нанасян Т., Даниелян В., Акопян А., Паносян Г., Вардумян В.* Электронная система территориального управления. Ер.: Модус-Ауреус, 2004. С. 47. (на арм. яз.).

[3] *Вардумян С.Д.* Электронное правительство: официальные ВЕБ-страницы. Ер.: Модус–Ауреус, 2003. С. 27. (на арм. яз.).

[4] Электронное правительство в органах государственного управления – презентационный материал на магнитном носителе. Ер.: Правительство РА. 2010. (на арм. яз.).

[5] «Мы категорически против таких слов, как «углублять», «расширять», «совершенствовать» – интервью от 22 декабря 2010г. председателя Правительства Республики Армения Тиграна Саркисяна корреспонденту РБК daily Петру Кирьяну.

«ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ» ՄՇԱԿՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ս.Դ. Վարդումյան

Ամփոփում

Հոդվածում արծարծվում են նորանկախ Հայաստանի Հանրապետության կայացման բարդ և հարափոփոխ գործընթացների համապատկերում ինստիտուցիոնալ և հանրային կառավարման կառույցների ձևավորման, դրանց արդյունավետ կառավարմանը կոչված կազմկառավարիչների խավի ստեղծման ինչպես հայեցակարգային-գաղափարախոսական, այնպես էլ կիրառական-գործառութային ու կազմակերպչական հիմնախնդիրներ: Մասնավորապես՝ թե հանրային/պետական կառավարման համակարգի բարեփոխմանն ուղղված ինչպիսի ծրագրեր են իրականացվել ու կատարվում Հայաստանի կառավարության կողմից, ինչպիսի իրավիճակ է տիրում այդ ոլորտում խնդրո առարկա հրատապ հարցերի լուծման գործում ներկայումս, և ինչ զարգացումներ են ուրվագծվում առաջիկայում:

Նաև ներկայացվում է այն փորձը, որը ձեռք է բերվել հեղինակի կողմից վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության ինստիտուցիոնալ որոշակի կառույցներում արտադրողական և կառավարչական գործընթացների վերահսկման ու գնահատման քանակա-որակական չափորոշիչների մշակման ու ներդրման մասնակցության գործում, ինչը կարևոր ու արդիական է Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող՝ կառավարչական համակարգերի որակական կատարելագործման ուղենիշների հստակեցման տեսակետից:

Հայեցակարգային ընդհանուր դրույթների տեսքով ներկայացվում են Աշխատատեղերի ծրագրա-նպատակային ու գործառութային նկարագրությունների, դրանց վարձատրության ու խրախուսման դասային աստիճանավորման, և դրանցում անհատական Գործարար որակների ձևակերպումների ներմուծման ու գնահատման մեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև՝ ընդհանրապես Արդյունքների վրա հիմնված վերահսկման և գնահատման համապատասխան համակարգերի մշակման, զարգացման և ներդրման հիմնական սկզբունքներն ու նպատակները:

THE EXPERIENCE OF ELABORATION, DEVELOPMENT AND INTRODUCTION OF «THE RESULT-BASED SUPERVISION AND EVALUATION SYSTEM» IN INSTITUTIONAL STRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA

Suren D.Vardumyan

Summary

The article briefly analyses and represents the complex processes of creating a new system of management/administration for contemporary requirements in the Republic of Armenia. In this context certain conceptual, ideological, functional-practical and organizational problems of the institutional structures formation are elucidated, as well as those of development of a new strata of administrative managers. Particularly, some programs for reforming the System of Public/ State Management realized by the government of Armenia are represented, the situation of urgent problems and tendencies in this field and some tendencies of the formation of civic society are discussed.

The main core of the article consists of the experience gained by the author after 2004 in certain institutional structures of RA, mainly in Central Bank and partly in Armenian Development Agency, while working out and introducing the quantitative-qualitative criteria of management evaluation and control processes. This experience is important and actual from the aspect of improvement the scientific-practical bases and adjustment of the ways of qualitative changes in management/administration systems taking place in nowadays Armenia.

In the form of general conceptual statements of "The Result-based Supervision and Evaluation System" the article represents the descriptions of program-aimed and functional characteristics of job vacancies in institutional and social-governmental structures, and those of the methodological bases of a) evaluation, b) stimulation, c) conferment of appropriate classes/ categories and degrees on stuff units due to payment scale, d) introduction of individual business quality clusters and their evaluation. The general view of the future aims and principles of working out, introducing and developing "The Result-based Supervision and Evaluation System" are also represented.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՆ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ն.Ս. Ստեփանյան

«Ես չեմ մեղանչի ճշմարտության դեմ, եթե ասեմ, որ Կոնգրեսը, որն անցկացնում է իր նստաշրջանները, դա Կոնգրեսն է, որը տեսնում է հանրությունը, նույն ժամանակ երբ Կոնգրեսը, որը մասնակցում է իր հանձնաժողովների նիստերին, դա Կոնգրեսն է աշխատանքի ժամին»:
ՎուդրոՎիլսոն (1913–1921)

Քաղաքական կուրսի մշակումը հանդիսանում է քաղաքական գործընթացի առանցքը: Հենց այդ ժամանակ է օրինագիծը դառնում օրենք և այնուհետև կյանքի կոչվում: Պետության քաղաքականությունը հասկանալու համար, նախևառաջ, պետք է իմանալ, թե ինչպես են ընդունվում որոշումները, տարբեր քաղաքական համակարգերում որտե՞ղ է կենտրոնացված իրական իշխանությունը և թե ինչպե՞ս են կարգավորվում որոշումների ընդունման կենտրոնների միջև փոխհարաբերությունները, արդյո՞ք վերջիններս պատրաստ են համագործակցության, թե՝ ո՛չ: Ելնելով այս դրույթի կարևորությունից՝ այսօր քաղաքագիտական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում քաղաքական որոշումների ընդունման կառուցակարգերին, այսինքն՝ ովքեր են հանդիսանում որոշումների ընդունման դերակատարները (ակտորները), թե ինչպես է տեղի ունենում որոշումների ընդունման բուն գործընթացը, և որոնք են դրա վրա ազդող գործոնները:

Որոշումների ընդունման շրջանակներում անհրաժեշտ է տարբերակել.

1. որոշումների իշխանության կենտրոններ,
2. որոշումների ընդունման կենտրոններ,
3. որոշումների վրա ազդեցության կենտրոններ:

Այս տարբերակման համար հիմք է հանդիսանում այն, որ չնայած և՛ պետական իշխանության մարմինները, և՛ բազմաթիվ հասարակական ու քաղաքական կազմակերպությունները հանդիսանում են որոշումների ընդունման կենտրոններ, սակայն առաջիններն ունեն պետական որոշումներ ընդունելու իշխանություն, իսկ երկրորդները միայն կարող են ազդեցություն գործել այդ որոշումների վրա, իհարկե, նախապես իրենց գործունեությունը պլանավորելով ներկազմակերպչական որոշումների ընդունման միջոցով:

Ներկայացնելու համար այս կենտրոնների տարբերությունը՝ նպատակահարմար է

կիրառել խորհրդարանի օրինակը: Մեծամասնություն ունեցող և իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերում ղեկավարություն ստացած քաղաքական ուժը (ուժերը) հանդիսանում է (են) քաղաքական, իշխանական որոշումների կենտրոններ, քանի որ նրանց որոշումները, հստակեցված ընթացակարգերի միջոցով, մեծամասնության իշխանության սկզբունքի վրա ստանում են պետական որոշումների տեսք: Որոշումների կենտրոնները տվյալ տեսանկյունից դիտարկելիս, դրանք ընդդիմադիր քաղաքական ուժերն են խորհրդարանում, որոնք կարող են խափանել որոշումների ընդունումը մեծամասնության կողմից, սակայն չեն կարողանում միայն իրենց ուժերով ընդունել որոշումներ, մասնավորապես՝ օրենքներ: Նրանք երբեմն հանդես են գալիս որպես ոչ-որոշման կենտրոններ: Որոշումների վրա ազդեցության կենտրոնները դրանք այն կազմակերպություններն են, որոնց մոտեցումները կամ ձգտումները չեն կարող դառնալ պետական-քաղաքական բնույթի որոշումներ, սակայն նրանք ազդեցություն են գործում մյուս որոշումների կենտրոնների վրա (օրինակ՝ լոբբիստական կազմակերպությունները):

Որոշման կենտրոնի կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ կարևորագույն կետերից մեկը, որի վրա պետք է ուշադրություն դարձնել, դա կառուցվածքի պաշտոնական, ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերն են, որոնք կարող են երբեմն հանդես գալ որպես կենտրոնի ներսում պաշտոնական, ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպություններ: Պաշտոնական, ֆորմալ և ոչ ֆորմալ կառուցվածքներն իրենց միջոցով իրականացնում են ներկայացուցչականության, կայունության և հստակության, ճկունության և զարգացման պահանջները: Կառուցվածքի ձևերը որոշումների ընդունման ժամանակ հսկայական չափով ազդում են ընթացակարգերի վրա և հնարավորություն են տալիս ավելի արագացնել և արդյունավետ դարձնել կամ դժվարացնել և դադարեցնել որոշումների ընդունումը: Պաշտոնական և ֆորմալ կառուցվածքներն «աշխատացնելու» միջոցով ընդունված որոշումները, որպես կանոն, ստանում են օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, կանոնների, պաշտոնական հրամանների տեսք և կարող են հանդիսանալ և՛ լեգիտիմ, և՛ լեգալ, իսկ ոչ ֆորմալ կառուցվածքներով ընդունվող որոշումները՝ ավելի շուտ վարվելակերպային նորմերի, խաղի կանոնների[1]:

Հիմնախնդիրն այլ երանգ է ստանում, երբ խոսքը վերաբերում է որոշման իշխանության բարձրագույն կենտրոնի օրենսդրական ճյուղին: Երկրի բարձրագույն օրենսդիր իշխանության մարմնում, որտեղ ներկայացված են տարբեր քաղաքական ուժեր (խոսքը վերաբերում է կուսակցություններին և խմբակցություններին), պետական կառավարման ցանկացած կարևոր որոշում, դա, բնականաբար, վերաբերում է նաև օրենքների ընդունմանը, պաշտոնական տեսք է ստանում: Դա, իհարկե, վերաբերում է դեմոկրատական ռեժիմներին, երբ օրենսդիր մարմնի պաշտոնական որոշումը կազմվում է կուսակցությունների և խմբակցությունների պաշտոնական որոշումների հաշվառմամբ:

Պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինն ունի այն յուրահատկությունը, որ, հանդիսանալով որոշման իշխանության կենտրոն, ինքը ներսից տարաբաշխվում է որոշումների տարբեր կենտրոնների նույնիսկ այն դեպքում, երբ որևէ կուսակցություն կամ խմբակցություն բացարձակ մեծամասնություն է կազմում: Այսպես, խորհրդարաններում՝ որպես որոշումների ընդունման կենտրոններ, հանդես են գալիս խորհրդարանի խոսնակը, նրա տեղակալները, խմբակցությունները, հանձնաժողովները, կոալիցիան (եթե որևէ քաղաքական ուժ բացարձակ մեծամասնություն չի կազմում կամ կոալիցիայի ձևավորումն անհրաժեշտ է լեգիտիմացիայի ճգնաժամը հաղթահարելու համար), անհատ պատգամավորները, իսկ որպես որոշումների ընդունման ազդեցության կենտրոններ՝ աշխատակազմը (խորհրդարանի և ինչպես նաև անհատ պատգամավորների), փորձագետները, վերահսկողական ծառայությունները, տարբեր տեսակի վարչու-

թյունները և այլն: Այս բաժանումը որոշ չափով պայմանական է, քանի որ յուրաքանչյուր խորհրդարան ունի իր առանձնահատկությունները:

Օրենսդիր իշխանության համակարգում քաղաքական որոշումների ընդունման կենտրոններն ուսումնասիրելիս նպատակահարմար է կիրառել քաղաքական-կառավարչական ցանցերի մոդելը: Նախ նշեմ, որ «քաղաքական ցանցեր» հասկացության վերաբերյալ կան մի շարք սահմանումներ. այսպես, Ռ. Ռոդեսը գտնում է, որ քաղաքական ցանցերը ձևավորվում են ժամանակակից քաղաքական գործունեության տարբեր ոլորտներում (առողջապահություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, կրթություն և այլն) և իրենցից ներկայացնում են քաղաքական ինստիտուտների և հասարակայնության միջև կառուցվածքային փոխհարաբերությունների համալիր: Հարաբերությունների կայացման ընթացքում նա կարևորում է նաև ցանցի անդամների միջև ռեսուրսների փոխանակման գործընթացը[2]:

Համաձայն Թ. Բերցելի, քաղաքական ցանցերը՝ դրանք հարաբերկանորեն կայուն, ոչ հիերարխիկ փոխհարաբերություններն են, որոնք միավորում են տարակերպ դերակատարների: Վերջիններիս քաղաքականության մեջ միավորում են ընդհանուր շահերը, և որոնք այդ շահերի առաջխաղացման համար փոխանակվում են ռեսուրսներով՝ ընդունելով, որ կոոպերացիան հանդիսանում է ընդհանուր նպատակներին հասնելու լավագույն միջոցը[3]:

Այս մոդելի շրջանակներում 1960-ական թվականներին մշակվեց «երկաթյա եռանկյունու» հայեցակարգը: «Երկաթյա եռանկյունին» նշանակում է կայուն քաղաքական կազմավորում, որը բաղկացած է խորհրդարանական հանձնաժողովների և ենթահանձնաժողովների, ճյուղային ադմինիստրատիվ գերատեսչությունների անդամներից և լոբբինգ իրականացնող շահերի խմբերից, որոնք գործում են միևնույն քաղաքական-կառավարչական ոլորտում (օրինակ՝ պաշտպանության, առողջապահության, էներգետիկայի և այլն): Նմանատիպ կազմավորումների համար բնութագրական է նոր անդամների մուտքի սահմանափակումը, կորպորատիվ համերաշխությունը, ինչպես նաև հասարակության կարևոր ռեսուրսների «խաղաղ կերպով» բաշխումն «իրենց» միջև: Կայուն կազմով ցանցերի անդամները միավորվում են կոնկրետ պետական ծրագրերի վրա վերահսկողություն սահմանելու համար՝ սեփական տնտեսական շահերը բավարարելու նպատակով: Քաղաքական-կառավարչական ցանցերը մյուս տիպի ցանցային կառուցվածքներից, առաջին հերթին, տարբերվում են նրանով, որ իրենց մեջ ներառում են պետական և ոչ պետական դերակատարների: Ինչպես նշում է ցանցային մոտեցման տեսաբաններից Դ. Նոուքը՝ «ներկազմակերպչական ցանցերը մեզ հնարավորություն են տալիս վերլուծել բոլոր կարևոր քաղաքական-կառավարչական դերակատարներին՝ սկսած խորհրդարանում ներկայացված կուսակցություններից և կառավարական գերատեսչություններից մինչև բիզնես-ասոցացիաներ, արհմիություններ և այլ հասարակական միավորումներ»[4]: Բացի դա, նմանատիպ ցանցերում միաժամանակ գործում են ինչպես պաշտոնական նորմեր, այնպես էլ ոչ ֆորմալ խաղի կանոններ և տեղի է ունենում իշխանական, տնտեսական, տեղեկատվական և այլ ռեսուրսների ինտենսիվ փոխանակում, որը հիմնված է կոոպերատիվ շահերի, հաստատուն հաղորդակցությունների, սոցիալական փոխադարձ կապերի և դերակատարների միջև համաձայնագրերի կնքման վրա: Նոուքը և Ջ. Քուքլինսկին, ուսումնասիրելով դերակատարների դասավորվածությունը ցանցի ներսում և նրանց միջև հարաբերությունները, եկան այն եզրահանգման, որ ակտորները տարածության մեջ դասավորվում են «կենտրոնի և ծայրամասի» միջև, որի համար բնութագրական է «ինտենսիվ ներքին փոխգործունեությունը», ինչպես նաև «ուղղորդվածությունը», որը որոշվում է ցանցի կենտրոնի և ծայրամասի միջև ռեսուրսների տեղաշարժման վեկտորով: Նոուքը քա-

ղաքական ցանցերի շրջանակներում առանձնացնում է հատուկ «քաղաքական-կառավարչական դոմեններ» և նշում է, որ պետական կառավարման յուրաքանչյուր ոլորտում ձևավորվում է սեփական ցանցային կառուցվածք («դոմեն»): Այդ «դոմեններում» առկա են 4 հիմնական բաղկացուցիչներ. 1. քաղաքական-կառավարչական դերակատար, 2. քաղաքական շահեր, 3. իշխանական փոխհարաբերություններ, 4. համատեղ խմբային գործողություններ[5]: Իշխանական հարաբերություններն իրենց մեջ ներառում են 2 տեսակի բազային ռեսուրսների փոխանակումը՝ տեղեկատվական (գաղափարներ, փաստեր և այլն) և նյութական (փող, ծառայություններ և այլն): Իսկ ինչ վերաբերում է համատեղ խմբային գործողություններին, ապա դա իր արտահայտությունն է գտնում քաղաքական ակտիվության մոբիլիզացիոն ձևերում (կոալիցիաների ստեղծում, զանգվածային շարժումների կազմակերպում), ինչպես նաև ուղիղ լոբբինգում և սեփական շահերի առաջ տանելը պետական որոշումներում: Դրա արդյունքում ձեռք է բերվում համատեղ դիրքորոշում, որն էլ իր ձևակերպումն է ստանում քաղաքական որոշումների տեսքով:

Ընդհանրապես, բոլոր դեմոկրատական երկրների օրենսդիր մարմիններում՝ որպես որոշման ընդունման կենտրոն, կարևորվում են հատկապես հանձնաժողովները, որոնք խորհրդարանական խմբակցությունների հետ միասին հանդիսանում են ամենակարևոր աշխատանքային մարմինները: Հենց դրանցում է իրականացվում պատգամավորների և սենատորների աշխատանքի մեծ մասը: Այսպես, Կոնգրեսի հիմնական գործառույթը՝ ներկայացուցչությունն ու որոշումների ընդունումն է, որն էլ մեծ մասամբ տեղի է ունենում հանձնաժողովներում և պատահական չէ, որ ԱՄՆ-ի նախագահներից մեկը՝ Վուդրո Վիլսոնը, ամերիկյան հանձնաժողովներն անվանել է «փոքր լեգիսլատուրաներ»:

ԱՄՆ-ում Կոնգրեսի նշանակությունը կարևորվում է ոչ միայն իր անդամների պրոֆեսիոնալիզմով, այլև քանակությամբ և իր կառուցվածքների բարդությամբ: Այս տեսանկյունից ամերիկյան Կոնգրեսը հանդիսանում է ամբողջությամբ հասուն ինստիտուտ: Ոչ մի բան այնքան լավ չի իլյուստրացնում Կոնգրեսի ինստիտուցիոնալ աճը, որքան հանձնաժողովների համակարգի միջոցով աշխատանքի բաժանումը: Հարկ է նշել, որ հանձնաժողովները օրենսդրի սիրտն են, քանզի բոլոր աշխատանքները՝ օրինագծերի քննարկում, քաղաքական որոշումների ընդունում, նախևառաջ, իրականացվում են հանձնաժողովներում: Քանի որ հանձնաժողովները Կոնգրեսում համարվում են ամենակարևոր որոշումների ընդունման կենտրոնները, այդ իսկ պատճառով ԱՄՆ-ում բոլոր օրենքները պետք է անցնեն հանձնաժողովներով, այլապես դրանք քննարկման դրվել չեն կարող:

Շատ դեպքերում Կոնգրեսի պալատները մանրամասնորեն չեն քննարկում իրենց առաջարկված օրինագծերը, այլ միայն հաստատում կամ վերափոխում են որոշումները, որոնք մինչ դա ընդունվել են հանձնաժողովների և ենթահանձնաժողովների կողմից: Օրինագծերի մոտ 90%-ը, որոնք երաշխավորվել են որևէ հանձնաժողովի կողմից, ընդունվում են Սենատի և Ներկայացուցիչների պալատի կողմից[6]:

Իսկ Մեծ Բրիտանիայում ընդդիմությունը, հանդես գալով որպես ոչ-որոշման կենտրոն, որպեսզի լավագույնս իրականացնի իր ծրագրերը, մասնակցի որոշումների ընդունման գործընթացին, կարող է դա անել՝ մասնակցելով մշտական (Standing committees) և հատկապես հատուկ հանձնաժողովների (Select committees) աշխատանքներին: Եթե առաջինները կատարում են առաջադրված օրինագծի հիմնական մանրամասնությունների ամբողջական վերլուծություն, ապա վերջիններս կենտրոնանում են ավելի նեղ մասնագիտական հարցերի քննարկման վրա:

Բրիտանական խորհրդարանում՝ որպես որոշման ընդունման կենտրոն, առանձնացված են հատուկ հանձնաժողովները, որոնք քննարկում են կոնկրետ օրինագծեր և չեն

հանդիսանում նեղ մասնագիտացված: Այդտեղ կարող են աշխատել այն խորհրդարանականները, որոնք ունեն մասնագիտական գիտելիքներ այս կամ այն ոլորտի մասին, որի վերաբերյալ օրինագիծը քննարկվում է տվյալ հանձնաժողովում: Այսպիսով, կարելի է խոսել խորհրդարանական հանձնաժողովներում խիստ ֆիքսված անդամության բացակայության մասին:

Մյուս կարևոր հարցը, կապված հանձնաժողովների հետ, դրանցում խորհրդարանականների, այսինքն որոշումների ընդունման կենտրոնների անդամության խնդիրն է:

Այսպես, ՀՀ օրենսդիր մարմնում մշտական հանձնաժողովներում պատգամավորները ընդգրկվում են իրենց դիմումի համաձայն, իսկ խմբակցության անդամները հանձնաժողովների կազմում ընդգրկվում են խմբակցության ներկայացմամբ: Հանձնաժողովներում խմբակցություններին տեղեր են հատկացվում նրանց թվաքանակի համամասնությամբ, այսինքն՝ «հանձնաժողովի կազմը պետք է արտահայտի խմբակցությունների, պատգամավորական խմբերի և դրանց կազմում չընդգրկված պատգամավորների թվական հարաբերակցությունը»[7]: Այս սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ ընտրություններից հետո, երբ ժողովուրդը կատարում է իր ընտրությունը, խորհրդարանում ձևավորվում են քաղաքական ուժեր, որոնք, բնականաբար, պետք է կարողանան ձևավորել կառավարություն, իսկ հետագայում նաև այդ ծրագրերի կատարման շրջանակներում ապահովեն համապատասխան օրենսդրական դաշտը: Այդ է պատճառը, որ մեր հանձնաժողովներում քաղաքական ուժերի դասավորությունը նույնպիսի թվական համամասնություններ է ընդգրկում, ինչպիսին որ կան քաղաքական ուժերում: Որպես քաղաքական ներկայացուցչության գլխավոր սկզբունք՝ համամասնությունը համագործակցային դեմոկրատիայի բնորոշ գծերից է, որի գլխավոր գործառույթն անմիջականորեն կապված է որոշումների ընդունման հետ: Յու. Շտայները այսպես է սահմանում համամասնական մոդելը. «Բոլոր խմբերը որոշումների մշակման վրա ազդեցություն են գործում ըստ իրենց թվաքանակի համամասնության»[8]:

Արտասահմանյան երկրների օրենսդիր մարմինների հանձնաժողովների անդամները նույնպես (որպես կանոն) նշանակվում են խորհրդարանական խմբակցությունների համամասնական ներկայացուցչության հիմքի վրա: Փաստորեն, խմբերն իրենք են որոշում հանձնաժողովների կազմը: Խոսքը վերաբերում է նաև Ֆրանսիային: Այստեղ նույնպես պատգամավորն իրավունք ունի լինելու միայն մեկ մշտական հանձնաժողովի անդամ, սակայն իրավունք ունի ներկա գտնվելու մյուս հանձնաժողովների նիստերին: Մշտական հանձնաժողովներում պատգամավորներ և սենատորներ նշանակելու դեպքում խմբակցությունները ելնում են 2 հիմնական չափանիշներից. առաջինը և ամենաէականը՝ խորհրդարանական աշխատանքի ստաժը, երկրորդը՝ պատգամավորի կամ էլ սենատորի ցանկությունը: Ֆրանսիական խորհրդարանում արդեն ավանդույթ է դարձել, որ երիտասարդ կամ էլ առաջին անգամ ընտրված սենատորը ավելի շուտ կհայտնվի մշակույթի կամ էլ հատուկ խնդիրներով հանձնաժողովի կազմում, քան արտաքին գործերի հանձնաժողովում, պաշտպանության և զինված ուժերի հանձնաժողովում կամ էլ ֆինանսային, բյուջետային վերահսկողության և տնտեսական հանձնաժողովում:

Ստորին պալատի Կանոնակարգն ամրագրում է, որ պատգամավորը, որը դուրս է եկել խորհրդարանական խմբից, որի կազմում նա գտնվում էր այդ հանձնաժողովում նշանակվելու ժամանակ, ինքնաբերաբար դադարում է դրա անդամ լինել: Այսպիսով, խմբերը որոշ առումով հանդիսանում են հանձնաժողովում իրենցտեղերի սեփականատերեր: Այս կամ այն մշտական հանձնաժողովին պատկանելը ենթադրում և դրա հետ միասին կարևորում է խորհրդարանականի մասնագիտացումը օրենսդիր գործունեության որոշակի ոլորտում: Դրանով է բացատրվում այն փաստը, որ սենատորները և պատգամավորներն

իրենց մանդատի ողջ ընթացքում շարունակում են մասնակցել նույն մշտական հանձնաժողովի աշխատանքներին: Սակայն դրա հետ միասին չի բացառվում սենատորի կամ էլ պատգամավորի անցումը մի հանձնաժողովից մյուսը: Այսպիսի անցումը կարող է լինել ինչպես ժամանակավոր (օրինակ, երբ խորհրդարանականը ցանկանում է մասնակցել այն օրինագծի վերանայմանը, որն ուղղարկված է մի հանձնաժողով, որի անդամ նա չի հանդիսանում), այնպես էլ մշտական (հատկապես, երբ սենատորը կամ էլ պատգմավորը որոշում է փոխել իր մասնագիտացումը):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ֆ. Բալլանի և Դ. Մեսսաժի «Նիստը բացված է. Ազգային ժողովի կուլիսներում» գիրքը, որտեղ անդրադառնում են նաև Ֆրանսիայի ստորին պալատի մշտական հանձնաժողովների քաղաքական բնութագրությանը: Որպես որոշումների ընդունման կենտրոններ՝ նրանք կարևորում են Ֆինանսների և Արտաքին գործերի հանձնաժողովները: Եթե ոչ բոլորի, ապա շատ պատգամավորների երազանքն է հանդիսանում Ֆինանսների, տնտեսության հիմնական խնդիրների հանձնաժողովը: Այն ամենաազդեցիկն է համարվում, քանի որ դիտվում է որպես հուսալի հզոր ցատկահարթակ՝ կառավարությունում հետագա աշխատանքների համար: Դրա վառ ապացույցն է այն, երբ 1981թ. իշխանության եկան ձախ ուժերը, 11 սոցիալիստներ և կոմունիստներ, որոնք այդ հանձնաժողովի անդամներ էին նախկին լեգիսլատուրայի ժամանակ, ստացան նախարարական պորտֆելներ: Բնական է, որ երիտասարդ, վերջերս ընտրված պատգամավորները հազվադեպ են դառնում դրա անդամներ: Ձևավորված ավանդույթի համաձայն՝ նրանք պետք է նախ իրենց դրսևորեն այլ հանձաժողովներում:

Իսկ Գերմանիայում խմբակցությունները հանձնաժողովներ ուղարկում են առավելապես այն պատգամավորներին, որոնց մասնագիտությունը համապատասխանում է պահանջվող հանձնաժողովին: Դրա համար էլ հանձնաժողովները հանդիսանում են մասնագետների «փոքր խորհրդարաններ»: Բունդեսթագում հատուկ նշանակություն ունի բյուջետային հանձնաժողովը: Դրա իրավասությունների շրջանակը նրան տալիս է կենտրոնական դիրք: Այդ պատճառով էլ դրա նախագահը ավանդաբար միշտ ամենամեծ ընդդիմադիր խմբակցությունից է: Սրանով կյանքի է կոչվում այն գաղափարը, որ բյուջետային հանձնաժողովը դա խորհրդարանական վերահսկողության գործիք է և մարմին, որը կառավարության հետ հարաբերություններում անկախ է: Որպես որոշման կենտրոն՝ բյուջետային հանձնաժողովը հանդիսանում է գերհանձնաժողով, քանի որ այն մասնակցում է բոլոր օրինագծերի և ակտերի վերանայմանը, որոնք առաջիկա ֆինանսական տարում կամ էլ հաջորդ տարիներին կպահանջեն ծախսեր: Բյուջետային հանձնաժողովում քննարկվում են գրեթե բոլոր օրինագծերը՝ կապված կապիտալի ներդրման հետ: Բյուջետային հանձնաժողովի հիմնական խնդիրներից մեկը տարեկան ֆինանսական պլանի վերամշակումն է, որը կառավարությունը ներկայացնում է Բունդեսթագին: Հենց այս հանձնաժողովում են առաջին ընթերցման ժամանակ սկզբունքային հարցերը լուծվում:

Խորհրդարաններում, որպես որոշումների ընդունման քաղաքական կենտրոններ, կարևորվում են հատկապես պատգամավորական խմբերն ու խմբակցությունները, որոնց ներկայացուցիչներից էլ ձևավորվում են հանձնաժողովները: Խմբերն ու խմբակցությունները ստեղծվում են համատեղ գործունեության և ընդհանուր դիրքորոշման արտահայտման համար: Խմբակցությունների դիրքորոշման հիմքում, որպես կանոն, ընկած է նույնանուն կուսակցության կամ դաշինքի դիրքորոշումը, մինչդեռ խմբերն իրենց ընդհանուր դիրքորոշումները սահմանում են խորհրդարանում ձևավորման ընթացքում, իսկ ռազմավարական որոշումներ ընդունելիս հենվում են հնարավոր ռեսուրսների կանխավ գնահատականների վրա: Այսօր ընդունվող ռազմավարական որոշումների հիմնական առանձնահատկությունը հանդիսանում է այն, որ դրանք իրենց պետք է դրսևորեն որոշ ժամանակ

անց, երբեմն էլ՝ բավականին ժամանակ հետո: Սովորաբար կուսակցության համար ռազմավարական կառավարումը կապվում է խորհրդարանական ընտրությունների ժամանակահատվածի հետ[9]: Կարևոր է նշել, որ, որպես որոշումների ընդունման կենտրոններ, պատգամավորական խմբերի և խմբակցությունների դերը հատկապես կարևորվում է քաղաքական գծի մշակման և քաղաքականության կերտման (policy making) գործընթացում: Քաղաքականության կերտման գործընթացը հանդես է գալիս որպես քաղաքական խմբերի, կառույցների, կազմակերպությունների միջև շահերի բախման և համադրման արդյունքում քաղաքական գծի մշակման գործընթաց (դեմոկրատական ռեժիմի պայմաններում դա տեղի է ունենում հիմնականում խորհրդարանի շրջանակներում, սակայն անցումային երկրներում ավելի մեծ է գործադիր իշխանության դերը:) Դրա հետ միասին խմբակցությունների քանակը որոշիչ դեր է խաղում այն բանում, թե որ հանձնաժողովում և քանի պատգամավորով այն կներկայացվի:

Այսպես, պատգամավորը, որը հանդես է գալիս «միայնակ-մարտիկի» դերում ինչ-որ հարցի կապակցությամբ, ցանկության դեպքում էլ չի կարող ինքնուրույն իր կողմը հավաքագրել անհրաժեշտ քանակությամբ խորհրդարանի անդամների՝ հարցի դրական լուծման համար, քանի որ քվեարկության ժամանակ որոշիչ ձայնը պատկանում է առկա խմբակցությունների ղեկավարությանը, հետևաբար նրանք էլ հանդիսանում են որոշումների ընդունման գլխավոր կենտրոնները պառլամենտում:

Որոշումների ընդունման քաղաքական կենտրոնների տեսանկյունից հետաքրքիր պատկեր է Կոնգրեսում: Ներկայացուցիչների պալատի հիմնական կուսակցական լիդերները և հետևաբար որոշումների ընդունման քաղաքական կենտրոնները հանդիսանում են խոսնակը, կուսակցական մեծամասնության լիդերը, մեծամասնության «մտրակը», փոքրամասնության լիդերը և փոքրամասնության «մտրակը»: Չնայած, համաձայն Սահմանադրության, խոսնակը, որը համարվում է Պալատի ամենակարևոր պաշտոնը, ընտրվում է ամբողջ պալատի կողմից, բայց գործնականում նա հանդիսանում է մեծամասնության կուսակցության ներկայացուցիչը: Նա միաժամանակ և՛ մեծամասնություն կազմող կուսակցության լիդերն է, և՛ ամբողջ պալատի նախագահը: Ու թեև ակնկալվում է, որ խոսնակը որպես նախագահ անաչառ կլինի, բայց որպես կուսակցական ղեկավար նաև ակնկալվում է, որ նա իր իշխանությունը կօգտագործի իր կուսակցության հովանավորած օրենսդրությունն անցկացնելու համար: Նախ նշեմ, որ կոնգրեսականները և սենատորները Կոնգրեսում ընտրվելուց հետո մեխանիկորեն միանում են դեմոկրատական կամ էլ հանրապետական կոկուսին: Հենց այդ կուսակցական կոկուսներն են ընտրում պալատների կուսակցական լիդերներին և դրանից ելնելով՝ կարող ենք ասել, որ որոշումների ընդունման քաղաքական կենտրոններ հանդիսացող կուսակցական կոկուսները առաջնային դեր ունեն Կոնգրեսում:

Սենատում ամենակարևոր պաշտոնը և, հետևաբար, որոշումների ընդունման քաղաքական կենտրոնը՝ դա կուսակցական մեծամասնության լիդերն է, որը հանդիսանում է նաև մեծամասնության կուսակցության կոկուսի լիդերը: Նրա դերը համեմատվում է Ներկայացուցիչների պալատի խոսնակի դերի հետ: Այդ պաշտոնը պատկանում է ԱՄՆ-ի վիցե-պրեզիդենտին, բայց քանի որ նա չի կարող պարբերաբար ներկա գտնվել նիստերին, ապա կա փոխարինող (president pro tempore), որն էլ նախագահում է Սենատում վիցե-պրեզիդենտի բացակայության ժամանակ: Սենատը նույնպես ունի կուսակցական «մտրակներ», որոնց ազդեցությունը, սակայն, այնքան էլ մեծ չէ, որքան Ներկայացուցիչների պալատում:

Որոշումների ընդունման գործընթացը կախված է դրանում գործող կուսակցություններից: Ինչպես գիտենք, կուսակցությունները ներկայացնում են ժողովրդի շահերն օրենս-

դիր մարմնում և այդ առումով հետաքրքիր է ուսումնասիրել միջավայրի ազդեցությունը քաղաքական կուսակցությունների կողմից որոշումների ընդունման վրա: Փաստորեն, միջավայրը հանդես է գալիս որպես որոշումների ընդունման վրա ազդեցության կենտրոն:

Ընդհանրապես, միջավայրի ազդեցությունը կուսակցությունների կողմից ընդունված որոշումների վրա կարող է հասնել պետական իշխանության մարմիններին, եթե կուսակցությունը կամ իշխող է, կամ ներկայացված է իշխանության մարմիններում: Ազդեցության ճանապարհին կա երեք հանգուցակետ, որոնց խզման դեպքում մեծ չափով կարող է խաթարվել միջավայրը` որոշման իշխանության կենտրոն կապը: Առաջինը` կուսակցության շարքային անդամների և ոչ կուսակցականների միջև եղած կապն է, երկրորդը` կուսակցության շարքային անդամների և կուսակցական վերնախավի միջև եղած կապն է, և երրորդ` կուսակցական վերնախավի և իշխանության մարմիններում նրա ներկայացուցիչների կամ դաշնակիցների միջև եղած կապն է[10]: Կապն ավելի շուտ խզվում է կուսակցության շարքային անդամների և վերնախավի միջև, որը առաջացնում է օլիգարխիկ միտումներ, և որոշումների ընդունման ժամանակ կուսակցության լիդերը և նրա առավել մտիկ կուսակիցները սկսում են հանդես գալ որպես որոշման մենատիրական կենտրոն: Նախկին ԽՍՀՄ-ը և «սոցիալիստական ճամբարի» երկրներն ասվածի վառ ապացույցն են, սակայն արևմտյան ժողովրդավարական երկրներում նույնպես համարյա ամենուր նկատելի է միևնույն միտումը: Հարկ է նշել, որ համատեղ որոշումների ընդունումն է ստեղծում համեմատաբար բարենպաստ հոգեբանական կլիմա, այլ ոչ թե վերևից «իջեցված» հրամանների կատարումը:

Արտաքին միջավայրի կարևոր բաղկացուցիչներն են հանդիսանում մշտական կոնտրագենտները, որոնք ուրույն կերպով մասնակցում են որոշումների ընդունմանը: Դրանց շարքին են դասվում` կառավարող էլիտայի ընտրվող (պատգամավորներ) և նշանակվող (չինովնիկներ, պետական բյուրոկրատիան) մասը, հզոր բիզնես-կորպորացիաները, հասարակական կարծիքը, քաղաքական ընդդիմությունը, քաղաքական կուսակցությունները, ԶԼՄ-ները (ներառյալ լրատվամիջոցների սեփականատերերը և գովազդատուները), փորձագիտական-ակադեմիական շրջանակները, քաղաքացիական և միջազգային կառույցվածքները: Կոնտրագենտների կարգավիճակի ամրապնդումը պայմանավորված է նրանով, որ նրանց դիրքորոշումները և շահերը կարող են ոչ միայն ազդել հասարակական նպատակների և պետության գործունեության կողմնորոշիչների վրա, այլև որոշակի պայմաններում փոխել դրանք: Դրա համար էլ, պատկերացումներն այն մասին, որ պետությունը միշտ իրականացնում է համընդհանուրի շահերը, չի համապատասխանում իրականությանը:

Քանի որ արդեն անդրադարձանք միջավայրին` որպես որոշումների ընդունման վրա ազդեցության կենտրոն, ապա նշեմ, որ որոշումների ընդունման գործընթացն անմիջականորեն առնչվում է որոշումների վրա ազդելու հիմնախնդրի հետ: Ազդեցության հնարավորություն ունեն ոչ միայն որոշում ընդունելու իրավասու անձիք, այլև այն անձինք, որոնք իրավասություն չունեն, սակայն ունեն համապատասխան ունակություններ և բավականաչափ ներգրավված են որոշումների ընդունման գործընթացում: Խոսքը վերաբերում է խորհրդատուներին և փորձագետներին, որոնք անվանական, ֆորմալ իշխանություն չունենալով հանդերձ` շատ հաճախ ունեն իրական իշխանություն, որը երբեմն ավելի մեծ է, քան անվանական (նոմինալ) իշխանությունը: Ինչպես քաղաքական ցանցերի տեսաբաններ Նոուքը և Քուքլինսկին, այնպես էլ ամերիկյան քաղաքագետ Ֆրանկելը գտնում է, որ տվյալ դեպքում կարելի է խոսել որոշման ընդունման «կենտրոնի» և «ծայրամասի» մասին: «Ծայրամաս» ասելով՝ նա հասկանում է «կենտրոնի» շրջապատը, որը չունի իշխանություն, սակայն ունի ազդեցություն: Ըստ Ֆրանկելի` ազդեցությունը

նշանակում է որոշման ընդունման գործընթացին մասնակցություն առանց պաշտոնական քայլեր կատարելու իրավունքի[11]:

Ընդհանրապես ամբողջ աշխարհի՝ հատկապես ԱՄՆ-ի օրենսդիր մարմնում, որպես որոշումների վրա ազդեցության կենտրոն, վճռական դեր են խաղում հենց փորձագետները, քանզի նրանք են մանրամասն քննում օրենսդրական նախաձեռնությունները և տրամադրում դրանց վերաբերյալ անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը: Որպես արդյունավետ փորձագիտական ծառայության օրինակ՝ կարող է լինել ԱՄՆ-ի Կոնգրեսի Հետազոտական ծառայությունը, որի դերը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում անգնահատելի է:

Այսպես, որպես որոշումների վրա ազդեցության յուրօրինակ կենտրոններ, դիտարկվում են հետազոտական կենտրոնները (think tank-երը), որի գաղափարն առաջին անգամ առաջ քաշեց Հերման Կանը: Դրանցում էլ ձևավորվում է նույն հայացքներով մարդկանց թիմ: Այսինքն, ստացվում է, որ այդ համակարգը հավաքագրում է ոչ միայն փորձագետների, այլև փակում է առանցքային տեղեկատվական հոսքերը, որոնք հայտնի են միայն նրանց: Սրա արդյունքում էլ ստեղծվում է միասնական տեսակետ, որն էլ ազդում է ինչպես քաղաքական գործիչների, այնպես էլ զանգվածների գիտակցության վրա: Ի տարբերություն ակադեմիական հաստատությունների՝ think tank-երի աշխատանքը չպետք է սահմանափակվի միայն հոդվածներ գրելով, այլև պետք է ունենա ուսուցողական և էվրիստիկական արդյունք:

Ինտելեկտուալ ծառայությունների շուկայում մրցակցությունը բնական երևույթ է, դրա համար էլ անխուսափելիորեն տեղի է ունենում մրցություն հովանավորների, մամուլի ուշադրության, քաղաքական գործիչների մոտ մուտք ունենալու և այլնի համար: Այս խմբերից յուրաքանչյուրը հարկադրված է փնտրելու իր «որմնախորշը» (գիտական և քաղաքական) և մրցել՝ ընդունվող որոշումների վրա ազդեցություն գործելու համար: Ցանկացած «ուղեղային կենտրոն», որը հավակնություններ ունի ազդելու քաղաքական վերնախավի վրա, պետք է իր հետազոտությունների ռազմավարությունը կառուցի այնպես, որ ճանաչված լինի քաղաքական գործիչների, դիվանագետների, կուսակցական բյուրգի գագաթին գտնվողների, չինովնիկների, գործարար մարդկանց շրջանակներում: Պատահական չէ, որ «գաղափարների շուկայում ծանր մրցակցությունը հանգեցրեց նրան, որ շատ գիտնականներ սկսեցին ուղեղային կենտրոնները դիտարկել որպես շահերի խմբերի տեսակներից մեկը, որը նպատակ ունի ազդելու հասարակական քաղաքականության վրա»[12]: Եվ հենց որոշումների ընդունման կենտրոնների մոտ մուտք ունենալն էլ գիտնականների համար համարվում է ազդեցության ամենաբարձր ձևերից մեկը:

Մյուս դերակատարները, որոնք մեծ ազդեցություն ունեն քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա, դրանք այն բարձրաստիճան պաշտոնյաները, խորհրդականները և օգնականներն են, որոնք ունեն ազդեցության մեծ ռեսուրսներ և մուտք դեպի Նախագահը: Բերենք ԱՄՆ-ի օրինակը, Ջ. Բուշին մոտ գտնվողներից էր իր ադմինիստրացիայի ղեկավար Է. Քարդին, որին դիտարկում էին բոլոր տեսակի որոշումների ընդունման գլխավոր մասնակից: Նրան բնութագրում էին որպես առաջին և վերջին մարդը, ում Նախագահը տեսնում էր ամեն օր (իր կնոջից՝ Լաուրայից բացի): Ինչպես ասում էին ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաները. «Նա Նախագահի հետ է ողջ ժամանակ, դրա համար էլ նա լսում և տեսնում է այն, ինչը լսում և տեսնում է Նախագահը»[13]:

Խորհրդարաններում մյուս ազդեցության կենտրոններն՝ աշխատակազմերն են, որոնց մաս են կազմում տարբեր տեսակի վարչությունները, ստորաբաժանումները և այլն:

Ամբողջ աշխարհում, հատկապես ԱՄՆ-ում, հասարակության և կառավարության փոխգործողություններն ապահովում են, այսպես կոչված, շահերի կամ էլ ճնշման

խմբերը, որոնք էլ հանդիսանում են որոշումների վրա ազդեցության ամենակարևոր կենտրոնները և ունեն մեծ ռեսուրսներ՝ իշխանության վրա ազդելու համար: Այդպիսի ռեսուրսներ կարող են լինել նրանց տնտեսական և ֆինանսական հնարավորությունները, կարևոր տեղեկատվության տիրապետումը և այլն: Կոնգրեսի վրա լոբբինգ իրականացնող խոշոր ճնշման խմբերից են՝ արհեստակցական միությունները, կորպորացիաները («Մոբիլօիլը», «Ջեներալ Մոթորսը»), բիզնես խմբերը, որոնցից ամենահզորներն են՝ 1. «Արդյունաբերողների ազգային ասոցիացիան», 2. «Ամերիկյան առևտրի պալատը», 3. «Բիզնեսի կլոր սեղանը», ինչպես նաև ազգային լոբբինգ իրականացնող խմբերը, մասնավորապես՝ հայկական, հրեական, հունական, որոնք մուտք ունեն Կոնգրեսի անդամների մոտ: Նման քաղաքական ենթահամակարգի (policy subsystem) շրջանակներում ձևավորվում են բիզնեսի, քաղաքական գործիչների և պետական կառավարիչների միջև փոխադարձ աջակցության փակ համակարգեր, որոնք հիմնվում են ոչ միայն պաշտոնական, այլև ստվերային շփումների վրա:

Հասարակական շահերի հետ կապված՝ շահերի խմբերի գործունեության խնդիրը կայանում է նրանում, որ հավակնելով արտահայտել ամբողջ հասարակության շահերը՝ այդ խմբերը կամ որոշումների վրա ազդեցության կենտրոնները չեն ընտրվում հասարակության կողմից: Բացի դա, շահերի խմբերը կատարում են նաև միջնորդի դեր քաղաքացիների և պետության միջև՝ ներկայացնելով սոցիալական, ազգային, կրոնական և այլ տիպի շահեր: Մասնակցելով շահերի խմբերի գործունեությանը՝ քաղաքացիները քայլ են կատարում սոցիալական ակտիվությունից դեպի քաղաքական ակտիվություն:

Ուղիղ լոբբինգ իրականացնելն իրենից ներկայացնում է փորձ՝ ազդելու կառավարության և օրենսդիրների կողմից որոշումների ընդունման գործընթացի վրա, և հենց Կոնգրեսի անդամների մեծամասնության համար էլ (ինչպես նաև լոբբիստների համար) հանձնաժողովները հանդիսանում են ճնշման կիրառման կենտրոնատեղին կամ թիրախը:

Հատկապես վերջին տարիներին մեծացել է տարբեր ճնշման խմբերի կողմից կոալիցիայի ստեղծման կարևորությունը՝ միասնական լոբբիստական գործողություններ կատարելու և իրենց ազդեցությունը որոշումների ընդունման գործընթացի վրա մեծացնելու նպատակով: Այսպիսի համատեղ գործողությունները ցույց են տվել իրենց բարձր արդյունավետությունը: Ճնշման խմբերը, որոնք ունեն հակադիր շահեր, երբեմն կազմում են ժամանակավոր կոալիցիաներ՝ ընդհանուր նպատակների հասնելու համար: Ճնշման խմբերն իրականացնում են ներկայացուցչական գործառույթ՝ ներկայացնելով շատ ամերիկացիների, ինչպես նաև ԱՄՆ-ում մեծ համայնք ունեցող այլազգիների շահերը: Հաշվի առնելով նրանց ներկայացուցչական գործառույթը՝ շատերը ճնշման խմբերն անվանում են Կոնգրեսի 3-րդ պալատ (Սենատից և Ներկայացուցիչների պալատից հետո): Ազդեցության այս կենտրոնները հնարավորություն են ընձեռում իրենց անդամների և պաշտոնյաների միջև շփմանը: Նրանցից շատերը խոստովանում են, որ ճնշման խմբերը հանդիսանում են մասնագիտացված և մանրակրկիտ տեղեկատվության թանկարժեք աղբյուր: Շփման գործընթացը, սակայն, չի հանդիսանում միակողմանի երթևեկությամբ փողոց: Հաճախ ճնշման խմբերը ստանում են կարևոր տեղեկատվություն պաշտոնյաներից, որն էլ նրանք տեղեկացնում են իրենց անդամներին: Այլ կերպ ասած, այդ խմբերն իրականացնում են հասարակական կարծիքի փոխհաղորդում: Արտահայտելով բնակչության այս կամ այն մասի տեսակետը որոշակի խնդրի վերաբերյալ՝ շահերի խմբերը պետական մարմիններին հնարավորություն են տալիս վարել ավելի արդյունավետ քաղաքական կուրս: Ճնշման խմբերի մյուս կարևոր գործառույթներից է այն, որ օգնում են վերահսկել այդ ճնշման խմբերի և պաշտոնատար անձանց գործունեությունը:

Ինչպես հայտնի է, ժամանակակից աշխարհում մարդիկ քաղաքականության

մասին տեղեկություններ են ստանում գերազանցապես ԶԼՄ-ներից կամ էլ շրջապատից, որոնք էլ իրենց հերթին դրա մասին տեղեկացել են ԶԼՄ-ներից: Դա նշանակում է, որ ԶԼՄ-ները (առաջին հերթին՝ հեռուստատեսությունը) ոչ միայն իրականությունն արտացոլող հայելի է, այլև հասարակական գիտակցության մեջ աշխարհի քաղաքական պատկերը ստեղծող գործիք, և այն հանգամանքը, թե ինչպես է հեռուստատեսությունն արտացոլում իրականությունը և ստեղծում պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, կախված է տեղեկատվական տարածության կառուցվածքից, որով էլ պայմանավորված է, թե ինչպես է տեղեկատվությունը հավաքվում, տարածվում, ընտրվում և ընկալվում:

Եվ քանի որ ԶԼՄ-ներին է պատկանում հասարակական կարծիքի ձևավորման առաջատար դերը, ապա արդյունքում վերջինս է ձևավորում քաղաքացիների վերաբերմունքը քաղաքական ինստիտուտների և գործընթացների վերաբերյալ: Այսպիսով, ԶԼՄ-ները կատարում են զանգվածների գիտակցության մեջ գաղափարական-քաղաքական կողմնորոշումների ներդրման դեր և հանդիսանում են քաղաքական որոշումների ընդունման ազդեցության կարևորագույն կենտրոններ:

Կարծիքի ձևավորման գործում մեծ նշանակություն ունի հետևյալ շղթան՝ ո՞վ է խոսում, ի՞նչ է ասում և որտե՞ղ է խոսում: Եվ ոչ մի տեղ այս շղթայում պատահականություններ հնարավոր չեն:

Փաստորեն, ինչպես տեսանք, պետական որոշումների, մասնավորապես՝ օրենքների ընդունումը իրականանում է տարբեր սոցիալական, քաղաքական, տնտեսական խմբերի, կազմակերպությունների և այլ քաղաքական դերակատարների շահերը, կարծիքները, պահանջները հաշվի առնելով: Դա հատկապես արտացոլվում է օրենսդիր իշխանության համակարգում, որտեղ ներկայացված են լինում տարբեր արժեշահային համակարգեր ունեցող քաղաքական ուժեր, որոնց անդամների պրոֆեսիոնալիզմով ու կոմպետենտությամբ, ձևավորված ավանդույթներով է պայմանավորված պառլամենտարիզմի զարգացումը՝ որպես դեմոկրատիայի կարևորագույն ինստիտուտի:

1. *Շահգելդյան Մ.* Քաղաքական որոշումների ընդունման կենտրոնները, Եր., 1996, էջ 7:
2. Տե՛ս *Rhodes R., Marsh D.* Policy Network in British Politics. A Critique of Existing Approaches.- Policy Network in British Government. Oxford, 1992, P. 10–13.
3. Տե՛ս *Сморгунов Л. В.* Сетевой подход к политике и управлению // Полис, 2001, N3. С. 107.
4. *Дегтярев А. А.* Методологические подходы и концептуальные модели в интерпретации политических решений (II) //Полис 2003, N2. С. 171.
5. Տե՛ս, նույն տեղում, էջ 171:
6. Տե՛ս *Колобов О. А.* Демократия в меняющемся мире. Нижний Новгород, 1995. С. 76.
7. ԱԺ Կանոնակարգ, Եր., 2002, հոդված 25:
8. Steiner Jurg. The Principle of Majority and Proportionality. British Journal of Political Science. 1971, N1.
9. Տե՛ս *Мейтус В. В., Мейтус В. Ю.* Политическая партия: стратегия и управление. Киев, 2004. С. 348.
10. Տե՛ս *Շահգելդյան Մ.* Քաղաքական որոշումների ընդունման կենտրոնները, Եր., 1996, էջ 11:
11. Տե՛ս Основы политологии. Учебное пособие // Под ред. О.А. Колобова, А.А. Корнилова, А.С. Макарычева, А.С. Сергунина. Нижний Новгород, 1994. С. 53.
12. *Макарычев А. С.* Идеи для политики. Нижний Новгород, 1998. С. 191.
13. *GoldsteinS.* A Powerful Player in the White House // www.philly.com

ЦЕНТРЫ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ В СИСТЕМЕ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ВЛАСТИ

Н.С. Степанян

Резюме

Сегодня в политической науке особое внимание уделяется механизмам принятия политических решений, т.е.:

1. кто являются акторами принятия решений;
2. как происходит процесс принятия политических решений;
3. какие факторы влияют на процесс принятия решений.

В рамках принятия решений нужно разделить следующие центры:

1. властные центры принятия решений;
2. центры решений;
3. центры, влияющие на принятие решений (группы интересов, бюрократия, крупные бизнесс-корпорации, СМИ, общественное мнение, эксперты, советники, мозговые центры, think-tanks, общественные организации…).

Основой для этого разделения является то, что и государственные органы, и различные общественно-политические организации являются центрами принятия решений, но первые имеют власть принимать государственные решения, а последние могут только влиять на процесс принятия решений.

Для представления различий этих центров мы в качестве примера рассмотрели законодательную власть, где взаимодействие центров принятия решений мы изучили с точки зрения политических сетей.

DECISION-MAKING CENTRES IN LEGISLATIVE BODY

N. Stepanyan

Summary

Today in political science a great deal of attention is being given to the decision-making mechanismes, that is

1. who are the actors of decision-making process
2. who take place the decision-making process
3. which factores can influence over the decision-making process.

In the framework of this article we have distinguished follow in decision-making process:

1. Decisions centres of power
2. Decisions' centres
3. Influence centres of decision-making (interest groups, bureaucracy, huge business-corporations, public opinion, mass media, experts, consultants, think-thanks, non-governmental organisations...).

The base of this distinction is follow: though the state bodies and many public and political organisations are centres of decision-making process, the first have decision-making power and the second can only influence upon the decision-making process.

For representation the distinction to this centres, we have used the model of legislative body, where the interaction between decision-making centres have studied from the viewpoint of political networks.

ԱԶԳԱՅԻՆ ԸՆՏՐԱՆՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Ա.Ս. Մկրտչյան

XIX դարի վերջի և XX դարի սկզբի Հայաստանի պատմությունն իմաստավորելիս՝ կարելի է նկատել, որ այս շրջանում կտրուկ վերելք է ապրում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը՝ պայմանավորված հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացմամբ: Դրան, ինչպես հայտնի է, նպաստեցին 1877–78թթ. ռուս-թուրքական պատերազմը և Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցի միջազգայնացումը: Այս կարևոր իրադարձությունները նոր հույսեր ներշնչեցին հայ ժողովրդին՝ անկախության և կորսված պետականության վերականգնման հետ կապված: Թուրքական կառավարության շարունակվող բռնաճնշումները ևս պարարտ հող հանդիսացան հայ ժողովրդի հոգեբարոյական հակազդեցության համար, որն էլ իր հերթին ծնունդ տվեց թուրքական իշխանությունների դեմ պայքարող հայկական տարբեր լեգալ և ոչ լեգալ խմբակների, կազմակերպությունների և կուսակցությունների:

Ակնհայտ է, որ մի ժողովրդի ազգային զարթոնքը և դրանով պայմանավորված ազգային հասարակության մեջ որոշակի գործընթացների առաջացումը անհրաժեշտաբար ենթադրում է ազգային «ընտրանու» (էլիտայի) առկայություն: Արդի քաղաքական գիտության մեջ գոյություն ունեն մի շարք սահմանումներ, որոնք բնորոշում են ընտրանի (էլիտա) հասկացությունը: Դրանցից են, օրինակ, իրենց գործունեության ոլորտում գնահատման բարձրագույն չափանիշ ստացած անձինք (Վ. Պարետո), բացառիկ մտավոր կարողություններով և պատասխանատվության զգացումով օժտված մարդիկ (Խ. Օրտեգա-ի-Գասսետ), «աստվածառզեշունչ», խարիզմատիկ անձինք (Զ. Ֆրոյդ), առավելագույն հարըստություն ունեցողներ կամ առավելագույն հեղինակություն վայելողներ (Հ. Լասսուել), իշխանական լիազորություններով օժտվածներ (Ա. Էտցիոնի) և այլն: Ելնելով նշվածից՝ հնարավոր է պնդել, որ քննվող ժամանակաշրջանում հայ ժողովուրդն ուներ ձևավորված էլիտա: Հայ ժողովրդի զավակները ակնառու հաջողությունների էին հասել հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի ամենատարբեր ոլորտներում ինչպես Թուրքիայում, Ռուսաստանում, այնպես էլ Պարսկաստանում, Եվրոպայում, Եգիպտոսում և այլուր:

Հարկ է նշել, որ հնչակյանները ևս ըմբռնել և արժևորել են ազգի հիմնախնդրի (հայ ազգի ազատագրում օտարի լծից և պետականության վերականգնում) լուծման գործում հայազգի մտավորականների, հասարակական-քաղաքական գործիչների, ազգային մարմինների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների դերը: Ավելին՝ հնչակյանները այդ դերի իրականացումը դիտում էին որպես ազգի առաջ վսեմ պարտականության կատարում: Ըստ Ա. Արփիարյանի՝ բոլորը՝ գրագետները, հարուստները, վաճառականները, պարտական են ազգին, քանի որ բոլորն էլ ձրիաբար սովորել են ազգի դպրոցներում, իրենց սիրտն ու հոգին մխիթարել ու զորացրել են ժողովրդի կառուցած եկեղեցիներում, և հիմա բոլորը պարտավոր են վարձահատույց լինել ազգին իրենց հնարավո-

րությունների սահմաններում և հարկ եղած դեպքում նաև ընդունեն քննադատություններ[1]: Սակայն Արփիարյանը այս խնդիրը միակողմանի չի դիտարկում: Այս կապակցությամբ նա նշում է. «Արդար ըլլալու համար ըսենք որ եթէ դրամական ուժը, մտքի զօրութիւնը հեռու մնացին անձնուէր գործողներէն յանցանքը միայն իրենցը չէր: Իրենք բավական հեռատես և կարող չի գտնուեցան ազգային դատին համար կեդրոն մը ստեղծելով ամբողջ հայութիւնը անոր շուրջը բոլորելու: Յեղափոխական կուսակցութիւններն ալ, կա՛մ աւելի ճիշդը անոնց վարիչներն ալ, ո՛չ միայն չուզեցին մօտենալ տաղանդի ու դրամի դասակարգերուն այլ և ըրին ինչ որ կարելի էր զանոնք իրենցմէ հեռացնելու համար»[2]: Նման մոտեցումը ընդունելի է թվում, քանզի, մեր ընկալմամբ, չի կարող ազգի մի մասը ունենալ միայն պարտականություն՝ առանց իրավունքների, և եթե հայ ժողովրդի մտավոր և նյութական ամբողջ ներուժն արդյունավետ չի օգտագործվել և չի ծառայեցվել ազգային շահերին, դրա պատասխանատուն ողջ ազգն է:

Ազգի ընտրանու կարևոր շերտ է համարվում նաև տվյալ ազգի ունևոր դասը, որը, տիրապետելով նյութական անհրաժեշտ միջոցների, կարող է անգնահատելի դեր կատարել ազգի հիմնախնդրի լուծման գործում: Քննվող ժամանակաշրջանում հայազգի գործարարներն ու արդյունաբերողները կարևոր տեղ էին զբաղեցնում Թուրքիայի և Ռուսաստանի տնտեսության մեջ՝ այդպիսով տիրապետելով հսկայական կապիտալի: Բավական է հիշատակել Բաքվի նավթարդյունաբերության մեջ հայերի ունեցած տեղն ու դերը: Այստեղ հարցն այն է, թե որքանով էր այդ կապիտալը ծառայում ազգի հիմնախնդրի լուծմանը:

Հնչակյանները գիտակցել և կարևորել են այդ դասի դերն ու նշանակությունը: Արժևորելով հայ ունևոր դասի կարևորությունը՝ Արփիարյանը գրում է. «Ընկերական արդի կազմակերպութեան մէջ ժողովրդի մը ունեւոր դասակարգերը իրեն զօրավիգներէն են. երբ անոնց խելացի աջակցութիւնը կը պակսի, յառաջադիմութիւնն ալ կը կաղայ…»[3]: Սակայն հնչակյանների գնահատականները հայ ունևոր դասերի ծավալած գործունեության մասին միանշանակ չեն: Այսպես, օրինակ, Սապահ-Գյուլյանի կարծիքով՝ հայ ժողովուրդը դժգոհելու իրավունք ունի Ռուսաստանի և Կովկասի «Հայ Կրեզոսներից», որոնք չեն կատարել իրենց պարտականությունը ազգի առջև, նյութապես չեն աջակցել այն չափով, որ չափով որ աջակցել են ուրիշ ազգերի հարուստները[4]: Ըստ Սապահ-Գյուլյանի՝ համեմատած արտասահմանի՝ Ամերիկայի, Եգիպտոսի, Ֆրանսիայի, Անգլիայի նշանավոր հայ բուրժուաների, որոնք գրեթե ոչինչ չեն տվել ազգին պատուհասած աղետի օրերին, Կովկասի և Ռուսատանի հայ հարուստները գոնե իրենց «փշրանքներից» որոշ բաժին տրամադրել են[5]: Նազարբեկյանը նույնպես գտնում է, որ հայ ունևորները իրենց ուժերի ներածին չափով չեն աջակցել ազգային հիմնախնդիրների լուծմանը: Նա նշում է, թե ինքն ամոթ է զգում հայ հարուստների համար, որոնք հանցավոր անտարբերությամբ անօգնական են թողնում հայ ժողովրդին ճակատագրական պահին, և օրինակ է բերում հույն Ավերովին և այլոց, որոնք միլիոններ են ներդնում ընդհանուր գործում[6]: Բացի այս, Սապահ-Գյուլյանի հաստատմամբ, նրանց համար հայկական խնդիր մեծ հաշվով գոյություն էլ չունի. «Պոլսոյ և Թիւրքիայի եղերաքաղաքների մէջ հաստատուած հարուստ տարրերը թուրք կառավարութեան դէմ ըմբոստանալու միտք անգամ չեն տածում: Իսկ արտասահմանի բուրժուա հայ տարրի համար Հայկական խնդիրը միայն այնքան գոյութիւն ունի, որքան մի «աստուածավախ քրիստոնեայ եւրոպացու», որ կարեկցում է «հայ քրիստոնեային» և նրան, հարկաւորուած դէպքում, ուղարկում է իր լումանէ»[7]: Դժգոհելով հանդերձ հայ հարուստներից՝ Սապահ-Գյուլյանը պատասխանատվությունը չէր դնում միայն նրանց վրա, այլ կարծում էր, որ. «Ազգային Մարմինները իրենք են, որ միջոցներ ձեռք պիտի առնեն եւ Հայ հարուստներին պարտաւորեցնեն, հարկադրեն՝ որ ինքնայոժար կերպով իրենց պարտականութիւնը կատարեն, որքան կարելի է բարձր չափով»[8]:

Հայ ունևոր դասի մասին Արփիարյանը գրում է, թե Թուրքիայի հայ հարուստները բաժանվում են երկու մասի՝ փոքրամասնություն, որոնց համար ազգին օգուտ բերելը եկեղեցուն նվեր տալն է կամ շենք կառուցելը, և մեծամասնությունը, որ ազգի համար ոչինչ չի անում: Ազգին օգուտ բերելու ճիշտ ճանապարհը նա տեսնում է «մտքի ու սրտի տէր մարդեր» պատրաստելու մեջ[9]: Անդրադառնալով բարեգործությանը՝ Արփիարյանը պնդում է, որ, երբ հայը ազգի համար բարեգործական, հոգևոր-կրթական բան է անում, ապա անպայման ակնկալում է գովեստ ու պատիվ, ու երբ մի փոքր հուսախաբ է լինում, անմիջապես բարկանում է, քենով լցվում ազգի հանդեպ: Դա, ըստ Արփիարյանի, չկրթված միտք, սիրտ ու հոգի ունենալու արդյունքն է: Բարեբախտաբար, նոր սերնդի ներկայացուցիչներից ոմանք առաջնորդվում են «բարիքը բարիքի համար» սկզբունքով[10]: Այդ իսկ պատճառով Արփիարյանը խորհուրդ է տալիս. «Չգործել ի ցոյցս մարդկան, այլ լռիկ պարտականութիւնը կատարելը ազգի մը բարոյական զօրութիւնն է»[11]: Արփիարյանն իր անհամաձայնությունն է արտահայտում նաև հայ հարուստներից բռնի միջոցներով և ահաբեկման ճանապարհով դրամի ձեռք բերման պրակտիկայի վերաբերյալ: «Հայաստանը, Հայ Դատը չարաչար կը տուժեն այս դրամական պահանջումներու հետևանք եղող ոճրագործութիւններէն», – գրում է նա[12]:

Բացի նյութական մեծ միջոցներ տիրապետող հայ ունևորների դասը արժևորելուց՝ հնչակյանները մեծապես կարևորել են նաև մտավոր ներուժ ունեցողների՝ մտավորականության դերն ու նշանակությունը ազգային խնդիրների լուծման գործում: Այս առիթով Սապահ-Գյուլյանը նշում էր. «Բացի հարուստներից մի ուրիշ տարր էլ կայ, որ ներոյժ աշխատանքի պիտի մղուի. դա մեր Կուսակցական մտաւորականութիւնն է: Ոչ – Կուսակցական Մտաւորականութիւնը մեր կեանքի մէջ եղած է, եւ է՛, մի ոչնչութիւն, մի խոշոր զերօ: Ոչ-Կուսակցական Մտաւորականութիւնից իրական օգուտ չը կայ, բացի վնասից: Նա կը մնայ միշտ կասկածելի, միշտ վտանգաւոր մի տարր՝ հէնց իր բնութեան համար»[13]: Ոչնչություն համարել մի ամբողջ ազգի մտավորականությանը, որը կուսակցական պատկանելություն չուներ, մեր կարծիքով, ընդունելի չէ: Ըստ մեզ՝ անուրանալի է հայ մտավորականության դերակատարությունը ազգային-ազատագրական պայքարի գաղափարական նախապատրաստման և ոգեշնչման գործում, երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության հարցում:

Գնահատելով հայ ազգի ունևոր դասի կատարած դերը՝ հարկ է շեշտադրել հետևյալը: Հայ հարուստներն ազգի առաջ իրենց պարտականությունը կատարում էին հիմնականում եկեղեցի կառուցելով կամ դպրոցներ հիմնելով, որը, ճիշտ է, փոքր գործ չէր, սակայն դա ազգի հիմնախնդրի դրական լուծման գործում էական ազդեցություն չէր կարող ունենալ: Նման գործելաոճը տարբեր արդյունքներ տվեց Հայաստանի տարբեր հատվածներում: Բանն այն է, որ Արևելյան Հայաստանում, որտեղ ամբողջ սրությամբ դրված չէր ազգային անկախության խնդիրը, հայ ունևորների կատարած բարեգործությունները որոշակիորեն նպաստում էին ազգային խնդիրների լուծմանը: Օրինակ՝ ազգային մեծ բարերար Մանթաշյանցի միջոցներով բազմաթիվ հայ մեծեր են կրթվել Եվրոպայում: Նմանօրինակ գործունեություն ծավալում էին նաև Թուրքիայի հայ հարուստները, և նրանց միջոցներով էլ շատ հայեր են ուսում առել: Սակայն Արևմտյան Հայաստանի պարագայում դա բավարար չէր, քանզի այստեղ ազգային ազատագրության հիմնախնդիրը վեր էր հառնել ամբողջ սրությամբ, և օրակարգի խնդիր էր՝ թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրումը: Ահա այս պարագայում հայ ունևոր դասի գործունեությունը բավարար չեղավ ազգային-ազատագրական խնդիրների լուծման հարցում:

Հայ ազգի հաջորդ կարևոր խավը, որը կարող էր էական դեր խաղալ ազգի հիմնախնդրի լուծման գործում, բազմաթիվ ազգային, հոգևոր, մշակութային և բարեգործական

մարմիններում և կազմակերպություններում ընդգրկված հայ ղեկավարներն ու առաջնորդներն էին, որոնք ղեկավարում էին հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, ազգային և մշակութային կյանքը:

Հնչակյանները՝ ըմբռնելով առաջնորդների դերն ու նշանակությունը, խոսում են մի շարք հատկանիշների մասին, որոնցով պետք է օժտված լինեն առաջնորդները: Այսպես, ըստ Սապահ-Գյուլյանի, առաջինը, որ պիտի ունենան բոլոր գործիչները, բացարձակ անձնուրացությունն է, ինքնանվիրումն ու զոհողությունը և այն, որ նրանք պիտի երևան եկած խնդիրներին նայեն ոչ թե սեփական քմահաճույքի և անձնական հաշիվների տեսակետից, այլ նրանց գործունեության չափանիշը պիտի լինի միմիայն գործը[14]: Հաջորդ կարևոր հատկանիշը, Սապահ-Գյուլյանի կարծիքով, հասարակական գործչի անշահախնդիր լինելն է: Արփիարյանն, իր հերթին, կարևորելով առաջնորդների դերը, գրում է. «Կիսակիրթ կամ՝ աւելի ճիշդ խօսելով, տակաւին նախնական կրթութեան մէջ առաջին քայլերն առնող մեզի պէս ժողովուրդ մը անշուշտ պէտք ունի զօրաւոր անհատներու որպէս զի իր ձեռքէն բռնելով առաջնորդեն իրեն»[15]: Սակայն պետք է ասել, որ միանշանակ չեն հայ առաջնորդների և պաշտոնյաների վերաբերյալ հնչակյանների տված գնահատականները: Մասնավորապես, հոգևոր գործիչների՝ պատրիարքների մասին Սապահ-Գյուլյանն ասում է, թե պատմությունը ցույց է տվել, որ օսմանյան կառավարողները պատրիարքներին և պատրիարքական հաստատություններին նայել են որպես իրենց անմիջական գործիքի և նրանց անգամ հայ ազգի կամքին հակառակ ստիպել են գործից հրաժարվել, երբ պատրիարքները դադարել են սուլթանների ցանկալի գործիքը լինելուց: Բացի այդ, ըստ Սապահ-Գյուլյանի, շատ է պատահել նաև, որ պատրիարքները հաճախ պաշտոնում մնացել կամ հրաժարվել են այդ պաշտոնից հենց հայ ազդեցիկների ու խմբակցությունների ցանկությամբ, որոնք գործել են իրենց սեփական ու դասակարգային շահերի տեսակետից ելնելով: Դրա հետ մեկտեղ, նա բարձր է գնահատում Խրիմյան, Վարժապետյան, Իզմիրլյան պատրիարքների գործունեությունը, որոնք, ունենալով ժողովրդի վստահությունը, շարունակել են իրենց գործունեությունը[16]:

Բացի հոգևոր գործիչներին քննադատելուց՝ Սապահ-Գյուլյանը բացասաբար է արտահայտվում նաև հայ էֆենդիների և թուրքական պետական պաշտոններ զբաղեցնող հայ պաշտոնյաների մասին՝ մեղադրելով նրանց թուրքերի ձեռքին գործիք դառնալու համար: Ըստ Սապահ-Գյուլյանի՝ հայ էֆենդիական դասը և թուրքական պետական պաշտոններ զբաղեցնողները պատմական այն պահերին, երբ հոսանքներ էին ստեղծվում և ամրապնդվում, սակավ բացառությամբ աջակցեցին «Իթթիհատին», մտան նրա շարքերը, դարձան նրա գործիքն ու թուրք իթթիհատականից ավելի մոլի իթթիհատական դարձան և վնասակար դեր կատարեցին[17]:

Մենք կարծում ենք, որ պետք է համաձայնել հնչակյանների հետ այն հարցում, որ շատ հայ ղեկավարներ ու թուրքական պետական պաշտոններ զբաղեցնող հայեր գրեթե չէին մասնակցում ազգային հիմնախնդիրների լուծմանը, սակայն դրա հետ մեկտեղ, ըստ մեզ, ընդունելի չէ նման մեղադրանք ներկայացնել հայության ամբողջ ղեկավարիչ մարմինների առաջնորդներին: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերոհիշյալ մարմիններն ու նրանց ղեկավարները նույնպես կրում էին օտարի լուծը, զրկված էին գործելու ազատությունից և ստիպված էին ենթարկվել տիրապետողների թելադրած օրենքներին: Բացի դրանից ՝ հարկ է անդրադառնալ, ըստ մեզ, մի շատ կարևոր հանգամանքի: Բանն այն է, որ եթե ցանկանում ենք, որ յուրաքանչյուր գործ ունենա իր դրական ավարտը և տա մեզ անհրաժեշտ արդյունք, ապա դրա համար կարևոր է, որ այդ գործի բոլոր մասնակիցները իրենց ակտիվ դերակատարությունն ունենան այդ գործընթացում: Խոսքն այստեղ ժողովրդի դերակատարության մասին է: Ժողովրդի դերակատարության

կարևորությունը գիտակցել է նաև Արփիարյանը: Նա հաստատում էր, որ բոլորի նպատակը պետք է լինի «պարտաճանաչ» ժողովուրդ ունենալը, և երբ կունենանք բավական չափով «կրթված» և «պարտաճանաչ» ժողովուրդ, այդ ժամանակ էլ ոչ մի հաստատություն՝ դպրոց, հիվանդանոց, եկեղեցի, չի կործանվի կամ վատ վիճակում հայտնվի[18]: Սակայն այս խնդրի կարևորության գիտակցումը բացակայում է հայերի մոտ. «Մենք Հայերս կարող չենք սա գաղափարին ընտելանալ թէ մարդն ալ դրամագլուխ մըն է և շատ պարագայներու մէջ նիւթական դրամագլխէն աւելի արդիւնաւոր»[19]: Դա, ըստ մեզ, չափազանց կարևոր հանգամանք է, բայց դրա հետ մեկտեղ, ակնհայտ է նաև այլ պարագա, այն է՝ ժողովրդի ինքնագիտակցության զարգացումն ուղիղ համեմատական է էլիտայի տարբեր շերտերի ծավալած քարոզչությանն ու գործունեությանը:

Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացման արդյունքում Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում առաջացան զանազան հայկական գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ, որոնք նպատակ ունեին պայքարելու օտար հարստահարողների բռնաճնշումների դեմ և հասնելու ազգային անկախության նվաճմանը: Չնայած այս կազմակերպությունները էական հաջողությունների չհասան, սակայն մեծ դեր կատարեցին ազգային ինքնագիտակցության արթնացման, հայկական խնդրի պրոպագանդման համար, որը հետագայում անհրաժեշտ հիմք հանդիսացավ առավել կազմակերպված մարմինների, այն է՝ քաղաքական կուսակցությունների ի հայտ գալու գործում:

Արդեն 1885թ. Վանում հիմնադրվեց Արմենական կուսակցությունը, 1887թ. Ժնևում՝ Հնչակյան կուսակցությունը, իսկ 1890թ. Թիֆլիսում՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը: Անդրադառնալով հայ իրականության մեջ կուսակցությունների առաջացման խնդրին՝ Սապահ-Գյուլյանը դա պայմանավորում էր ազգի առաջ ծառացած խնդիրներով. «Հասարակական մի այդպիսի մեծ խնդիր, որպիսին էր հայ կեանքի արմատական յեղափոխութեան գործը՝ անպատճառ իր ծոցից պիտի յառաջացնէր Կուսակցութիւններ, դա բնական էր եւ անխուսափելի: Ուրեմն մեր մէջ էլ երևան եկան Կուսակցութիւններ, որ յայտարար նշան էին մեր ազգային կեանքի կենսունակութեան: Կուսակցութեանց երևումը ապացոյց էր, որ հայերս էլ, թէև նորավարժ և սկսնակ, ընդունակ էինք հանրական գործերը յառաջ տանելու կուսակցական առողջ եւ փրկարար սկզբունքների վրայ յենուած պայքարով»[20]: Արփիարյանն իր հերթին, կարևորելով կուսակցությունների երևան գալը հայ իրականության մեջ, գրում էր. «Ամէն ժողովուրդ պզտիկ ըլլայ թէ մեծ, տկար կամ զօրաւոր իր ուժերուն կազմակերպութեամբն է, որ տնտեսական, քաղաքական, պատերազմական կռիւներու մէջ կ'ընդդիմադրէ հակառակորդին, եւ յաղթանակ կը յուսայ»[21]:

Խոսելով կուսակցությունների ծագման մասին՝ Նազարբեկյանը գրում է, թե մարդկության պատմությունը, շահերով իրար հակառակ դասակարգերի մղած կռիվների մի երկար շարք է: Մարդկությունը միշտ էլ իր հասարակական ձգտումներում հասարակության միջից առաջացած ուժերի իր արտահայտիչներն է ունեցել, և այդ արտահայտիչ ուժերի իդեալներն ու ձգտումները, այսինքն՝ աշխարհայացքն ու գործունեության ոգին հատուկ են ոչ թե իրենց, այլ այն դասակարգին, որի արտահայտիչներն են իրենք: Այդ արտահայտիչ ուժերը դառնում են իրենց դասակարգի շահերի պաշտպանները: Ահա այսպես են կազմվում քաղաքական կուսակցությունները, որոնք իրենց դասակարգի պատմական ձգտումների ու շահերի արտահայտիչներն են[22]: Հարկ է նշել, շարունակում է Նազարբեկյանը, որ միևնույն դասակարգը երբեմն ունենում է մեկից ավելի քաղաքական կուսակցություններ, որոնք, չնայած ձգտումների որոշակի տարբերություններին, միևնույնն է, գտնվում են նույն դասակարգի ընդհանուր ձգտումների ոլորտում: Հենց այդ ձգտումներն էլ արտացոլվում են կուսակցության ծրագրում, որը, ըստ նրա, ոչ թե այս կամ այն անհատի սեփական մտքի արդյունքն է, այլ դասակարգի ձգտումների ամբողջությունը[23]:

Անդրադառնալով կուսակցություններին և նրանց գործունեությանը՝ Սապահ-Գյուլյանը խոսում է մի շարք առանձնահատկությունների մասին՝ գրելով, թե քանի որ հասարակական կյանքը մշտապես զարգանում է, առաջադրում նոր երևույթներ, ուստի կուսակցություններն էլ պետք է իրենց շարունակական էվոլյուցիան ապահովեն, որպեսզի չդադարեն կյանքի արտահայտիչը լինելուց: Դրա համար անհրաժեշտ է, որ նրանք իրենց գործունեության մեջ ներառեն ծագած նոր խնդիրների բացատրությունները ու դրանց լուծման միջոցները[24]: Այդ ժամանակ, ըստ Սապահ-Գյուլյանի, չափազանց կարևոր է առաջնությունը տալ ոչ թե կուսակցական, այլ հասարակական շահին. «Այն կուսակցութիւնը որ հասարակական ընդհանուր շահի առաջ իր կուսակցական շահը կզերադասի՝ նա չէ այն քաղաքական կուսակցութիւնը որ հանրական դասակարգային իսկ, ծառայութիւն մատուցանելու կանչուած է» [25]: Դա, ըստ մեզ, ընդունելի մոտեցում է, քանզի կուսակցությունները առաջանում և գործունեություն են ծավալում հանուն հասարակության խնդիրների լուծման, և տրամաբանական է, որ նույն այդ հասարակության շահն էլ պետք է գերակայի կուսակցական շահին:

Կուսակցությունների մասին խոսելիս Սապահ-Գյուլյանը կարևորում է նաև հասարակության ակտիվությունն ու նրա շարքային անդամների նախաձեռնողականությունը: Այսպես, նա կարծում է, որ. «…ո՛չ մի կուսակցութեան չպատկանելը ո՛չ միայն քաղաքացիական առաքինութիւն չէ, այլև կատարեալ պարտազանցութիւն, յանցանք իսկ: Ընկերութեան մէջ ապրելով՝ ամէն անհատ պարտաւոր է թէ իր բաժին ծառայութիւնը հասարակութեան սպասարկութեան մէջ դնելու՝ իր գաղափարներով, ընդունակութիւններով, անհատականութեամբ եւ թէ որոշ կերպով ցոյց տալու իր ի՛նչ լինելը, ի՛նչ ցանկանալը»[26]: Դրա հետ մեկտեղ նա կարևորում է մի շարք սկզբունքներ, որոնցով պիտի առաջնորդվեն շարքային կուսակցականները: Այսպես, նա գտնում է, որ որքան էլ որևէ կուսակցություն հեղինակավոր անդամներ, ղեկավարներ ունենա, միևնույնն է, կուսակցության բոլոր անդամները պիտի որևէ խնդրի լուծման մեջ ուղղակի մասնակցություն ունենան: Ընդհակառակը, առաջնորդներին կուրորեն հետևելը չարիքներ կծնի, և հենց կուսակցության հավատարմությունն է պահանջում քննադատական մոտեցում խնդիրներին[27]: Բացի այս, մեզանում՝ քաղաքակրթության ասպարեզում նոր մուտք գործող ժողովրդի մեջ, այն մտայնությունը կա, որ կուսակցության բոլոր անդամները զանազան խնդիրների շուրջ պիտի նույն կարծիքներն ու մտքերն ունենան, եթե ոչ, ուրեմն կուսակցության մեջ հակասություններ կան, և ներդաշնակությունը խախտված է: Այդ տեսակետը հիմնովին սխալ է, և կուսակցության մեջ չպիտի լինի բացառապես ղեկավարող մարմին և ղեկավարվող հետևողներ[28]: Սակայն կան հարցեր, որոնց նկատմամբ անհրաժեշտ է միասնական մոտեցում. «Տաքտիկայի միութիւնը բացարձակապէս անհրաժեշտ է, որպէսզի բոլոր անդամներն էլ իրենց անհատական ոյժերը ի մի օդակելով՝ միանման ուղեգծով դիմեն դէպի այն նպատակները, որոնք յառաջանում են իրենց արդեն ընդգրկած սկզբունքներից: Գործունէութեան միութիւն յառաջացնողը Տաքտիկայի միութիւնն է» [29]: Սապահ-Գյուլյանի այս մոտեցումները, մեր կարծիքով, արդարացի են, քանի որ կուսակցության ներսում բազմակարծությունը, ղեկավար մարմինների և շարքային անդամների ակտիվությունն ու փոխադարձ վերահսկողությունը կարող են ծառայել միայն տվյալ կուսակցության զորացմանը:

Հայ իրականության մեջ կուսակցությունները ձևավորվելուց հետո սկսեցին բուռն գործունեություն ծավալել, որը տարբեր կերպ ընկալվեց հայ ժողովրդի կողմից: Այդ առիթով Սապահ-Գյուլյանը գրում էր. «Այլևս իրականութիւն է այն երևոյթը, որ հայ կեանքի իրական ղեկավարութիւնը բացառապես գտնւում է մեր ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ձեռքը. սրանք են ստեղծող, շարժող և յառաջ վարող մեքենան, լաւ՝ վատ, ուղիղ՝ սխալ: Կուսակցութիւնը, կուսակցական հաստատութիւնը դարձել է մեր կեանքի անհրաժեշտ տարրը, և

էն էլ տիրող, իշխող տարրը»[30]: Դրա հետ մեկտեղ նա մատնանշում է մի կարևոր առանձնահատկություն. «Մեր մէջ կուսակցութիւնները չէին կարող կանգնել օրինական հողի վրայ, որովհետեւ գործում էին այնպիսի երկրներում, ուր քաղաքական ազատութեան պայմաններ չկային, հետեւաբար քաղաքական հաստատութիւնների կարգի մէջ չէին կարող տեղ բռնել, ինչպէս ուրիշ տեղերում: Ուրեմն նրանք պիտի գործէին միայն Ոչ-Օրինական հողի վրայ, ու այդպէս էլ եղաւ»[31]:

Սակայն այդ ժամանակաշրջանի հայ իրականության մեջ կուսակցությունների գործունեությունը տարբեր կերպ ընդունվեց հայ ժողովրդի կողմից: Բանն այն է, որ քննվող ժամանակաշրջանում հայկական կուսակցությունները պայքար էին մղում ոչ միայն օտար տիրապետությունների դեմ, այլև բուռն պայքարի մեջ էին մտել միմյանց դեմ, որը չէր կարող բացասական արձագանք չունենալ հայ հասարակության մեջ: Այդ առիթով Արփիարյանն ասում է. «Մեր մէջ կուսակցութիւն բառը խորթ կը հնչէ. անձնական ատելութեան, շահախնդրութեան, անկրթութեան հոմանիշ կը նկատուի: Սակայն կուսակցութիւնը երբ գաղափարի, համոզումի համար է, մարդկութեան զարգացմանը կենսական պայմանն է: Գաղափարի կուսակցութիւններն են որք մտածել ու խորհիլ կը սորվցնեն»[32]: Սապահ-Գյուլյանն իր հերթին, խոսելով կուսակցությունների միջև պայքարի մասին, ասում է, որ երբ կուսակցությունների ներկայացուցիչները և նրանց պրոպագանդիստները միմյանց կազմակերպությունները որակում են սոսկալի ածականներով, ժողովուրդը շվարում է և չի հավատում, չի վստահում ոչ մեկին: Դրա համար էլ նա առաջարկում է կուսակցական պրոպագանդան առաջ տանել՝ հենվելով կուսակցական սկզբունքների և տակտիկայի վրա, որը տարբերվում է հակառակորդին բարոյապես սպանելուց և տապալելուց[33]: Սակայն Սապահ-Գյուլյանն ամբողջովին չի ժխտում կուսակցական պայքարի անհրաժեշտությունը, որի նպատակը նա դիտում է հանրային գործերի բարվոքումը, ժողովրդի շահերի պաշտպանությունը, հետևաբար այդ պայքարի շրջանակում էլ տվյալ կուսակցությունը պիտի գործի, ոչ թե նպատակ ունենա ոչնչացնել մյուս կուսակցությունները. «Պայքարել, դաւել, կէտ նպատակի դարձնել այլ կուսակցութեանց ոչնչացնելը – դա հասարակական, ժողովրդական ՈՃԻՐ է, որ ազգերին նոյնքան աղետաբեր է եղել, որքան նոյն ինքն ամենաանսանձ բռնակալութիւնը: Այդպէս է ցոյց տուել պատմութեան փիլիսոփայութիւնը»[34]:

Հարկ է նշել, որ հայկական կուսակցությունների միջև ընթացող պայքարը, միմյանց նկատմամբ կատարվող ահաբեկչությունները բացասաբար էին անդրադառնում ազգային-ազատագրական պայքարի վրա: Այն ոչ միայն ջլատում էր հայ ղեկավարիչ ուժերը, թույլ չէր տալիս միասնական հանդես գալ ընդհանուր թշնամու դեմ, այլև բացասական կարծիք էր ձևավորում հայ ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ թե՛ ներսում, թե՛ դրսում: Դա հնարավորություն էր ընձեռում թուրք սուլթանին հայկական կուսակցությունները Եվրոպայի աչքին ներկայացնել որպես տեռորիստական խմբերի, որոնք ոչ մի կապ չունեն ժողովրդական ցանկությունների և տրամադրությունների հետ, և բռնի ու անօրինական միջոցներով պայքարել այդ կուսակցությունների դեմ: Այդ պայքարը իր բացասական հետևանքներն էր թողնում նաև հասարակ ժողովրդի ընկալումներում, որը շփոթեցնում էր քաղաքականապես անզիտակ ժողովրդին: Դրա համար էլ հայ ժողովուրդը հայկական կուսակցություններից պահանջում էր վերջ տալ միմյանց նկատմամբ թշնամանքին և միասնաբար հանդես գալ թշնամու դեմ:

Հայկական կուսակցությունների միասնական ճակատով հանդես գալու խնդիրը կարևորել են նաև հնչակյանները, որոնք իրենց տեսակետներն են արտահայտել միության խնդրի շուրջ: Այդ առիթով Սապահ-Գյուլյանը գրում է. «Կուսակցական և քաղաքացիական առաքինութիւն է ճակատ առ ճակատ պայքարել իր հակառակորդ կուսակցու-

թիւնների և կուսակցականների դէմ. բայց է՛լ աւելի քաջութիւն է՛լ աւելի արիութիւն և ազնուութիւն է իր հակառակորդի հետ մի սեղանի շուրջ նստել և միատեղ խորհրդակցել այն բոլորի մասին, ինչ-որ Ընդհանրական Գործի շահը կպահանջէ»[35]: Վերլուծելով հայկական կուսակցությունների գործունեությունը՝ նա այն կարծիքն է հայտնում, որ տակտիկայի տեսանկյունից էլ դրանք իրար հետ ոչ մի ընդհանուր հասկացողություն չունեն: Մեկը չի ճանաչում Մեծ Հայք, ձգտում է լինել միայն բարեկարգիչ, առանց որոշակի ուղեգծի, մյուսը դրել է մասնակի, այսպես ասած, պարտիզանական կռիվների ռեժիմը, երրորդը ձգտում է ներքին ուժ ստեղծել միայն պրոպագանդայով, առանց ժողովրդին զինելու, չորրորդը ձգտում է մասսայական ապստամբության[36]: Ըստ Սապահ-Գյուլյանի՝ այդ ամենը չի խանգարում, որ հայկական կուսակցությունները համաձայնության գան և գործեն միասնական ճակատով. «Քաղաքական կուսակցութիւնները շատ լավ կարող են իրենց ուրոյն կազմակերպութիւնները պահել, կանգնել իրենց ղեկավարիչ սկզբունքների վրան անշեղ կերպով, և դրանք երբէք արգելք չեն, որ նրանք յեղափոխական տեխնիքական խնդիրներում և ձեռնարկներում իրարու հետ չհամերաշխին և կանխապէս ընդհանուր հասկացողութեան չգան՝ մի քանի էական խնդիրների մասին»[37]: Սապահ-Գյուլյանի կարծիքով՝ Տաճկահայաստանում գործող կուսակցությունների համար ընդհանուր համագործակցության հիմք կարող է ծառայել սուլթանական լծի խորտակումը, քանի որ այն բոլորի անմիջական գործն է, և դա էլ կարող է հիմք հանդիսանալ մերձեցման և համերաշխության համար, որքան էլ նրանց հեռավոր նպատակները տարբեր լինեն[38]: Նա գտնում էր, որ կան հարցեր, որոնց լուծման համար պետք է համախմբվեն բոլորը. «Ազգային կռուին բոլոր Կուսակցութիւնները հաւասարապէս պիտի մասնակցին՝ իրենց ույժերի ամբողջութեամբ: Մի դասակարգ չի կարող անտարբեր մնալ, չէզոքացած դիրք բռնել, երբ Ազգային գոյութեան պայքար է մղւում»[39]: Դրա հետ մեկտեղ, Սապահ-Գյուլյանը դեմ էր կուսակցությունների մեխանիկական միավորմանը, այն է՝ միավորում միայն այն բանի համար, որ բոլորն էլ հայկական կուսակցություններ են, և գտնում էր, որ այդ միավորումը պետք է լինի գաղափարական ընդհանրության հիմքի վրա. «Մի կուսակցութիւն մի ուրիշ կուսակցութեան հետ կարող է համաձայնել, համերաշխել, ո՛չ թէ ցեղայնութեան վրայ խնդիրը դնելով, այլ սկզբունքի, գաղափարի, – ծրագիրներն են որ կուսակցութիւնների իրարու մոտեցնում կամ հեռացնում են»[40]: Նմանօրինակ կարծիք էր հայտնում նաև Նազարբեկյանը: Ըստ նրա՝ երբ հասնում է ազգի՝ լծից ազատվելու պահը,հայտնվում են ամեն տեսակի՝ արժանավոր, անարժան, ինքնակոչ, կեղծ, անկեղծ հասարակական գործիչներ ու կուսակցություններ: Այդ ժամանակ ազգը միանգամից չի կարողանում նրանց ճիշտ ճանաչել ու զանազանել և պահանջում է միաձուլվել: Դա հասկանալի, բայց ոչ իրագործելի պահանջ է, քանի որ անհնար է արդարի ու մեղավորի, կեղծի ու անկեղծի միությունը, որը միայն երկպառակությունների կրերի և կվնասի գործին[41]: Դրա համար էլ Նազարբեկյանը ևս առաջարկում էր ազգային կուսակցություններին միավորվել գաղափարական ընդհանրության հիմքի վրա. « …Ճշմարիտ ու նպատակայարմար միութիւն կարող է լինել լոկ միանման ձգտումներ ու սկզբունքներ ունեցող անկեղծ մարմինների մէջ: Եթէ հայ կուսակցութիւններն այդպիսի մարմիններ չեն և կամ չեն կարող մէկ ընդհանուր տեսական ու գործնական ծրագրի վրայ միմեանց մէջ համաձայնութիւն կայացնել, – միութեան մասին խօսելն աւելորդ է»[42]: Կուսակցությունների միության խնդիրը կարևորում էր նաև Արփիարյանը. «Հայաստանի դատին հոգածութիւնը եթէ սակաւաթիւ անձերու պաշտպանութիւնը վայելէ միայն, չկրնար իր գոյութեան իրաւունքը պահպանել աշխարհի առջեւ: Երբ ազգային պահպանութեան կռիւը կը մղենք, յաջողութեան առաջին պայմանը հոծ միութեան մէջ փնտռելու ենք»[43]: Ինչպես Նազարբեկյանն ու Սապահ-Գյուլյանը, այնպես էլ Արփիարյանը կարծում էին, որ միության գործում շեշտը պետք է դնել գաղափարական ընդհան-

րության վրա. «Մեր իղձն է քաղաքական կռուանի վրայ գաղափարային միութիւն ստեղծել: Երբ ժողովրդի մը մէջ գաղափարի միութիւնը կը պակսի, անկարող է ան ուժով գործել և յաղթանակի յոյսով կռուիլ: Գաղափարներու շուրջը ազգային միաբանութիւն մը կը դիւրանայ երբ կանխակալ կարծիքները վանելով մեր մտքէն, իրողութիւնները ուսումնասիրելով լուսաբանուիլ ուզենք »[44]:

Մենք կարծում ենք, որ հայ կուսակցությունների՝ միասնական ճակատով հանդես գալը կարող էր լինել հայ ազգի հիմնախնդրի լուծման կարևորագույն երաշխիքը: Սակայն, ցավոք, պետք է փաստել, որ այդ միությունը հայ կուսակցությունների միջև այդպես էլ չկայացավ: Ճիշտ է, եղան փորձեր, սակայն այդ փորձերը զգալի արդյունք չապահովեցին: Ընդհանուր առմամբ համաձայնելով հնչակյանների՝ հայ կուսակցությունների միության մասին արտահայտած տեսակետներին, մենք կարծում ենք, որ հնչակյանները շատ հաճախ շփոթում էին բուն գաղափարը տակտիկական խնդիրների հետ: Այսպես, օրինակ, մի դեպքում Սապահ-Գյուլյանը գտնում էր, որ հայ կուսակցությունները չպետք է միավորվեն միայն այն բանի համար, որ դրանք հայկական կուսակցություններ են, մեկ այլ դեպքում գրում էր, որ բոլորն են պարտավոր մասնակցել ազգային գոյապայքարին: Վերջինս, մեր կարծիքով, ընդունելի է, քանզի այն իրադրության պայմաններում, որում գտնվում էր հայ ժողովուրդը, ազգապահպանության, ազգային անկախության և պետականության վերականգնման գաղափարները պետք է լինեին այն հիմնաքարը, որի շուրջ պիտի համախմբվեին բոլոր կուսակցությունները անկախ իրենց գաղափարական, աշխարհայացքային և ծրագրային տարբերություններից:

Այսպիսով, քննվող ժամանակաշրջանը նշանավորվում է ազգային-հասարակական կյանքի աշխուժացմամբ և ազգային ինքնագիտակցության զարգացմամբ: Այն իր հերթին մեծ ազդեցություն է թողնում ազգային-ազատագրական պայքարի վերելքի վրա: Տվյալ ժամանակշրջանում հայ ազգն ուներ ձևավորված և բավական ազդեցիկ էլիտա, որի ներկայացուցիչներն ազդեցիկ դիրքեր էին զբաղեցնում ազգային կյանքի ամենատարբեր ոլորտներում: Այդ ամենից բացի՝ հայ հասարակական-քաղաքական և ազգային կյանքը կարգավորում էին տարբեր մարմիններ ու կազմակերպություններ, որոնց գործունեությունը կարևոր դեր էր խաղում հայ ժողովրդի ներքին կյանքի կազմակերպման գործում: Այնուհետև ձևավորվում են առաջին հայկական կուսակցությունները, որոնք որակական նոր փուլ էին հայկական հասարակական-քաղաքական և ազգային կյանքի կազմակերպման գործում:

Հնչակյանները, գիտակցելով ղեկավար ուժերի և մարմինների դերն ու նշանակությունը ազգի հիմնախնդրի լուծման գործում, մեծ ուշադրություն են դարձրել այդ հարցերի քննարկմանը: Նրանք անդրադարձել են հայ ժողովրդի ընտրանու տարբեր շերտերի (ունևոր դաս, մտավորականություն, հոգևոր դաս) գործունեությանը, գնահատել նրանց խաղացած դերը: Հնչակյանները հանգամանալից անդրադարձել են նաև հայ կուսակցություններին, նրանց գործունեությանը: Այդ քննարկումներում կենտրոնական տեղ է զբաղեցնում հայ կուսակցությունների միասնության և համագործակցության գաղափարը, որի կենսագործման համար նրանք կարևորում էին գաղափարական ընդհանրությունների առկայությունը:

1. Տե՛ս *Արփիարյան Ա.*, Բարեգործական հաստատութեանց քննադատութիւն // «Հայրենիք», 1892, N 265:
2. *Արփիարյան Ա.*, Եռագոյն դրօշակը // «Մարտ», 1897, N 2, էջ 5:

3. *Արփիարյան Ա.*, Առջի ունեւորները հիմակուան ունեւորները // «Հայրենիք», 1893, N 577:
4. Տե՛ս *Սապահ-Գյուլյան Ս.*, Պարտաճանաչութիւն եւ ներոյժ աշխատութիւն // «Երիտասարդ Հայաստան», 1917, N 22:
5. Տե՛ս նույն տեղում:
6. Տե՛ս *Նազարբեկյան Ա.*, Այսօր, վաղը եւ մենք // «Հնչակ», 1897, N 3, էջ 19:
7. *Սապահ-Գյուլյան Ս.*, Սօցիալիզմ եւ Հայկական խնդիր // «Հնչակ», 1907, N 1, էջ 5:
8. *Սապահ-Գյուլյան Ս.*,Պարտաճանաչութիւն եւ ներոյժ աշխատութիւն // «Երիտասարդ Հայաստան», 1917, N 22:
9. Տե՛ս *Արփիարյան* Ա., Առջի ունեւորները հիմակուան ունեւորները // «Հայրենիք», 1893, N 577:
10. Տե՛ս *Արփիարյան Ա.*, Սրդողածները // «Հայրենիք», 1895, N 1210:
11. *Արփիարյան Ա.*, Բարեգործութիւն եւ համեսպութիւն // «Հայրենիք», 1891, N 101:
12. *Արփիարյան Ա.*, Պապուհասը // «Լուսաբեր», 1907, N 405:
13. *Սապահ-Գյուլյան Ս.*, Պարպաճանաչութիւն եւ ներոյժ աշխապութիւն // «Երիպասարդ Հայասպան», 1917, N 22:
14. Տե՛ս *Սապահ-Գյուլյան Ս.*, Պապասխանապուները // «Երիպասարդ Հայասպան», 1903, N 31:
15. *Արփիարյան Ա.*, Անհրաժեշպ պաշպօնեայք // «Հայրենիք», 1892, N 309:
16. Տե՛ս *Սապահ-Գյուլյան Ս.*, Պապրիարքի դիրքը // « Նոր-Աշխարհ», 1912, N 64:
17. Տե՛ս *Ս. Սապահ-Գիւլեան*, // «Պապասխանապուները», Պէյրութ 1974, էջ 18–19:
18. Տե՛ս *Արփիարյան Ա.*, Անհրաժեշպ պաշպօնեայք // «Հայրենիք», 1892, N 309:
19. *Արփիարյան Ա.*, Մարդը՝ դրամագլուխ // «Հայրենիք», 1892, N 225:
20. *Սապահ-Գյուլյան Ս.*, Չէզոքները // «Երիպասարդ Հայասպան», 1903, N 18:
21. *Արփիարյան Ա.*, Ուժին կազմակերպութիւնը // «Մարպ», 1900, N 26, էջ101:
22. Տե՛ս *Նազարբեկյան Ա.*, Ինչ է ծրագիր // «Հնչակ», 1893, N 2, էջ 9:
23. Տե՛ս նույն պեղում, էջ 9–10:
24. Տե՛ս *Սապահ-Գյուլյան Ս.*, Կուսակցական խնդիրներ // «Երիպասարդ Հայասպան», 1905, N 19:
25. *Սապահ-Գյուլյան Ս.*, Հրապապ խնդիրը // «Հնչակ», 1906, N 11, էջ 105:
26. *Սապահ-Գյուլյան Ս.*, Քաղաքական կուսակցութիւններ // «Երիպասարդ Հայասպան», 1903, N 31:
27. Տե՛ս *Սապահ-Գյուլյան Ս.*, Կուսակցական խնդիրներ // «Երիպասարդ Հայասպան», 1905, N 19:
28. Տե՛ս *Սապահ-Գյուլյան Ս.*, Կուսակցական խնդիրներ // «Երիպասարդ Հայասպան», 1905, N 20:
29. Նույն պեղում:
30. *Սապահ-Գյուլյան Ս.*, Կուսակցական պզպիկութիւններ // «Երիպասարդ Հայասպան», 1904, N 32:
31. *Սապահ-Գյուլյան Ս.*, Քաղաքական կուսակցութիւններ // «Երիպասարդ Հայասպան», 1903, N 32:
32. *Արփիարյան Ա.*, Օգուպը // «Հայրենիք», 1893, N 412:
33. Տե՛ս *Սապահ-Գյուլյան Ս.*, Համերաշխութեան գաղափարի շուրջը // «Հնչակ», 1907 N 12, էջ 152:
34. *Սապահ-Գյուլյան Ս.*, Քաղաքական կուսակցութիւններ // «Երիպասարդ Հայասպան», 1903, N 31:
35. *Սապահ-Գյուլյան Ս.*, Հրապապ խնդիրը // «Հնչակ», 1906, N 11, էջ 108:
36. Տե՛ս նույն պեղում, էջ 107:
37. *Սապահ-Գյուլյան Ս.*, Համերաշխութեան գաղափարի շուրջը // «Հնչակ», 1907, N 12, էջ 153:
38. Տե՛ս նույն պեղում:
39. *Սապահ-Գյուլյան Ս.*, Վեհագոյն րոպէն // «Երիպասարդ Հայասպան», 1919, N 72:
40. *Սապահ-Գյուլյան Ս.*, Ժամանակակից խնդիրներ // «Նոր-Աշխարհ», 1912, N 12:
41. Տե՛ս *Նազարբեկյան Ա.*, Միութիւն // «Հնչակ», 1891, N 4, էջ 1:
42. *Նազարբեկյան Ա.*, Բաց նամակներ // «Հնչակ», 1891, N 13, էջ 2:
43. *Արփիարյան Ա.*, Յեղափոխութեան բնաշրջումը // «Մարպ», 1899, N 19, էջ 73–75:
44. *Արփիարյան Ա.*, Դէպի միութիւն // «Մարպ», 1899, N 18, էջ 69:

ПРОБЛЕМА РОЛИ НАЦИОНАЛЬНОЙ ЭЛИТЫ И ПОЛИТИЧЕСКИХ ИНСТИТУТОВ В ПОЛИТИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ ГНЧАКИСТОВ

А.С. Мкртчян

Резюме

Статья посвящена осмыслению роли национальной элиты и политических институтов в политической концепции гнчакистов. Рассмотренные в статье вопросы относятся к истории армянской политической мысли конца XIX и начала XX веков. Это – важный период, учитывая то обстоятельство, что данный период выделяется развитием национального самосознания и подъемом национально-освободительного движения. А эти движения трудно представить без осмысления роли элиты и политических институтов.

Осознавая роль и значение правящих сил и органов в деле решения основополагающей национальной проблемы (освобождение армянского народа от гнета захватчиков и восстановление армянской государственности), гнчакисты также уделяли большое значение обсуждению этих вопросов. Они исследовали деятельность различных слоев (политических, экономических, духовных) армянского народа, дали оценку их роли. Так, например, обратившись к состоятельному классу армян, гнчакисты пишут, что богатые армяне не содействовали в нужной мере освободительному движению армянского народа. Кроме критики имущего класса, также отрицательно гнчакисты оценивали деятельность интеллигенции и духовенства. Эти оценки, на наш взгляд, достаточно крайние и не учитывают ряда объективных фактов.

Гнчакисты обращались также к изучению армянских партий, их деятельности. В этом контексте они уделяли важное значение ряду проблем, в том числе партийным – служить исключительно интересам нации, иметь в своих рядах честных, отважных и идейных политических деятелей и т.д. Помимо этого, они придавали большое значение идее объединения и содружества армянских партий на базе идеологических общностей.

EVALUATION OF THE ROLE OF NATIONAL ELITE AND POLITICAL INSTITUTIONS IN THE POLITICAL CONCEPT OF THE HNCHAKS

A.

Mkrtchyan

Summary

This article draws out the significance of the role of national elite and political institutions in framing the political concept of Hnchak party. The issues brought out in the article are connected with the history of Armenian political thought in late19thand early 20th centuries.

Acknowledging the role and importance of ruling powers and bodies in making decisions on the national cause (liberation of the Armenian People from the bondage of invaders and regaining of the Armenian statehood), the Hnchaks also attached utmost importance to discussing these issues in public. They studied the activities of various strata of the society (political, economic and religious circles) of the Armenian people and made assessments of their role. In our opinion these assessments were sometimes quite negative and biased and did not consider several facts.

The Hnchaks also analyzed the activities of other Armenian political parties and attached high importance of the idea of unification and collaboration of Armenian political parties on their ideological commonalities.

ԿՈՂՈՊՈՒՏԻ ՈՐԱԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՉՀԱՄԸՆԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հ.Հ. Մարգարյան

Կողոպուտը՝ որպես սեփականության դեմ ուղղված հանցագործություն, ունի ընդհանրություններ ինչպես գողության, այնպես էլ ավազակության հետ: Ավանդաբար, սկսած XIX դարի վերջերից, կողոպուտի հիմնական բնութագրիչ հատկանիշները դարձան դրա բացահայտությունը, ինչպես նաև տուժողի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը:

Նկատենք, որ ոչ բոլոր մասնագետներն են եղել համաձայն կողոպուտը համարել բացահայտ հափշտակություն, որը որոշ դեպքերում կարող է զուգորդվել նաև բռնությամբ: Այսպես՝ Ի.Յա. Ֆոյնիցկին գտնում էր, որ կողոպուտը, որը կատարվում է բռնությամբ, համարվում է, ըստ էության, ավազակություն, իսկ առանց դրա համարվում է գողություն: Նա գտնում էր, որ կողոպուտը՝ որպես հանցակազմ, ձևավորվել է պատմականորեն, սակայն ներկայումս կորցրել է իր նշանակությունը: Հեղինակի կարծիքով՝ հափշտակությունները պետք է դասակարգել երկու հիմնական խմբի՝ հիմք ընդունելով բռնություն կիրառելու կամ չկիրառելու հանգամանքը, **այլ ոչ թե հափշտակության կատարման իրադրությունը** (ընդգծումը մերն է)[1]:

Ի. Յա. Ֆոյնիցկին, փաստորեն, քրեաիրավական նշանակություն չէր տալիս հափշտակության գաղտնիության կամ բացահայտության հատկանիշներին:

Տարբեր երկրների քրեական օրենսգրքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քննարկվող հարցի վերաբերյալ առկա են երկու հիմնական մոտեցում:

Հետսովետական երկրների քրեական օրենսգրքերում կողոպուտը սովորաբար ներկայացվում է այնպես, ինչպես այն սահմանված էր Խորհրդային քրեական օրենսգրքերում: Մինչդեռ կան երկրներ, որոնք բռնել են սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման արևմտյան ուղին՝ մերժելով ԱՊՀ երկրների մոտեցումը, որն էլ անխուսափելիորեն իր հետքն է թողել նաև քրեական օրենսգրքերի բովանդակության, այդ թվում կողոպուտի համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենսդրական նորմերի վրա: Խոսքը հատկապես վերաբերում է մերձբալթյան երկրներին: Օրինակ, Էստոնիայի քրեական օրենսգրքում ամրագրված կողոպուտի հասկացությունը էականորեն տարբերվում է ավանդական կողոպուտի բնորոշումից: Էստոնիայի քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածում կողոպուտը բնորոշվում է որպես ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն, որը կատարվել է առանց անձի նկատմամբ բռնություն գործադրելու[2]: Լատվիայի քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի բացահայտ հափշտակությունը համարվում է գողություն[3], իսկ կողոպուտը՝ որպես ինքնուրույն հանցակազմ, օրենքում սահմանված չէ:

Անդրադառնալով եվրոպական երկրների քրեական օրենսգրքերին՝ պետք է նշել, որ նրանցում կողոպուտի վերաբերյալ սահմանված դրույթները մեր պատկերացումների հետ չեն համընկնում: Դրանով է պայմանավորված, որ ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված կողոպուտի հասկացությունը՝ որպես կողոպուտ առանց բռնության, նրանցում ներկայացված է որպես գողություն, իսկ կողոպուտը, որը կատարվում է բռնությամբ՝ ներ-

կայացվում է որպես ավազակություն: Ավելին, եվրոպական երկրների քրեական օրենսգրքերում հստակ սահմանված է, որ գողության և կողոպուտի առարկա կարող է լինել միայն շարժական գույքը, նրանցում սահմանված է, որ առանձին դեպքերում քրեական գործ կարող է հարուցվել միայն տուժողի բողոքի հիման վրա: Խոսքը հատկապես վերաբերում է բարեկամների կողմից կատարված գողություններին և կողոպուտներին:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է կողոպուտի հանցակազմը պահպանել, քանի որ այն ավանդական հանցակազմերից է, ավելին, այն իր հանրային վտանգավորությամբ տարբերվում է գողությունից, քանի որ այն առավել հանդգնությամբ է աչքի ընկնում: Սակայն, պետք է համաձայնվել այն մոտեցման հետ, որ կողոպուտը չպետք է զուգորդվի բռնությամբ կամ դրա սպառնալիքով, թեկուզև կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր եղանակով կատարված: Մենք համակարծիք ենք այն մոտեցման հետ, որ բռնությամբ զուգորդված ցանկացած հափշտակություն պետք է դիտարկել որպես ավազակություն:

Բանն այն է, որ բռնությամբ գործադրվող կողոպուտը և ավազակությունն իրարից սահմանազատելը որոշակի բարդություններ է առաջացնում դատական պրակտիկայում, թեև օրենքի իմաստով դրանք հստակ սահմանազատվում են:

Այս հանցագործությունների հիմնական տարբերությունն օբյեկտիվ կողմի մեջ է: Մասնավորապես, դրանք, նախ և առաջ, սահմանազատվում են ըստ գործադրվող բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի բնույթով: Այսպես, կողոպուտի հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ արարքը, զուգորդվում է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Մինչդեռ, ավազակությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն, զուգորդվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Այս առումով, անհրաժեշտ է, նախևառաջ, պարզաբանել բռնության կամ դրա սպառնալիքի՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր և ոչ վտանգավոր տեսակների էությունը:

Բռնության և դրա սպառնալիքի հասկացությունները և դրանց դասակարգումը վտանգավոր և ոչ վտանգավոր տեսակների առաջին անգամ սահմանվել են ՌԽՖՍՀ գերագույն դատարանի պլենումի 1966թ. մարտի 22-ի՝ «Գողության, կողոպուտի և ավազակության վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 3 որոշման մեջ, ինչն իր հետագա դրսևորումն է գտել նաև միութենական մյուս հանրապետությունների իրավակիրառ պրակտիկայում: Ըստ այդմ, բռնությունը պետք է համարել կյանքի համար վտանգավոր, երբ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հանցավորը՝ 1. տուժողին զրկում է կյանքից, 2. տուժողի նկատմամբ կատարվում է այնպիսի գործողություններ, որոնք վտանգում են նրա կյանքը (օրինակ, մարդուն խեղդելը, գլուխը երկար ժամանակով կամ հաճախակի ջրի մեջ մտցնելը, շնչառությունը տարբեր ձևերով փակելը, էլեկտրական հոսանքով մարմնին դիպչելը, աստիճանաբար թույն ներարկելը և այլն) և շարունակվում են այնքան ժամանակ, քանի դեռ չի կատարվում հանցավորի պահանջը՝ հանձնել գույքը կամ ասել դրա տեղը:

Նույն որոշման համաձայն՝ առողջության համար վտանգավոր բռնություն է համարվում տուժողին ծանր, միջին ծանրության կամ թեթև մարմնական վնասվածքներ հասցնելը (ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ տուժողի առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը):

Հարկ ենք համարում նշել նաև, որ արարքը որպես ավազակություն որակելու համար պարտադիր չէ տուժողին փաստացի վնաս պատճառելը. բավական է միայն, որ բռնությունը գործադրելու պահին այն վտանգավոր լինի կյանքի կամ առողջության համար: Օրինակ՝ գույքը հափշտակելու նպատակով տուժողի գլխին ծանր առարկայով հար-

վածելը, ընթացքի ժամանակ գնացքից կամ ավտոմեքենայից դուրս գցելը, դանակով կենսական կարևոր նշանակություն ունեցող օրգանների հատվածում հարվածելը և այլն, անկախ նրանցից՝ այդ գործողությունները իրական վնաս պատճառել են, թե ոչ, համարվում են կյանքի կամ առողջության համար վտանգավոր[4]:

Ինչ վերաբերում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքին, ապա, քննարկվող որոշմանը համապատասխան, այն նույնպես կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Ավելի հաճախ հանդիպում է խոսքով, զենք կամ որպես զենք օգտագործվող առարկա ցուցադրելով իրականացվող սպառնալիքը: Հնարավոր է սպառնալիքը ցուցադրել նաև ժեստերով, օրինակ՝ մատը կոկորդին քսելով (սպանելու սպառնալիք) և այլն:

Նույն որոշման համաձայն՝ բռնությունը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր կհամարվի այն դեպքերում, երբ դրա գործադրմամբ տուժողի կյանքը վտանգի չի ենթարկվի, կամ նրա առողջությանը չի հասցվի ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս: Փաստորեն, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը կարող է դրսևորվել ծեծի, ձեռքերը կամ ոտքերը կապկպելու կամ ոլորելու, անձին որևէ տեղում փակելու և նման այլ ձևերով: Ինչ վերաբերում է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքին, ապա այն պետք է դրսևորվի վերը նշված բռնության տեսակներից որևէ մեկի գործադրմամբ:

Այսպիսով, կողոպուտի և ավազակության գլխավոր տարբերությունը պայմանավորված է գործադրվող բռնության կամ դրա սպառնալիքի ինտենսիվության աստիճանով և ծավալով: Սակայն, թեև սահմանազատման տվյալ չափանիշը օրենսդրորեն հստակ սահմանված է, այնուամենայնիվ, իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են սխալ որակման դեպքեր՝ կապված բռնության (ֆիզիկական կամ հոգեկան) բնույթը գնահատելու հետ: Ընդհանրապես, ավազակության և կողոպուտի սահմանազատման առումով իրավակիրառ պրակտիկայում առավել հաճախ բարդություններ են առաջանում հենց այն դեպքերում, երբ արարքը կատարվում է բռնություն գործադրելու սպառնալիքով: Բանն այն է, որ խոսքով արտահայտված սպառնալիքը հաճախ անորոշ բնույթ է կրում, օրինակ, երբ դրսևորվում է «վատ կլինի», «կփոշմանես», «չփորձես դիմադրել» և նման այլ արտահայտություններով: Բայց նույնիսկ այն դեպքերում, երբ սպառնալիքն արտահայտվում է շատ կոնկրետ (օրինակ՝ «կսպանեմ», «կմորթեմ» և այլն), չի կարելի միանշանակ պնդել, որ տուժողն այն ընկալում է որպես իր կյանքի կամ առողջության համար իրական սպառնալիք: Այդ իսկ պատճառով նման դեպքերում արարքը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է բացահայտել, որ տուժողը գործադրված սպառնալիքն ընկալել է որպես իր կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգ, իսկ հանցավորն էլ գիտակցել է այդ հանգամանքը: Ընդ որում՝ նման դեպքերում, մեր կարծիքով, արարքը պետք է որակվի որպես ավազակություն անգամ այն պարագայում, երբ տուժողը չի ընկալել գործադրված սպառնալիքը որպես իր կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգ, սակայն հանցավորը համոզված է եղել հակառակում: Այսինքն՝ նման բոլոր դեպքերում արարքը որակելու գլխավոր նախապայմաններից մեկը հանցավորի դիտավորության ուղղվածությունն է, այլ ոչ թե տուժողի ընկալումը:

Ինչևէ, անհրաժեշտ է նկատել, որ թեև կողոպուտն ու ավազակությունը տարբերվում են գործող օրենքով ամրագրված հատկանիշներով և հանցակազմերով, սակայն, այդուհանդերձ, հավատարիմ մնալով մեր այն սկզբունքին, որ կողոպուտը բացահայտ հափշտակությունների համար համարվում է ընդհանուր հանցակազմ, այն պահեստային դեր է կատարում, իսկ ավազակությունը միշտ ենթադրում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը, պետք է համա-

ձայնվել այն մոտեցման հետ, որ վտանգավոր կողոպուտը դա, ըստ էության, ավազակություն է, ուստի անհրաժեշտ է բացառել բռնի կողոպուտը և այն ներկայացնել որպես ավազակություն:

Օ.Ա. Բուրկինայի կարծիքով՝ բռնությունը որպես գույքին տիրանալու եղանակ, հանդիսանում է ավազակության բնութագրիչ հատկանիշ: Ուստի հեղինակն առաջարկում է կողոպուտից բացառել բռնության կիրառման որակյալ հատկանիշը և կողոպուտը բնորոշել որպես ոչ բռնությամբ կատարված բացահայտ հափշտակություն, իսկ ավազակությունը՝ որպես ուրիշի գույքի հափշտակություն՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրմամբ կամ նման բռնություն կիրառելու սպառնալիքով[5]:

Վ.Ի. Պլոխովան նշում է, որ որպեսզի սեփականության դեմ ուղղված հասարակ, ոչ բռնի հանցակազմերի բովանդակությունը համապատասխանի գույքային ոտնձգությունների քրեականացման հիմնական, անմիջական, կրիմինոլոգիական և իրավական դետերմինանտներին, անհրաժեշտ է կողոպուտը բնորոշել որպես գույքի վերցնելը կամ սեփականատիրոջը գույքը տալուն դրդելուն զուգորդված ներգործություն կիրառելը, որը կապված չէ քրեաիրավական բռնության կամ խաբեության հետ[6]:

Նկատենք, որ տեսության մեջ կա մեկ այլ մոտեցում ևս, ըստ որի՝ անհրաժեշտ է բռնի կողոպուտը սահմանել որպես ինքնուրույն հանցակազմ, որը կունենա իր ծանրացնող հանգամանքները, ինչպիսիք են՝ բռնի կողոպուտ՝ բնակարան մուտք գործելով, խմբի կողմից և այլն, այսինքն՝ այն բոլոր հատկանիշները, որոնք բոլոր հափշտակությունների ձևերի համար ներկայացվում են որպես ծանրացնող հանգամանք: Հեղինակի մոտեցումն այն է, որ բռնի կողոպուտի հանցակազմը գործող օրենքում չի ապահովում պատասխանատվության տարբերակումը հափշտակությունների շատ ձևերի համար ընդհանուր այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են խմբի կողմից կատարելը, բնակարան մուտք գործելով կատարելը, խոշոր չափով կատարելը և այլն: Հեղինակի մոտեցմամբ այդ չափանիշը չի համապատասխանում հափշտակությունների որակյալ տեսակների համակարգայնությանը: Ուստի, բռնի կողոպուտի առանձնացումը որպես ինքնուրույն հանցակազմ, կնպաստի պատասխանատվության առավել խորը տարբերակման և միաժամանակ հափշտակությունների որակյալ հատկանիշների առավել ունիֆիկացիային[7]:

Պետք է համաձայնել հեղինակի հետ այն հարցում, որ բռնությունը, որպես կողոպուտի որակյալ հատկանիշ դիտարկելն արդարացված չէ, քանի որ հափշտակություններից միայն կողոպուտի դեպքում է, որ օրենքում առանձնացվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ որպես ծանրացնող հանգամանք, այն դեպքում, երբ կա բռնությամբ զուգորդված գույքը հափշտակելու ինքնուրույն հանցակազմ՝ ինչի մասին նշեցինք վերևում: Սակայն չենք կարող համաձայնել հեղինակի հետ այն հարցում, որ անհրաժեշտ է բռնի կողոպուտի ինքնուրույն հանցակազմ իր որակյալ հատկանիշների համակարգով, քանի որ բռնի կողոպուտը դա, ըստ էության, ավազակությունն է: Ինչպես նշեցինք՝ ավազակության հանցակազմի ինքնուրույնությունը հենց գույքի բռնի հափշտակելու հանգամանքի մեջ է, ուստի բռնի կողոպուտը պետք է դիտարկել ավազակության ենթատեքստում:

Այսպիսով, կողոպուտը միշտ կատարվում է բացահայտ և ակտիվ գործողությունների միջոցով, ընդ որում՝ տուժողի նկատմամբ առանց բռնության կիրառման, ուստի առաջարկում ենք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասից հանել **«զուգորդվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»** որակյալ հատկանիշը: Միաժամանակ առաջարկում ենք՝ հիշյալ հատկանիշը ներկայացնել որպես ավազակության հիմնական հանցակազմի հատկանիշ, այսինքն՝ ավազակությունը բնորոշել որպես «ուրիշի գույքը հափշտակելու նպա-

տակով հարձակում, որը կատարվել է **կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով**», իսկ **«կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»** հատկանիշը սահմանել որպես ավազակության որակյալ հատկանիշ:

1. *Фойницкий И.Я.* Курс уголовного права. Часть особенная. Посягательства личные и имущественные. СПб., 1907. С. 228.
2. Уголовный кодекс Эстонской Республики: http:// ru.wikipedia.org/wiki.
3. Уголовный кодекс Латвийской Республики: Принят 8 июля 1998 года; Введен в действие с 1 апреля 1999 года. http://law.edu.ru/norm/norm.asp?normID
4. Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր., 2006, էջ 380:
5. *Буркина О.А.* Уголовная ответсвенность за посягательства на собственность с применением насилия: автореф. канд. дисс. Омск, 2008.
6. *Плохова В.И.* Криминологическая и правовая обоснованность составов ненасильственных преступлений против собственности: докторская дисс. Екатеринбург, 2003. С. 13–14.
7. *Кудашев Ш.А.* Проблемы дифференциации уголовной ответственности за хищения чужого имущества: в законе и судебной практике: Автореф. канд. дисс. М., 2007.

ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ ГРАБЕЖА ПРИ НЕСОВПАДЕНИИ ОБЪЕКТИВНЫХ И СУБЪЕКТИВНЫХ СВОЙСТВ

Г.Г. Маргарян

Резюме

Статья посвящена изучению грабежа как отдельного вида преступления, направленного против собственности, теоретическим и практическим проблемам разграничения грабежа от других преступлений, направленных против собственности. В качестве основания для разграничения служат объективные и субъективные свойства преступлений, направленных против собственности.

Особое внимание уделяется также проблемам, возникающим при практическом применении данной статьи, освещаются исторически сложившиеся подходы, существующий теоретический и практический опыт зарубежных стран, целесобразность применения зарубежного опыта в Республике Армения. В заключительной части статьи представляется и обосновывается необходимость осуществления законодательных изменений в данной сфере.

QUALIFICATION ISSUES OF ROBBERY WHEN OBJECTIVE AND SUBJECTIVE DEATURES DON'T MISMATCH

H. Margaryan

Summary

This scientific article is about a study of a robbery as a separate part of crime and some of theoretical and practical problems of its demarcation from other crimes against of property.

In the article as a criterion of demarcation are objective and subjective features. In the article there is also referred to the main problems of this item, met in practical application, presented formed historical approaches and also foreign theoretical and practical experience about that problem.

There is also referred to an experience of applying foreign experience in Republic of Armenia. At the final part of the article is presented and justified the necessity of legislative changes in this area.

ПОСТКРИЗИСНАЯ КОРРЕКЦИЯ ЭЛЕМЕНТОВ РОБАСТНОГО ПОДХОДА В БАНКОВСКОЙ СФЕРЕ АРМЕНИИ

А.Л. Месробян, М.В. Таирян

Работа посвящена выявлению элементов робастного управления, применительно к банковской системе РА, и разработке предложений, направленных на совершенствование данного подхода.

Актуальность темы обусловлена необходимостью усовершенствования методов регулирования банковской системы в посткризисный период, применительно к Армении.

Понятие «робастность» ввел в научный оборот в 1953 году признанный мировой лидер по применению теории качественной методологии в управлении П. Бокс[1]. Слово «робастность» имеет много значений, однако, чаще всего, мы используем его в узком смысле – невосприимчивость системы к конечным отклонениям от установленных величин. Впоследствии результаты исследований со стороны зарубежных ученых привели к становлению новой теории в управлении – теории робастного управления.

Робастное управление – это жестко определенное и нормативно защищенное управление системой в условиях неопределенности и рисков с целью приведения ее в положение устойчивости при сбоях, ошибках и негативных внешних воздействиях.

Банковское дело сопряжено с множеством рисков, обусловленных как особенностями работы с крупными денежными средствами, так и спецификой основных видов услуг, предоставляемых клиентам. От того, насколько эффективно банк управляет этими рисками, зависит доверие к нему со стороны клиентов и успех его деятельности в целом. Вот почему на протяжении всего жизненного цикла кредитной организации требуется систематически идентифицировать всевозможные риски, проводить их качественный и количественный анализ, а также мониторинг, по результатам которых следует оценивать влияние реальных и потенциальных рисков и вырабатывать планы по их снижению.

Банковская система РА характеризуется относительной стабильностью и устойчивостью, низким уровнем коррупции и объемов нелегальных операций, а также высокой степенью наблюдаемости. Уровень регулирования банковского сектора намного опережает общеэкономический, в связи с чем рынок банковских услуг Армении наиболее привлекателен для иностранных инвесторов. Однако, по сравнению с западными банками, отличающимися масштабами деятельности и разнообразием услуг, армянские банки подвергаются дополнительным рискам, обусловленными страновой спецификой. В частности, они функционируют в условиях нестабильности, сопряженной с неадекватным валютным и инфляционным давлением. Все это усложняет процесс управления банковской деятельностью и обусловливает необходимость применения робастного подхода с целью

достижения устойчивости к дестабилизирующим внешним и внутренним воздействиям, что обеспечит банковской системе РА большую защищенность в условиях рисков и неопределенности.

В отличие от других сфер экономики, в банковской системе РА уже применяются элементы робастного подхода. Однако на данный момент это носит больше локальный, чем системный характер. Но, несмотря на это, во многом благодаря применению робастного подхода банковская система РА наиболее защищена от неблагоприятного воздействия различных факторов, что лишний раз доказывает ее относительное «спокойствие» ввиду избыточной ликвидности в условиях кризиса[2].

Ярким примером применения робастного подхода является установление ЦБ РА пороговых значений экономических нормативов, регулирующих деятельность коммерческих банков (Положение № 2 ЦБ РА «О регулировании банковской деятельности, основные экономические нормативы банковской деятельности»). Сам факт установления основных экономических нормативов банковской деятельности по отношению к коммерческим банкам можно считать элементами робастного управления, т.к. это позволяет коммерческим банкам не только управлять рисками, но и подавлять неопределенность. В самом деле, кризис и его воздействие, безусловно, содержат неопределенность, – ведь никто не ожидал как наступления самого кризиса, так и «сценария его разрушений».

Нормативы рассматриваются как элементы робастного управления, т.к. все они имеют пороговые значения, которые определяют степень жесткости (робастности) регулирования, т.е. удаленности от опасной черты. Путем ужесточения пороговых значений, либо введения дополнительных ограничений можно добиться большей защищенности банковской системы не только от рисков, но и от неопределенности.

Учитывая характерные черты последнего кризиса, когда началась «рушиться» ипотечная составляющая кредитного портфеля банков, для большей защищенности банковской системы РА предлагается ввести в Положение № 2 ЦБ РА норматив, регулирующий кредитный риск на отрасль, т.е. максимальный размер риска на одну отрасль. Данный норматив не позволит банкам концентрировать свой портфель в одной отрасли, что, как минимум, позволит «мягче» пройти хотя бы первую фазу кризисов.

В этой связи приведем несколько фактов.

2009 год стал для Армении годом обвального падения экономики. Республика побила рекорды СНГ по темпам спада ВВП, промышленного производства, экспорта – основных макроэкономических показателей. Министр финансов РА самокритично заявил, что экономика Армении похожа на попавший в зону турбулентности самолет, у которого отказал один из двигателей – сфера строительства[3].

Объем строительства сократился на 33% в 2009 году по сравнению с 2008 годом. Следует также отметить, что доля строительства в структуре ВВП Армении по состоянию на 2008 год составила 26.9%[4], что свидетельствует о высокой концентрации экономики на момент наступления кризиса.

В 2009 году резко сократились цены и спрос на недвижимость. Так, по данным Государственного комитета кадастра недвижимости, в 2009 году по сравнению с 1-ым полугодием 2008 года почти на 50% сократилось число покупок

квартир в Ереване и на 20% – в областях. Резкий спад спроса на недвижимость не мог не повлиять на платежеспособность и деловую активность строительных компаний.

Экономический кризис оказал негативное влияние также на горнодобывающую промышленность страны. Общий объем промышленной продукции по итогам 2009 года сократился на 7% по сравнению с 2007 годом, в то время как объем производства горнодобывающей промышленности за аналогичный период сократился почти на 20%[5]. Резкое падение мировых цен на медь и молибден (почти в 2 раза) стало причиной простоя на Агаракском медно-молибденовом комбинате почти на год.

Поэтому целесообразно установить максимальный размер риска на одну отрасль, который может колебаться от 50% до 100% от общего капитала банка, в зависимости от отрасли (для строительной отрасли данный норматив может быть установлен в размере не более 50% от общего капитала банка).

Рассмотрим кредитные вложения коммерческих банков Армении в строительство, а также размер их общего капитала на конец 2008 года и 2009 года.[6]

Таблица: Соотношение кредитных вложений в строительство к общему капиталу банков

No	Наименование банков	Общий капитал на 31.12.2008г. (тыс. др. РА)	Кредитные вложения в строительство на 31.12.2008г. (тыс. др. РА)	кредитных вложений в строительство к общему капиталу на	Общий капитал на 31.12.2009г. (тыс. др. РА)	Кредитные вложения в строительство на 31.12.2009г. (тыс. др. РА)	кредитных вложений в строительство к общему
1	АКБА-Кредит Агриколь Банк	26 065 897,00	579 582,00	2,22%	35 418 424,00	1 038 769,00	2,93%
2	Америабанк	20 362 748,00	2 660 617,00	13,07%	21 724 192,00	4 872 422,00	22,43%
3	Каскад Банк	5 615 644,00	73 741,00	1,31%	7 607 665,00	99 104,00	1,30%
4	Банк ВТБ (Армения)	23 850 505,00	7 900 697,00	33,13%	25 287 036,00	7 746 480,00	30,63%
5	Ардшининвестбанк	25 902 561,00	6 056 043,00	23,38%	27 335 087,00	4 061 379,00	14,86%
6	HSBC Банк Армения	15 509 389,00	1 440 411,00	9,29%	17 143 461,00	1 563 324,00	9,12%
7	Армбизнесбанк	6 936 224,00	4 242 062,00	61,16%	16 404 897,00	12 403 806,00	75,61%
8	Банк Анелик	5 616 247,00	50 014,00	0,89%	15 267 840,00	1 191 443,00	7,80%
9	Конверсбанк	13 134 158,00	4 501 974,00	34,28%	12 138 480,00	4 529 431,00	37,31%
10	Юнибанк	9 460 679,00	2 272 693,00	24,02%	11 611 891,00	1 755 243,00	15,12%
11	Арэксимбанк-Группа Газпромбанка	9 926 710,00	2 307 626,00	23,25%	14 015 791,00	4 817 300,00	34,37%
12	Инекобанк	8 380 718,00	783 617,00	9,35%	10 169 280,00	1 631 881,00	16,05%
13	Банк Прометей	9 002 903,00	1 663 424,00	18,48%	9 681 546,00	2 821 106,00	29,14%
14	Араратбанк	7 549 098,00	513 204,00	6,80%	7 848 305,00	623 979,00	7,95%
15	Арцахбанк	5 698 804,00	2 716 717,00	47,67%	7 580 407,00	4 289 492,00	56,59%

16	Армэкономбанк	8 726 859,00	635 971,00	7,29%	8 629 502,00	688 590,00	7,98%
17	Армсвисбанк	5 516 828,00	113 735,00	2,06%	8 062 306,00	127 904,00	1,59%
18	Библос Банк Армения	8 302 169,00	17 000,00	0,20%	8 383 313,00	13 475,00	0,16%
19	Банк Меллат	6 074 823,00	247 360,00	4,07%	5 700 326,00	392 050,00	6,88%
20	Армянский Банк Развития	5 791 273,00	832 548,00	14,38%	6 248 635,00	136 733,00	2,19%
21	ПроКредит Банк	5 488 444,00	33 867,00	0,62%	5 452 769,00	0,00	0,00%
22	БТА Банк	5 479 879,00	5 567,00	0,10%	5 096 350,00	0,00	0,00%

Из Таблицы видно, что в зоне наибольшего риска и чувствительности к изменениям коньюктуры на строительном рынке находятся Армбизнесбанк (75,61%) и Арцахбанк (56,59%). При этом, в течение 2009 года кредитные вложения отмеченных банков в строительство увеличились в большей степени, чем их общий капитал.

Резюмируя вышеизложенное, следует подчеркнуть, что конечными целями применения робастного подхода в банковской системе РА является достижение стабильности, предсказуемости и устойчивости ее деятельности доступными экономическими, правовыми методами и подходами в условиях неопределенности и рисков, обеспечение защиты финансовой системы страны в целом и содействие эффективному функционированию и развитию всей экономики Армении

[1] *P.J.Huber*. «Robust Statistics». – USA: «A Willy-Interscience publication», 1980г. P. 1–5.
[2] *А.Л.Месробян, К.В.Арутюнова*. «Элементы робастного управления в банковской сфере Армении», Деньги и кредит /Журнал Банка России, No 2/, М., 2009г.
[3] http://www.regnum.ru/news
[4] http://www.armstat.am
[5] http://www.armstat.am
[6] ИА «АРКА», Показатели деятельности банков Армении. 2009–2010гг.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ МЕТОДИКИ ПРЕПОДАВАНИЯ «ФИЛОСОФИИ УПРАВЛЕНИЯ»

В.А. Мирзоян

«Философия управления» в последнее десятилетие весьма гармонично вписывается в круг учебных предметов, необходимых для подготовки целого ряда высококвалифицированных специалистов. Она уже внедрена в магистерские программы многих вузов постсоветского пространства. В методическом плане важнее всего всестороннее выявление и обоснованная подача специфики философского анализа основных принципов управления и функций менеджера, реальных проблем управления, причем как стратегического, так и тактического характера. Управление – совокупность определенных воздействий субъекта управления на управляемый объект. Менеджмент – наука об управлении, является теоретико-содержательным отражением практического регулирования взаимоотношений субъекта и объекта. Философия же управления претендует на обобщенный, понятийно-смысловой анализ теоретико-методологических проблем менеджмента, на выяснение методологических начал концепций менеджмента и эволюции основных парадигм, а также на выработку поведенческо-этического кодекса эффективного функционирования организации. Крайне важно также разъяснение студентам того, как и почему недооценка роли философии заводит частнонаучные теоретические искания в методологический тупик, в практическом же плане это оборачивается технократическим принижением роли человеческого фактора и опасностью чрезмерной бюрократизации управления, затрудняет понимание важности этнокультурной детерминации многих управленческих проблем, и, в итоге, приводит к снижению экономической и социальной эффективности деятельности организации в целом.

КЛЮЧЕВЫЕ СЛОВА: философия управления, методика преподавания, философский смысл управленческих функций, философский анализ принципов управления, управление как этнокультурный феномен.

«Философия управления» в последнее десятилетие постепенно, хотя и не без труда, завоевывает себе «место под солнцем» среди вузовских дисциплин. Сказывается множество факторов, и, прежде всего, наблюдаемое ныне возрождение интереса к философии в целом. Человечество вступило в XXI век вовсе не плавно, а в условиях нескончаемых кризисов, нарастающего напряжения между

богатыми и бедными странами, пессимистических настроений неопределенности и безысходности среди огромных масс людей, буквального страха перед будущим, всеобщего беспокойства за саму возможность выживания цивилизации вообще. Трагический контраст между безграничностью познавательной мощи человека и неразумностью при использовании новых технологических возможностей не только создал реальную угрозу роботизации человека в созданной им же искусственной среде, но и в буквальном смысле уже подвел Земную цивилизацию к грани самоуничтожения. Перед мыслящими людьми с новой силой встают вечные проблемы философии: смысл жизни и смерти, основополагающие ценности человека и общества, возможность разумной организации социального бытия, границы свободы и необходимости, соотношения цели и средства, власти и подчинения, экономической эффективности и моральной обоснованности человеческих поступков и т.д.

